Կ.Ս. ԿՈՉՄՈՅԱՆ

ՀՐԱՉԴԱՆ

ՍԿԱՅԵՍՍ.

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

К. С. КОЗМОЯН

РАЗДАН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

308/479.25)
ДУБЛЕТ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կ. Ս. ԿՈՋՄՈՅԱՆ

ՀՐԱԶԴԱՆ

A II/2457

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐՍԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1986

ԳՄԴ 65.9 (2Հ)
Կ—636

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝
պատմական գիտությունների դոկտոր
Գ. Մ. Գեղամյան և Մ. Կ. Հարությունյան

Գիրքը հրատարակության են նախապատրաստել գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Ա. Մ. Հակոբյանը և պատմական գիտությունների թեկնածու Հ. Մ. Հարությունյանը

Կոզմոյան Կ. Ս.
Կ 636 Հրազդան /Պատ. խմբ.՝ Գ. Մ. Գեղամյան և Մ. Կ. Հարությունյան, ՀՍՍՀ ԳԱ. Պատմ. ինս-տ—.եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986 140 էջ 3 թ. նկ.:

Աշխատությունը նվիրված է Սովետական Հայաստանի նոր քաղաքներից մեկին՝ Հրազդանին: Լուսաբանվում են քաղաքաշինության, բնակչության աճի և զբաղվածության, մշակույթի, լուսավորության, առողջապահության, աշխատավորների նյութական բարեկեցության հարցերը: Անհրաժեշտ տեղ է հատկացվել նաև հրազդանցիների աշխատանքային առօրյային:

Հասցեագրվում է ընթերցող լայն շրջաններին:

0504000000
Կ————17—84 ԳՄԴ 65.9 (2Հ)
703 (02)—86

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986

Կոզմո Սենեքերիմի Կոզմոյան
(1913—1984)



ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Կոզմո Սենեքերիմի Կոզմոյանը (1913—1984) երկար տարիներ զբաղվել է հայ ժողովրդի պատմության սովետական շրջանի տարբեր պրոբլեմների ուսումնասիրությամբ:

Կ. Կոզմոյանը ծնվել է 1913 թ. Թուրքիայի Սեբաստիա քաղաքում, արհեստավորի ընտանիքում: 1924 թ. Կոզմոյանների ընտանիքը հերգաղթում է Սովետական Հայաստան: 1930 թ. նա ավարտել է Լենինականի Ա. Մռավյանի անվան մանկավարժական տեխնիկումը: Կ. Կոզմոյանը կոմերիտական և մանկավարժական ղեկավար աշխատանքներ է կատարել հանրապետության տարբեր քաղաքներում ու շրջաններում: 1945—1948 թթ. աշխատել է Երևանի կոոպերատիվ տեխնիկումում որպես դիրեկտոր: 1948 թ. մինչև իր կյանքի վերջը աշխատել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես գիտական աշխատող: 1953 թ. Կ. Կոզմոյանը պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա:

Կ. Կոզմոյանը սովետահայ պատմագրության մեջ քաղաքների և խոշոր գործարանների պատմության առաջին ուսումնասիրողներից մեկն էր: Նրա գրչին են պատկանում մոտ 15 մենագրություններ և բազմաթիվ գիտական ու հանրամատչելի հոդվածներ: 1977 թ. լույս ընծայած «Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում» մենագրության մեջ ամփոփվեցին այդ բնագավառում մեր հանրապետության աշխատավորության ձեռք բերած 50-ամյա նվաճումները:

Կ. Կոզմոյանը համեստ, բարեխիղճ աշխատող էր և իր հարուստ փորձը սիրով հաղորդում էր երիտասարդ գիտաշխատողներին:

Սույն աշխատությունը Կ. Կոզմոյանի հերթական ուսումնասիրության արդյունքն է, որն ընդգրկում է մինչև 1980 թվականը: Աշխատությունը տպագրության է պատրաստվել ինստիտուտի կողմից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հրազդան (Ներքին Ախտա) քաղաքը գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին, Երևանից 40—45 կիլոմետրը դեպի հյուսիս, ծովի մակերևույթից 1800 մ. բարձրության վրա։ Քաղաքի տարածքը խիստ կտրտված է, այն ձորակներով մասնատված է բավականին զառիթափ լեռնալանջերի, գետահովիտների, առանձին բլուրների ու ժայռերի։ Իսկ գոյություն ունեցող փոքրիկ հարթությունների զուգորդությունը քաղաքի ընդհանուր համայնապատկերը դարձնում է, ճիշտ է, գեղեցիկ, բայց քաղաքաշինության համար հարուցում լրացուցիչ դժվարություններ։ Հրազդանում ամառը զով է, իսկ ձմեռը խիստ ցուրտ։

Հրազդանը ջրառատ քաղաք է։ Այստեղ է գտնվում հիդրոէլեկտրակայանի կանոնավորիչ լիճը։ Հրազդանի գեղեցիկ բնությունը, մաքուր օդը, հանքային ջրերը, զով անտառները ստեղծում են նպաստավոր պայմաններ աշխատավորության հանգստի կազմակերպման համար։ Ամեն տարի մի քանի հազար հովվեկներ իրենց ամառային հանդիստն անցկացնում են Հրազդանում։

Քաղաքի կենտրոնական հրապարակում բարձրանում են 5 և 9 հարկանի բնակելի և վարչական գեղեցիկ շենքեր, որոնք ամբողջովին փոխում են կենտրոնի տեսքը։ Ճանապարհի ձախ կողմում կառուցվել են քաղաքի ավտոմատ հեռախոսակայանի և ավտոկայանի տուֆակերտ շենքեր։

Նորարաց ճանապարհը Հրազդանն ուղիղ գծով կապում է քաղաքի ամենախոշոր բանվորական թաղամասի՝ Միկրոշրջանի հետ, որտեղ ապրում են ավելի քան 20 հազար բնակիչներ։ Դեպի Միկրոշրջան ձգվող այդ ճանապարհը, ի պատիվ

շրջանային էլեկտրակայանի ստեղծողների, կոչվում է էներգետիկների պողոտա, որի աջ կողմում բարձրանում է էներգետիկների կուլտուրայի հոյակերտ պալատը։

Ասֆալտապատ ճանապարհը ձախից ձգվում է դեպի Ծաղկունյաց գեղատեսիլ ու անտառոտ լեռները, որտեղ ամենահրապուրիչ անկյունը մարզական, մանկական ու առողջարանային Ծաղկաձորն է։ Այս ճանապարհի մի հատվածը ձգվում է դեպի Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայան ու ցեմենտի գործարան, «Հրազդանշին» տրեստ ու պանելային տնաշինական խոշոր կոմբինատ։

* * *

Երբեմնի փոքրիկ հետամնաց գյուղը՝ Ներքին Ախտան սովետական իշխանության տարիներին դարձել է հանրապետության արդյունաբերական կարևոր կենտրոններից մեկը։

Մեքենաշինարարների, էներգետիկների և շինարարների այս քաղաքում ապրում են շուրջ 50 հազար բնակիչներ։ Նրանք 20-ից ավելի ազգությունների ներկայացուցիչներ են, որոնք եկել են մասնակցելու Հրազդանի խոշոր կառույցների շինարարական աշխատանքներին։

Հրազդանը դարձել է լավագույն հանգրվան նաև սիրուքահայության համար։ Շուրջ չորս հազար ներգաղթած հայեր բնակություն են հաստատել Հրազդանում և ակտիվ մասնակցում են քաղաքի շինարարությանը։ Մեքենաշինական, պետական շրջանային էլեկտրակայանի և արդյունաբերական բազմաթիվ այլ ձեռնարկությունների շնորհիվ հիմնովին կերպարանափոխվել է նախկին Ախտան, դառնալով կարևոր էներգետիկ և արդյունաբերական կենտրոն։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1959 թ. ապրիլի 19-ի հրամանագրով Ախտայի շրջանային կենտրոն Ներքին Ախտա գյուղը դասվեց Հայկական ՍՍՀ քաղաքային տիպի ավանների շարքը, իսկ 1959 թ. հունիսի 30-ի հրամանագրով Ախտա քաղաքատիպ ավանը վերանվանվեց

Հրազդան քաղաքի և դասվեց շրջանային ենթակայության քաղաքների շարքը։ 1962 թվականից՝ հանրապետական ենթակայության քաղաք է։ 1963 թվականի հունվարի 12-ի հրամանով վերացվեցին Աթաբեկյանի և Ջրառատի գյուղական սովետները։ Այդ գյուղերը մտան Հրազդան քաղաքի շրջագծի մեջ։

Քաղաքում գործարաններից ու ֆաբրիկաներից բացի, կառուցվել են մի քանի հարյուր հազար քառակուսի մետր բնակելի շենքեր, բազմաթիվ մանկապարտեզներ, դպրոցներ, պիոներների և դպրոցականների պալատը, ակումբներ, կուլտուրայի պալատներ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, արդյունաբերական ու պարենային ապրանքների խանութներ, երկաթուղային գծեր, մի քանի տասնյակ կիլոմետր երկարությամբ բարեկարգ խճուղիներ, կուլտուր-կենցաղային բազմաթիվ օբյեկտներ։ Ստեղծվել են զբոսայգիներ, կանաչ գոտիներ և ջրային մակերեսներ։

Անցյալում անշուք գետնափոր խրճիթներ, նեղ, ծուռումուռ փողոցներ ունեցող Ախտան այժմ դարձել է հանրապետական ենթակայության սոցիալիստական բարեկարգ քաղաք իր բարձրահարկ շենքերով, ասֆալտապատ փողոցներով, մշակութային օջախներով։ Այն դարձել է արդյունաբերական կենտրոն, տնտեսության և մշակույթի զարգացման իր մեծ հեռանկարներով։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊԱՅՔԱՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

1917 թվականի հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ հաղթանակեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որը արմատական շրջադարձ էր մարդկային հասարակության պատմության մեջ։

Հոկտեմբերյան հեղափոխությունը ազատություն բերեց Ռուսաստանի ճնշված ժողովուրդներին և դրեց գաղութային ու կախյալ երկրների ճնշված ժողովուրդների ազատագրման սկիզբը։

Մեծ հոկտեմբերի հաղթանակի լուրը լայն արձագանք գտավ նաև Հայաստանում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ալավերդիում, Ղարաքիլիսայում, Ջալալօղլիում և այլ վայրերում, ուր կայացած միտինգներն ու ժողովները ջերմորեն ողջունեցին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը։

1920 թ. նոյեմբերի 29-ին Սովետական Ռուսաստանի XI բանակի զորամասերը օգնության հասան դաշնակցական կառավարության դեմ ապստամբած Հայաստանի աշխատավորությանը, որոնց հետ էր նաև հայկական հատուկ գունդը։

XI բանակի օգնության լուրը կայծակի արագությամբ տարածվեց ողջ Հայաստանում։ Կարմիր բանակի զորամասերը առաջ շարժվելով, ազատագրեցին Ելենովկան (Սևանը) և Ներքին Ախտան (Հրազդանը)։

Դեկտեմբերի 4-ին Հայաստանի հեղափոխական կոմի-

տեն, առաջավոր զորամասերի հետ մտավ Երևան։ Հայաստանի մայրաքաղաքի վրա ծածանվեց կարմիր դրոշը։

Դեկտեմբերի 6-ին Երևան մտան նաև կարմիր բանակի հիմնական զորամասերը։ Նույն օրը Երևանում կայացավ բազմամարդ միտինգ, որի մասնակիցները Վ. Ի. Լենինին ուղարկեցին ողջույնի հեռագիր, ուր գրված էր. «Խիտ ու կուռ շարքերով համախմբվելով կոմունիստական կարմիր դրոշների շուրջը, աշխատավորությունը հանձինս Ձեզ՝ ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխության առաջամարտիկին, հեղափոխության, որի ալիքները խորտակելով ու ոչնչացնելով բոլոր արգելքները, հասան հեռավոր Հայաստան...»[1]։

* * *

Հայաստանում սովետական իշխանությունը դեռ նոր էր հաստատվել, դաշնակցականները, համախմբելով հակահեղափոխական ուժերը, 1921 թ. փետրվարին դինված խռովություն բարձրացրին։ Սկսվեց քաղաքացիական պատերազմը։

Դաշնակցականները գրավեցին Երևանը և շրջակա մի շարք շրջաններ ու կազմեցին իրենց «կառավարությունը»։ Գրավված վայրերում դաշնակցականները սկսեցին թալանը, բռնությունները ու տեռորը։ Առանց այն էլ երկրում տեղի ունեցած ազգամիջյան պատերազմները քայքայել էին ժողովրդական տնտեսությունը և հայ ժողովրդին կանգնեցրել կործանման եզրին։

1920 թ. սկզբներին Ռնդամալ և Քարվանսարա գյուղերում կազմակերպվում են կոմունիստական առաջին բջիջները. նրանք պրոպագանդիստական լայն աշխատանք են կատարում ժողովրդի մեջ, բացատրում սովետական իշխանության խնդիրներն ու նպատակները։

1920 թ. մայիսին ինչպես Հայաստանի մի շարք վայրերում, այնպես էլ Ախտայում և նրա շրջակա գյուղերում բողոքի ցույցեր տեղի ունեցան դաշնակցականների տիրապե-

---

1 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1967, հ. 7, էջ 121։

ության դեմ։ Այդ ցույցերը գլխավորելու և տեղական կազմակերպություններին օգնություն ցույց տալու նպատակով Ներքին Ախտա են գալիս բոլշևիկներ Ստեփան Սողոմոնյանը, Վահան Սովյանը և ուրիշներ։ Նրանք օգնում են կուսակցական բջիջների կազմակերպմանն ու նրանց գործունեության ծավալմանը։ Մինչ այդ, 1919 թ. սկսած Պետիկ Թորոսյանը աշխատում էր Դարաշիչակի որբանոցում որպես ուսուցիչ։ Մայիսյան տոների նախօրյակին նրա մոտ է գալիս սպարտակյան կազմակերպության անդամ, իր մտերիմ ընկերներից Արմենակ Բուդաղյանը։ Նրանք տեղի ընկերների հետ ժողովներ են հրավիրում Ախտայում, Ռնդամալում, Դարաշիչակում, գյուղացիությանը նախապատրաստում մայիսմեկյան ցույցի[2]։

Դաշնակցական կառավարության ներքին գործերի մինիստրը հրաման է տալիս Ախտայի բաժանմունքի պետին՝ ձերբակալելու Պ. Թորոսյանին և Ա. Բուդաղյանին։ Պետիկն ու Արմենակը իրենց հետքը կորցնելու նպատակով մի քանի շաբաթ թաքնվում են Նորքի այգիներում[3]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով խանդավառված, Բաքվից, Թիֆլիսից, Ռուսաստանից Հայաստան են գալիս նշանավոր հեղափոխական գործիչներ, բանվորներ, զինվորներ, որոնց նկատմամբ դաշնակները ուժեղացնում են հետապնդումները։ Դաշնակցականները 1920 թ. նոյեմբերի 22-ին Երևանի կենտրոնական բանտի քաղաքական կալանավորներին՝ երիտասարդ բոլշևիկներ Արաքս Մուրադյանին, Մնացական Թավաբալյանին, Վահան Մելիք-Դադայանցին, Սարիբեկ Զոլախյանին, Ալեքսանդր Լալայանցին, Իվան Սամսոնովին, Լիպարիտ Մխչյանին, Աղասի Խանջյանին և ուրիշների տեղափոխում են Ներքին Ախտայի բանտը։ Այդ լուրը իսկույն տարածվում է Ախտայի բնակչության մեջ։ Շրջանի հեղափոխական երիտասարդությունը կապ է հաստատում բանտարկյալների հետ, որպեսզի նրանց փրկի սպանության վերահաս վտանգից։ Դաշնակները հեղա-

---

2 Ա. Սոլախյան, Պետիկ Թորոսյանը իմ հուշերում, Երևան, 1972, էջ 8։

3 Նույն տեղում, էջ 9։

փոխական հրամասարդության և կարմիր բանակի հաղթարշավից առաբեկված, 1920 թ. դեկտեմբերի մեկին Ներքին Ախտայի բանտից նրանց և մյուս կալանավորներին՝ թվով 18 մարդ, ետ տարան Երևան։ Սովետական իշխանության հաստատումով նրանք ազատվեցին բանտից։ Դաշնակներին չհաջողվեց իրացնելու նախապատրաստած ոճրագործությունը։

Ժողովրդական լայն զանգվածների մեջ հեղափոխական աշխատանք էին կատարում ինչպես բանվորական վայրերից եկած, այնպես էլ բանակից վերադարձած ընկերները։ Նրանց շարքերում ակտիվ գործում էին Արմենակ և Գերասիմ Գասպարյանները, Վանո Գևորգյանը, Մկրտիչ Ջնոյանը, Խաչատուր Ջաքարյանը, Բաղդասար Կարապետյանը, Միսակ Մանասյանը, Մկրտիչ և Թորոս Արեշատյանները, Վահան Մարտիրոսյանը, Հովակիմ Մելքոնյանը, Գասպար Միքայելյանը, Վահան Բակլաչյանը, Բենիամին Եղիազարյանը, Գրիգոր Այվազյանը և ուրիշներ։

Բաքվից Քարվանսարա գյուղն է վերադառնում Բաքվի բանվորական գործադուլների, հեղափոխական շարժումների ակտիվ մասնակից Խաչատուր Վարդանյանը։ Խ. Վարդանյանը հեղափոխական պրոպագանդիստական լայն աշխատանքներ է ծավալում ոչ միայն Քարվանսարա և Ռնդամալ գյուղերում, այլև Ախտայի շրջանի մյուս գյուղերի աշխատավորության շրջանում։ Նա հեղափոխական աշխատանքի մեջ է ներգրավում Տիգրան Ներսիսյանին, Տիգրան Պետրոսյանին, Մարտիրոս Մարգարյանին, Ղազար Պողոսյանին և ուրիշների։

Բաքվից գյուղ է վերադառնում նաև Գարսևան Մովսիսյանը[4]։ Նա անմիջապես կապ է հաստատում Ներքին Ախտայի բոլշևիկ ընդհատակյաների հետ և գյուղում հեղափոխական ակտիվ գործունեություն ծավալում։ Գ. Մովսիսյանը իր շուրջն

---

4 Գարսևան Մովսիսյանը 18 տարեկան հասակում թողնելով հայրենի գյուղը, գնում է Բաքու և 5 տարի աշխատում նավթահանքերում։ Այնտեղ նա սովորում և ավարտում է դեղագործական ուսումնարանը։ Գ. Մովսիսյանը մասնակցում է Բաքվի հեղափոխական շարժումներին և այնտեղ էլ ընդունվում է ՌՍԴ(բ)Կ շարքերը։

է հավաքում Ներքին Ախտայի բոլշևիկներին, հաճախ ժողովներ գումարում գյուղի ծայրում գտնվող իր բնակարանում։

Ախտայի և Ելենովկայի շրջանների բոլշևիկների վրա մեծ ազդեցություն ունեին Նոր Բայազետում հեղափոխական աշխատանքները ղեկավարող Հովհաննես Սարուխանյանը և Բատիկ Բատիկյանը։

Շուտով Ներքին Ախտա է հասնում Մայիսյան ապստամբության լուրը։ 1920 թ. մայիսին Ներքին Ախտա են գալիս մի քանի բոլշևիկներ։ Տեղի է ունենում գաղտնի խորհրդակցություն։ Խորհրդակցության մասնակիցներին Ախտա եկած ընկերները ծանոթացնում են կենտրոնի ցուցումներին և կոչ անում բոլորին կազմ ու պատրաստ լինել առաջիկա մարտերին։ Հաջորդ օրը Ներքին Ախտայի բնակիչները հավաքվում են գյուղի կամուրջի մոտ, ուր ճառով հանդես է գալիս Պ. Թորոսյանը։ Միտինգի մի շարք մասնակիցներ ընդհատակյա բջջի հանձնարարությամբ մեկնում են շրջանի հարևան գյուղերը՝ բնակչությանը Մայիսյան ապստամբության դեպքերին մանրամասն ծանոթացնելու նպատակով։ Դարսևան Մովսիսյանի միջոցով Դմաշենի ընդհատակյա կոմբջիջը կապ է հաստատում Ներքին Ախտայի հեղափոխականների հետ։

Շրջանում նոր կազմակերպված հեղկոմները միջոցներ ձեռնարկեցին Ներքին Ախտայում, Ռնդամալում և Քարվանսարայում կյանքը վերականգնելու ուղղությամբ։ Հաշվի առնվեցին լծկան անասունները, գյուղատնտեսական գործիքները, սերմացուն՝ առաջիկա գարնանացանը նախապատրաստված դիմավորելու համար։

Ներքին Ախտայում ստեղծված առաջին հեղափոխական կոմիտեն ղեկավարում էր աննկուն բոլշևիկ Արտաշես Կոստանյանը։ Կոստանյանը ծնվել է 1896 թ. Կաղզվանում (Կարսի մարզ), արհեստավորի ընտանիքում։ Արտաշեսն ավարտում է Կաղզվանի քաղաքային ուսումնարանը, որտեղ և աշխատում է որպես ուսուցիչ։

Ա. Կոստանյանի քաղաքական աշխարհայացքի ձևավորման գործում մեծ դեր է խաղում Կաղզվան եկած, հետագա-

յում Մայիսյան ապստամբության ղեկավարներից մեկը՝ Հովհաննես Սարուխանյանը։

Փետրվարյան հեղափոխությունից հետո Կաղզվանում կազմակերպվեց առաջին բոլշևիկյան կազմակերպությունը, որի շարքերը մտավ Ա. Կոստանյանը։ Արտաշեսը Կաղզվանում դարձավ աչքի ընկնող հեղափոխական գործիչ։ Նա հաճախ էր հանդես գալիս բանվորական միտինգներում, գյուղացիներին և զինվորներին պատմում սովետական իշխանության մասին։

Կաղզվանում Կոստանյանը գործում էր «Ակոս» ծածկանվան տակ։ «Ակոսը» ով է, ինչ է, մարդ է, կազմակերպություն է, թե միություն է, դժգոհում էին դաշնակցականների պարագլուխները և երկար ժամանակ չէին կարողանում իմանալ գաղտնիքը։ «Ակոսը» սարսափեցնում էր դաշնակցականներին և մաուզերիստներին։ Նրա համբավը հասել էր նույնիսկ Կարս։ Այնտեղից պահանջում էին անմիջապես հայտնաբերել «Ակոսին» և ոչնչացնել։ Սակայն դաշնակցականների ջանքերն ապարդյուն էին անցնում։

Կույր պատահականությամբ «Ակոսի» գաղտնիքը բացահայտվում է։ Պարզվում է, որ ահ ու սարսափ առաջացնող «Ակոսը» դաշնակցականների զորամասի շտաբի գրագրի պարտականությունը կատարող Արտաշես Կոստանյանն է։ Նրան ամիջապես ձերբակալում են։

Հայաստանում սովետական կարգերի հաստատվելուց հետո, գեկտեմբերի 2-ին Ա. Կոստանյանը և մյուս բանտարկյալներն ազատվում են բանտից։ Արտաշես Կոստանյանը նշանակվում է Ախտայի շրջանի հեղկոմի նախագահ։ Փետրվարյան խռովության ժամանակ զոհվում է անվեհեր մարտիկ, բոցաշունչ բոլշևիկ Արտաշես Կոստանյանը։

Կոստանյանի սպանության դեպքը այսպես է նկարագրում Ախտայի փոստի պետ Գ. Կրանդաշևը. «Փետրվարի 15-ի գիշերը Ա. Կոստանյանը Ախտայի կապի բաժանմունքում խոսում էր Երևանի հետ, հայտնում պատրաստվող ավանտյուրայի մասին։ Այդ ժամանակ մի խումբ դաշնակներ կապի բաժանմունքը շրջապատում են։ Ա. Կոստանյանը

նրանց հետ կռվի է բռնվում։ 3. Կարյագինը և 24 տարեկան Ա. Կոստանյանն այդտեղ զոհվում են։ (Տե՛ս, հին բոլշևիկ Վարդան Սաղաթելյանի հոդվածը, «Հրազդան» թերթի 1967 թ. № 23, 25 նոյեմբերի)։

Հեղկոմի առաջին գործը եղավ այն, որ նա բռնագրավեց կուլակների բոլոր հողերը և բաժանեց գյուղացիներին, ստեղծեց միլիցիա և գյուղական հեղկոմներ։ Այս ձեռնարկումները չէին վրիպել դաշնակների ուշադրությունից։ Նրանց գերակշռող մասը մտել էր միլիցիայի կազմի մեջ։ Օգտագործելով գրաված պոստերը, նրանք նախապատրաստեցին նոր ավանտյուրա։ Ներքին Ախտայում ավանտյուրան գլխավորում էր Արամ Դավոյանը (խմբապետ Մուսոյի Արամը)։ Դաշնակցականների «Հայրենիքի փրկության կոմիտեի» կողմից նրան հանձնարարված էր գրավել Ներքին Ախտայի սովետական հիմնարկները և փակել Ելենովկայից Ախտա տանող ճանապարհը՝ Կարմիր բանակի մուտքը Դիլիջանից կտրելու համար։

1921 թ. փետրվարին դաշնակցականները առաջինը ձերբակալում են կուսբջջի քարտուղար Երեմ Մալխասյանին, որը եկել էր Ռուսաստանից, ապա Միսակ Մանասյանին, Արամ Խաչատրյանին և երեքին միասին ուղարկում Մաղկունք գյուղը։ Շուտով Ախտայում ստեղծվում է հեղափոխական շտաբ, որի կազմի մեջ են մտնում Արմենակ Գասպարյանը, Հովակիմ Մելքոնյանը, Բաղդասար Կարապետյանը, Գեղամ Օհանյանը և Գրիգոր Այվազյանը։ Կազմակերպվում է առանձին ջոկատ՝ դաշնակցականներին դիմադրելու համար։ Ռնդամալի և Դարաչիչակի միջև եղած ընդարձակ և հարթ տարածության վրա կռիվ է սկսվում ջոկատի և դաշնակցական խմբի միջև։ Դաշնակները գերի են վերցնում կոմունիստներ Մկրտիչ Ջնոյանին, Հայրապետ Հովհաննիսյանին, Մարտիրոս Միքայելյանին և ուղարկում Ջանդեղուր, ուր հարյուրավոր այլ բոլշևիկների հետ նրանց ցած նետեցին Տաթևի ժայռից։

Մինչ դաշնակներն իրենց տիրապետությունն էին «ամրացնում» Ռնդամալում և շրջակա գյուղերում, կարմիր բանակի XI զորամասի ստորաբաժանումները Դիլիջան-Սևան։

ուղղությամբ շարժվում էին դեպի Երևան։ Կարմիր բանակի զորամասերից մեկը առաջադրանք էր ստացել Ախտայի շրջանը մաքրել դաշնակցականներից։ Այդ ստորաբաժանումը Սևանից թեքվելով Դդմաշենի ուղղությամբ, առաջ շարժվեց դեպի Ներքին Ախտա։ Այդ ճանապարհին ընկած գյուղերից թշնամին թողեց ու հեռացավ[5]։

Ներքին Ախտայում թաքնված էին Ելենովկայի շրջանի դաշնակցական մի քանի գործիչներ։ Նրանք նպատակ ունեին գրավել Սուխոյ ֆանտանը և կտրել Երևանից Ախտա տանող ճանապարհը։ Այստեղ էլ նրանք պետք է իբր բռնեին Գ. Ամիարբեկյանին և կալանավորեին։

Ներքին Ախտայի և նրա շրջակայքի մի շարք գյուղերում գալտնի նախապատրաստական աշխատանքներ տանելուց հետո դաշնակցականները ղեկուցում են Երևանում գտնվող Սիմոն Վրացյանին և նրանից ստանում համապատասխան ցուցումներ։

1921 թ. փետրվարի 15-ի լույս 16-ի գիշերը[6] դաշնակցականները հարձակվեցին Ներքին Ախտայի վրա, ներխուժեցին հիմնարկները։

Դաշնակ բախտախնդիրները թեև գրավեցին Ելենովկայի շրջանը, բայց իրենց նպատակին չհասան։ Կարմիր պարտիզանները՝ Իոն Շչեդրինի և Մեխակ Սարգսյանի ղեկավարությամբ, փետրվարի 17-18-ին Ելենովկայից վերջնականապես դուրս քշեցին դաշնակներին։ Այդ համառ ու հերոսական կռիվներին մասնակցում էին Գևորգ Ջանչանը, Սենիկ Հարությունյանը, Բաքվից եկած Պանչենկոն իր 150 ուսանող զինվորներով և ուրիշներ։ Այսպիսով, տապալվում է դաշնակցականների կողմից Ելենովկան գրավելու, կարմիր բանակի ճա-

---

5 «Լենինի դրոշով», 1960, 9 և 13 հոկտեմբերի (№ 81, 82)։ Տե՛ս Պ. Թովմասյանի «Նրանց մասին, ովքեր կռվել են այսօրվա համար» հոդվածը։

6 Օգտագործել ենք «Բաներեր Հայաստանի արխիվների» 1967, № 3/18։ Տե՛ս Վահան Հովհաննիսյանի «Էջեր հեղափոխության պատմության մոտիկ անցյալից» հոդվածը, էջ 256 (247—266)։

Հանրապետական գրադարան

նապարհը Դիլիջանի կողմից կտրելու և Բայազետի ու Ախտայի դաշնակ ուժերը Սլենովկայում միավորելու պլանը։ Դրան մեծապես նպաստում է Ռնդամալ և Քարվանսարա գյուղերի ապստամբությունը։ Ահա թե այս մասին ինչ է գրված «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերում»։ «Երբ սկսվեց ավանտյուրան, Ախտայի շրջանի Ռնդամալ և Քարվանսարա գյուղերի աշխատավորները, կազմակերպելով 300 հոգուց բաղկացած պարտիզանական ջոկատ, համառ դիմադրություն ցույց տվեցին դաշնակներին և շուտով միացան կարմիր բանակի զորամասերին»[7]։

Խռովությունը սկսվելուց հետո, կոմունիստներ Արմենակ Գասպարյանը, Գերասիմ Գասպարյանը, Խաչիկ Ջաքարյանը, Վանո Գևորգյանը, Վահան Բակլաչյանը, Թորոս Արևշատյանը և շատ ուրիշներ գյուղացիների մեջ մասսայական աշխատանքներ էին տանում, իսկ մի շարք մարդիկ էլ մեծ օգնություն էին ցույց տալիս ընդհատակում գործող բոլշևիկներին։

Փետրվարի 19-ի առավոտյան Արմենակ Սարգսյանը և Վանուշ Բակլաչյանը հնչեցրին Հրազդանի եկեղեցու զանգերը։ Երիտասարդները, որոնք զինված էին, հավաքվեցին գյուղի կենտրոնում։ Թուրքիկ միտինգից հետո նրանք շարժվեցին դեպի դաշնակցականների գրասենյակը, զինաթափեցին նրանց և կալանավորեցին։ Բանտում գտնված հեղափոխականները ազատ արձակվեցին։ Նրանցից ռնդամալցի հեղկոմի նախագահ Միսակ Մանասյանը դարձավ կարմիր պարտիզանական ջոկի հրամանատար։

Քարվանսարա և Ռնդամալ գյուղերում վերականգնվեց հեղկոմը, սակայն դրությունը դեռևս շատ ծանր էր, որովհետև շրջապատի գյուղերը գտնվում էին դաշնակցականների ձեռքում։

Քարվանսարայի և Ռնդամալի պարտիզաններին հաջողվեց շրջակա գյուղերում գտնվող դաշնակ խմբապետների հարձակումները ետ մղել։

---

7 «ՀԿԿ պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 321։

Փետրվարի 20-ին Ծաղկաձորում գտնվող դաշնակ խմբապետը փորձեց Ոնդամալով անցնել Քարվանսարա, բայց նրա վրա կրակ բաց արին պարտիզանները։ Խմբապետը փախուստի դիմեց։ Ոնդամալ, Քարվանսարա գյուղերի ժողովրդական շարժումը և փետրվարի 20-ին դաշնակ խմբապետին հասցրած հարվածը սարսափեցրել էին Ախտալի շրջանի դաշնակներին և նրանք «Հայրենիքի փրկության կոմիտեի» որոշմամբ Ծաղկաձորի շրջանում (որի մեջ մտնում էին Ոնդամալ և Քարվանսարա գյուղերը) արտակարգ դրություն հայտարարեցին։

«Հայրենիքի փրկության կոմիտեն» պահանջեց կարմիր պարտիզաններից զենքը վայր դնել և հանձնվել դաշնակցականների իշխանությանը։ Փետրվարի 26-ին պարտիզաններին խաբելու և նրանց զինաթափելու փորձը անհաջողության մատնվեց։

Դաշնակները արյունալի հաշվեհարդար էին տեսնում ապստամբների հետ՝ հրկիզում էին նրանց տները, բռնագրավում ունեցվածքը և դատաստան տեսնում բոլշևիկների համակիրների հետ։ Ոնդամալում նրանք բռնագրավեցին Գրիգոր Այվազյանի, Մկրտիչ Մայիլյանի, Հայրապետ Հովհաննիսյանի, Դասպար Միքայելյանի և ուրիշների անասունները ու տնային գույքը։ Քարվանսարայում հրդեհեցին Առաքել Ներսիսյանի, Երեմ Ներսիսյանի և ուրիշների խոտի դեղերը, թալանեցին տները։ Տանջանքի ենթարկեցին պարտիզաններին օգնող կանանց։ Դաշնակները գնդակահարեցին նաև Ոնդամալի հեղկոմի նախագահ Գերասիմ Գասպարյանին, իսկ նրա եղբորը՝ Հայկ Դասպարյանին թրատեցին գյուղի հրապարակում։ Ոնդամալցիներից 31 հոգու կալանավորեցին և ուղարկեցին Երևանի բանտը։

Փետրվարյան խռովության ժամանակ դաշնակները Դրդմաշենում սպանեցին Մարտիրոս Մարգարյանին և Գարսևան Գրիգորյանին, իսկ Քարվանսարա գյուղում Զալիրիկ Առաքելյանին և նրա որդուն՝ Սեդրակ Առաքելյանին, Երվանդ Բարսեղյանին, Հովհաննես Հովսեփյանին և ուրիշներին։

Կարմիր բանակի զորամասերը հասնելով Ելենովկա, հարձակվում են դաշնակ խմբապետների վրա։ Առաջավոր գծում զոհվում են ռնդամալցի կարմիր պարտիզան Եղիշե Տեր-Հակոբյանը, Վահան Բակլաչյանը, Ելենովկայի կոմունիստներից Երվանդ Առաքելյանը, Ա. Մակարյանը, Սոլոմոն Շիշլյանիկովը, Ալեքսեյ Եվդակիմովը։ Մարտի 16-ի լույս 17-ի գիշերը Ելենովկա-Ախտա գծում կարմիր զորամասերը ազատագրում են Ռնդամալ, Քարվանասարա, Մաքրավան, Աղփարա[8] և այլ գյուղերը, մարտի 18-ին Ներքին Ախտան և շրջակա գյուղերը։ Դաշնակ բախտախնդիրները կենտրոնանում են Սուխոյ Ֆանտանում։

1921 թ. մարտի 23-ին կարմիր բանակի մարտիկները ամբողջ ճակատով անցնում են հարձակման։ Նրանց հետ էին օգնության եկած XI բանակի զորամասերը։ Այդ մարտերի ժամանակ թշնամին պարտություն կրեց, թողնելով գնդացիրներ, ռազմամթերք և փախուստի դիմեց։

Մարտի վերջերին, երբ կարմիր բանակի ստորաբաժանումները պատրաստվում էին Ախտայից ընդհանուր հարձակման անցնել, Ս. Օրջոնիկիձեի հանձնարարությամբ շտաբ է գալիս բանաստեղծ Հովհաննես Թումանյանը՝ քաղաքացիական կռիվների մասնակիցներին հաշտեցնելու մտադրությամբ։ Հ. Թումանյանը խաչատուր Ջաքարյանի ուղեկցությամբ մեկնում է Սուխոյ Ֆանտան՝ (ուր դաշնակներն ամրացել էին փետրվարյան խռովության օրերին) դաշնակների հետ բանակցելու։ Կրակը դադարեցնելու մասին Հ. Թումանյանի առաջարկությունը դաշնակները չեն ընդունում։ Թումանյանը մեկնում է Երևան և ներկայանում «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանին։ Վերջինս նույնպես չի ընդունում Հ. Թումանյանի առաջարկությունը և նրան անվանելով բոլշևիկների գործակալ տնային բանտարկության է ենթարկում[9]։

---

8 Ա. Մ. Հակոբյան, *Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում*, Երևան, 1960, էջ 66։

9 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1967, հ. 7, էջ 151։

Կարմիր բանակի զինվորներն անցնում են վճռական հարձակման, թշնամին այլևս լուրջ դիմադրություն չկարողանալով ցույց տալ, նահանջում է։ Վերջապես, 1921 թ. ապրիլի 2-ին կարմիր բանակի ստորաբաժանումները և պարտիզանները մտնում են Երևան[10]։

Մայրաքաղաքի ողջ բնակչությունը ցնծությամբ դիմավորեց իր ազատարարներին։ Մինչև ապրիլի 15-ը ազատագրվեցին նաև այն շրջանները (Աշտարակ, Էջմիածին, Բասարգեչար, Դարալագյազ, Կոտայք և այլն), որոնք դաշնակցականները գրավել էին Փետրվարյան խռովության ժամանակ։

Սովետական Հայաստանի նորաստեղծ կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ 1921 թ. հուլիսի կեսերին դաշնակցականների ջախջախված զորքերի մնացորդները դուրս շպրտվեցին նաև Զանգեզուրից։ Ազատագրված Զանգեզուրի աշխատավորները իրենց ջերմ ողջույնն ուղարկեցին Սովետական Հայաստանի կառավարությանը և հերոսական կարմիր բանակին։

Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը, սովետական կարգերի հաղթանակի համար նրանց մղած մարտերն ավարտվեցին հաղթանակով։

1921 թ. քաղաքացիական կռիվներում Սովետական Հայաստանի աշխատավորները հաղթանակով դուրս եկան, որովհետև նրանց պայքարի կազմակերպիչն ու ոգեշնչողը կոմունիստական կուսակցությունն էր։ Ինչպես բանվորներն ու գյուղացիները, այնպես էլ կարմիր բանակի զորամասերը, պարտիզանական ջոկատները գիտեին, որ իրենք կռվում էին սովետական իշխանության, իրենց հայրենիքի ազատության ու անկախության համար։

Սովետական կարգերի հաստատման համար մղված մարտերում հայ ժողովուրդը մենակ չէր, նրան օգնության հասավ ռուս մեծ ժողովուրդը, նրա աջակիցն ու զինակիցը։

---

10 «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք երկրորդ, Երևան, 1961, էջ 429—431։

«Սովետական իշխանության գոյությամբ, իրենց ազատագրմամբ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի աշխատավոր մասսաներն ամբողջովին պարտական են Ռուսաստանին,— ասել է Գ. Կ. Օրջոնիկիձեն,— եթե չիներ Սովետական Ռուսաստանը՝ չէր լինի Սովետական Ադրբեջանը, Սովետական Վրաստանը, Սովետական Հայաստանը...»[11]։

---

11 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 111։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՐԱԶԴԱՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1920—1940 թթ.)

Նախասովետական տարիներին Հայաստանը ցարական Ռուսաստանի հետամնաց ագրարային ծայրամասերից էր։ Երկրի տնտեսության ամբողջ արտադրանքի երեք քառորդից ավելին ստացվում էր գյուղատնտեսությունից և բնակչության ավելի քան 90 տոկոսն ապրում էր գյուղում։

Հայաստանում հողերի 70 տոկոսը պետության, կալվածատերերի ու վանքերի ձեռքին էր[1]*, այն դեպքում, երբ գյուղացիական բոլոր տնտեսությունների 88 տոկոսը կազմող միջակ ու չքավոր գյուղացիներին պատկանում էր հողերի միայն 19 տոկոսը*[2]*։ Ցածր էր գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը, ուստի և բնական է, որ նյութական ցածր վիճակում, իրավազուրկ, անտանելի պայմաններում էր ապրում հայ գյուղացին։ Աշխատավոր գյուղացու պայմաններն ավելի վատացան 1918—1920 թթ., դաշնակցական կառավարության օրոք։ Դաշնակները երկրի ժողովրդական տնտեսությունը հասցրին ծայրահեղ քայքայման։*

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, գյուղատնտեսության վերականգնման առաջին տարվա ընթացքում, տեղական հեղկոմները, կուսակցական օրգանների ղեկավարությամբ հաղթահարելով մեծ դժվարություն-

---

[1] *«Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը» (1920—1960 թթ.), Երևան, 1960, էջ 231։*

[2] *Նույն տեղում։*

ներ, զգալի աշխատանք կատարեցին հանրապետության չքավոր ու միջակ տնտեսությունները ոտքի կանգնեցնելու ուղղությամբ[3]։ 1921 թ. գարնանացանին Հողժողկոմատը աշխատավոր գյուղացիներին ապահովեց սերմացու հացահատիկով և գյուղատնտեսական զանազան գործիքներով, իսկ կարիքավոր տնտեսություններին՝ ֆինանսական միջոցներով։

1922 թ. մայիսին, երբ Հայաստանի Կենտգործկոմի նախագահ Սաքո Համբարձումյանը այցելում է Ներքին Ախտա, մոտակա գյուղերի բնակիչները նրան ներկայացնում են մի փաստաթուղթ, որտեղ գրված էր. «Ծաղիկներով չենք դիմավորում Ձեզ, բնությունն այդ չի տվել մեզ, արևը խանձել է դրանք ու հետո էլ մեր մի կտոր արտն ու ցանքը։ Ջուրը սակավ է, խոտհարքը՝ քիչ, սովը բավականին զգալի է, սայլերի պակասությունը շատ է անդրադառնում տնտեսության վրա։

Մենք ուզում ենք աշխատել, թվել վերաշինության մեծ գործին, պատրաստ ենք սովից թուլացած մեր բազուկներով վերականգնել գյուղը»[4]։ Այս փաստաթղթում ճշմարտացիորեն ներկայացված են ախտեցու, քարվանսարեցու, ռնդամալցու և մյուս գյուղերի գյուղացիների պահանջներն ու կարիքները։

Այդ տարիներին՝ 1921 թ. մայիսից մինչև 1922 թ. դեկտեմբերը Ա. Այդինյանը եղել է Ներքին Ախտայի հեղկոմի նախագահ, այնուհետև՝ Ախտայի գավառային սովետի գործադիր կոմիտեի նախագահ, իսկ 1925—1926 թթ.՝ Ախտայի կուսշրջկոմի քարտուղար[5]։

---

3 «Հեղափոխական կոմիտեները Հայաստանում», Երևան, 1974, էջ 14։

4 «Հայրենիքի Ձայն», 1980, 24 դեկտեմբերի։

5 Արշավիր Դերասիմի Այդինյանը ծնվել է 1898 թ. հոկտեմբերին Ղամարլուի (այժմ Արտաշատ) շրջանի Նորաշեն գյուղում։ Նախնական կրթությունն ստացել է Դվինում, ապա Երևանի ուսուցչական դպրոցում։

Ա. Այդինյանը 1917 թ. մասնակցել է Երևանի երիտասարդական հեղափոխական շարժումներին և 1918 թ. ընդունվել ՌՍԴԲ(բ)Կ շարքերը։ Զորակոչվելով դաշնակցական բանակ, ծառայել է ռադիոդիվիզիոնում, ուր հեղափոխական աշխատանք է ծավալել զինվորների շրջանում։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո նա աշխատել է Ներքին Ախտայում, ապա նշանակվել է Երևանի գավառային գործա-

Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից սկսած գործադրված միջոցառումները ամրապնդեցին բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը, որին շատ նպաստեց գյուղատնտեսության վերականգնումը։ Աստիճանաբար պակասեց գյուղում անցյալից ժառանգություն մնացած աղքատությունը, հատկապես ցանքս և անասուններ չունեցող տնտեսությունների քանակը։ 1921—28 թթ. Սովետական Հայաստանում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին բազմաթիվ ջրանցքներ, որոնց շնորհիվ ավելացավ ոռոգելի ցանքատարածությունը։

Գյուղատնտեսության վերակառուցման տարիներին Հայաստանում արմատապես փոխվեց նաև գյուղացիության սոցիալական կազմը։ Հենվելով ժողովրդական տնտեսության և հատկապես սոցիալիստական ինդուստրիայի զարգացման և գյուղատնտեսական կոոպերացիայի վրա, գյուղացիությունը բռնեց համատարած կոլեկտիվացման ուղին, որի հիման վրա կուլակությունը որպես դասակարգ վերացվեց։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին կազմակերպվեցին մեքենատրակտորային կայաններ, որոնք խոշոր դեր կատարեցին գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան ամրապնդելու, արտադրական պրոցեսները մեքենայացնելու գործում։

Կոլտնտեսային կարգերի ամրապնդումը հանդիսացավ կոմունիստական կուսակցության ագրարային քաղաքակա-

---

դիր կոմիտեի քարտուղար, հետո ՀԿ(բ)Կ Զանգեզուրի գավառային կոմիտեի կազմբաժնի վարիչ, այնուհետև Դարալագյազի գավկոմի քարտուղար։

1932 թ. ավարտելով Մոսկվայի Սվերդլովի անվան կոմհամալսարանը Ա. Այդինյանը կուսակցական պատասխանատու աշխատանք է կատարում Ադրբեջանում, Վրաստանում, Դոնի Ռոստովում և Մոսկվայում։ Նա եղել է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ագիտպրոպագանդիստական խմբի ղեկավար, Անդրկովկասյան քաղաքացիական աէրոֆլոտի քաղբաժնի, Ազով-Սևծովյան նավատորմի քաղբաժնի պետ և այլն։ 1954—1969 թթ. տնտեսական տարբեր աշխատանքներ է կատարել Երևանում։ Ա. Այդինյանը վախճանվել է 1975 թ. մարտին։ («Սովետական Հայաստան», 1975 թ., 20 մարտի)։

նության հաղթանակը։ Սովետական իշխանության ստեղծման առաջին օրվանից կազմակերպվեցին հեղափոխական կոմիտեներ 24-ամյա երիտասարդ Արտաշես Կոստանյանի նախագահությամբ։ Ներքին Ախտայում ևս ստեղծվեց հեղափոխական կոմիտե։ Այդ կոմիտեները կատարում էին տեղական իշխանությունների պարտականությունները։ Սրանց օգնելու համար գյուղի աշխատավորության մասնակցությամբ կազմակերպվում էին տարբեր հանձնաժողովներ։ Ներքին Ախտայի հեղկոմին կից գործում էին 5—6 հանձնաժողով։ Այդ հանձնաժողովները զավառային հեղկոմի ղեկավարությամբ Հրազդանում հսկայական դեր կատարեցին թշնամական ուժերի ջախջախման, սովետական կարգերի ամրապնդման համար, ինչպես նաև գյուղացիության քաղաքական ու աշխատանքային ակտիվության բարձրացման գործում։

1921 թ. ծանր խնդիրներից մեկը գարնանացանի կատարումն ու բերքահավաքի կազմակերպումն էր։ Զգացվում էր սերմացուի, լծկան ուժի, գործիքների խիստ պակասություն։ Ինչպես Հանրապետության մյուս գյուղերը, այնպես էլ Ներքին Ախտան, պետությունից ստացան սերմացու, գյուղատնտեսական գործիքներ և ֆինանսական օգնություն։ 1922—1923 թթ. հրազդանցիները ձեռնամուխ եղան ոռոգման աշխատանքներին։ Գյուղում սկսեց ծավալվել առևտուրը։ Այդ նույն տարիներին Ներքին Ախտայի հեղկոմին փոխարինեց բնարովի բանվորագյուղացիական կարմիր բանակային-ների դեպուտատների սովետը։

1924—1926 թթ. գարնանացանի և բերքահավաքի կապակցությամբ առավել աշխուժացան Ներքին Ախտայի գավառակային սովետի աշխատանքները։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին գյուղին օգնելու համար Հանրապետությունում ծավալվեցին շեֆական աշխատանքներ։

Ժողովրդական տնտեսության վերականգնման վերջին տարիներին Հրազդանում ծավալվեց բնակարանային շինարարությունը։ Պետական վարկի օգնությամբ կառուցվեցին բազմաթիվ տներ։ 1927—1928 թթ. տեղական օրգանները կու-

սակցական կազմակերպությունների ղեկավարությամբ նախադրյալներ են ստեղծում անհատական մանր տնտեսությունների, հետամնաց տեխնիկայի վրա հիմնված գյուղը սոցիալիստական ուղու վրա փոխադրելու համար, որպեսզի առավել ամրապնդվի գյուղի և քաղաքի միջև եղած կապը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Գյուղը սոցիալիստական վերափոխման ենթարկելու և աշխատավոր գյուղացիության նյութական պայմանները բարելավելու նպատակով կուսակցության ու կառավարության որոշմամբ ողջ երկրում, և Սովետական Հայաստանի գյուղերում կազմակերպվեցին կոլտնտեսություններ։ Այդ գործին ձեռնամուխ եղան նաև ներքին ախտացիները։ 1928 թ. կազմակերպվեց Ներքին Ախտայի կոլտնտեսությունը, որի կազմակերպիչները դարձան Մկրտիչ Դանիելյանը, Եղիշե Պողոսյանը, Մկրտիչ Օհանյանը, Սուրեն Խաչատրյանը, Արիս Պետրոսյանը և ուրիշներ։ Նորաստեղծ կոլտնտեսության առաջին նախագահ ընտրվեց Բաքվից եկած բանվոր, կոմունիստ Մկրտիչ Դանիելյանը։ Շրջանային կոլտնտկենտրոնի ղեկավար օրգանները կոլտնտեսությանը վարկավորեցին, որի շնորհիվ կոլտնտեսությունը ձեռք բերեց 20 գլուխ կով, 20 գլուխ եզ, 3 ֆուրգոն 12 ձիերով, սայլեր, գութաններ և գյուղատնտեսական այլ մեքենաներ։

1935 թ. կոլտնտեսության անդամների թիվը հասավ 75-ի, ավելացան լծկան անասունների, կաթնատու կովերի գլխաքանակը և ցանքատարածությունները։ Կոլտնտեսությունն մուտք գործեցին գյուղատնտեսական նոր մեքենաներ, աշխատանքը կազմակերպվեց գործարքային ձևով։ Տարեցտարի աճեց ու մեծացավ կոլտնտեսությունը։ Կազմակերպվեցին անասնաբուծական և մեղվաբուծական ֆերմաներ։

1937—1938 թթ. Ներքին Ախտայի կոլտնտեսությունը դարձավ շրջանի ամենախոշոր տնտեսությունը։ Այդ տարիներին կոլտնտեսությունն ուներ 150 գլուխ եզ, 60 գլուխ կով, 1800 գլուխ ոչխար, իսկ պատերազմի նախօրյակին կոլտնտեսությունն արդեն ուներ 600 գլուխ եզ, 400 գլուխ կով, 4200 գլուխ ոչխար, 400—450 հա հասավ աշնանացանը, իսկ

ընդհանուր հասկավոր կուլտուրաների ցանքատարածությունը հասավ 1350—1400 հեկտարի։ 1940 թ. կոլտնտեսությունն ուներ 3 ալրաղաց, ձիթհան, սղոցարան, դարբնոց, լաբորատորիա և պետական փորձադաշտ։

Սոցիալիստական դաշտերի բերքատվությունը բարձրացնելու նպատակով 1930-ական թվականներին Հայաստանի մի շարք շրջաններում, ինչպես և Ներքին Ախտայի Շահումյանի անվան կոլտնտեսության հողերի բաղուլի վրա (60 հա) կազմակերպվեցին փորձադաշտեր։ Դրանց նպատակն էր պարզել, թե տվյալ շրջանում և նույնպիսի կլիմայական պայմաններ ունեցող այլ շրջաններում հացահատիկի, ընդեղենի, խոտերի և յուղատու բույսերի ինչպիսի տեսակներ են բարձր բերք տալիս։ Շահումյանի անվան կոլտնտեսությունում այդ փորձադաշտի աշխատանքները ղեկավարում էր Հ. Ավետիսյանը։ Նա ստացավ հացահատիկային բույսերի մի շարք տեսակների բարձր բերք։ Կոլտնտեսությունը անասնապահական ֆերմաների պետական պլանը կատարելու և 1940 թ. ծնի կամպանիան հաջող անցկացնելու համար շահեց աշխատավորների դեպուտատների Ն. Ախտայի շրջսովետի գործկոմի փոխանցիկ կարմիր դրոշը։

* * *

1930 թ. կազմակերպվեց Քարվանսարայի (այժմ Աթաբեկյանի) կոլտնտեսությունը, որի մեջ մտան 33 տնտեսություն։

Հետագա տարիներին կոլտնտեսությունն աճեց և ամբողջ գյուղը համատարած կոլեկտիվացման ենթարկվեց։ Կոլտնտեսության առաջին նախագահ ընտրվեց նախկին պարտիզան Սարգիս Գևորգյանը։ 1935 թ. հունվարին Քարվանսարա գյուղը կոչվեց լենինյան գվարդիայի աննկուն զավակ Գևորգ Աթաբեկյանի անունով։ Այդ կոլտնտեսությունում մեծ աշխատանք կատարեցին առաջին կոլտնտեսականներ Պողոս Պետրոսյանը, Պապիկ Գալստյանը, Ստեփան Հունանյանը, Արտաշես Ղազարյանը, Թևոս Մկրտչյանը և շատ ուրիշներ։

1930-ական թվականներին ինչպես շրջանի մյուս կոլտնտեսություններում, այնպես էլ Աթարբեկյանի կոլտնտեսությունում ավելացավ անասունների գլխաքանակը, հատկապես քաշող ուժը և ընդարձակվեց բանջարաբոստանային կուլտուրաների ցանքատարածությունը, զարգացավ անասնապահությունը։ Տարեցտարի բարձրացան կոլտնտեսության բերքատվությունը և դրամական եկամուտները։

Շրջանի կոլտնտեսություններին օգնելու նպատակով 1931 թ. Ներքին Ախտայում կազմակերպվեց մեքենատրակտորային կայան և հրավիրեցին մի շարք մասնագետների՝ մեխանիկներ Ալյոշա Սիլիզնովին, Սաշա Վասիլյանին, գյուղատնտես Շահար Սուլթունյանին, տնտեսական աշխատողներ Ա. Դանիելյանին, Հ. Հակոբյանին և ուրիշների։ ՄՏ կայանի տեխնիկական հզորությունը բաղկացած էր 17 տարբեր տեսակի տրակտորներից, 4 կալսիչ մեքենաներից, շարքացաններից և գյուղատնտեսական այլ մեքենաներից։ Այդ նույն տարվա ձմռանը բացվեցին տրակտորիստների կուրսեր։ Հրազդանի ՄՏ կայանի տրակտորները ձմռանը գտնվում էին Աբովյանի շրջանի Մհուբ գյուղում, այնտեղից մեխանիզատորական կազմերով փոխադրվեցին Ուլուխանլու (այժմ Մասիսի շրջան) բամբակի ցանքս կատարելու համար։

1932 թ. մայիսին մեխանիզատորներն իրենց տրակտորներով վերադարձան Ներքին Ախտա և սկսեցին աշխատել շրջանի կոլտնտեսություններում։ Մեխանիզատորներն արդեն ունեին տեխնիկան անխափան օգտագործելու հարուստ փորձ։ Հմուտ տրակտորիստներ էին բրիգադավար Հովսեփ Հարությունյանը, Վաղո Մարգարյանը, Դավիթ Վասիլևը, Սաղաթել Մարգարյանը, Բենիամին Գալստյանը, Աբեթնակ Ղազարյանը և ուրիշներ։

1933 թ. փետրվարին ՄՏ կայաններում կազմակերպվեցին քաղաքաժիններ, որոնք խոշոր դեր կատարեցին կոլտնտեսությունները տնտեսապես և կազմակերպչորեն ամրապնդելու գործում։

1934 թ. ՄՏ կայանի տրակտորային պարկը համալրվեց նոր, անիվավոր տրակտորներով, կատարելագործված կալ-

սրչ մեքենաներով և գյուղատնտեսական այլ սարքերով։ Դրա շնորհիվ Հրազդանի ՄՏ կայանը հաջողությամբ կատարեց իր պայմանագրային պարտականությունները Հրազդանի և Սևանի շրջանների կոլտնտեսություններում։

1938 թ. Հրազդանի ՄՏ կայանի տրակտորների, բերքահավաքի մեքենաների, կցվող և այլ գյուղատնտեսական գործիքների մի մասը հանձնվեցին Սևանի նոր կազմակերպված ՄՏ կայանին։

Այդ տարիներին ՄՏ կայանի գյուղատնտեսական տեխնիկան համալրվեց թրթուրավոր տրակտորներով և կոմբայններով։

Ոգևորված ձեռք բերած հաջողություններով Ախտայի մեքենատրակտորային կայանի կոլեկտիվը զեկուցագիր է ուղարկում ՀԿԿ Կենտկոմ՝ պարտավորվելով 1939 թ. հունվարի 5-ին ավարտել բոլոր տեսակի տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների վերանորոգումները։ Այդ պարտավորությունները նա կատարում է դեկտեմբերի 23-ին։ Աշխատելով ստախանովյան մեթոդով, կոլեկտիվը կարճ ժամկետում և բարձր որակով վերանորոգեց 30 տարբեր մակնիշի տրակտորներ, 7 կոմբայն, 8 կալսիչ, 38 գութան, 11 շարքացան և այլ գյուղատնտեսական գործիքներ։ Նորոգման աշխատանքներում աչքի ընկան Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, ստախանովական Վահան Կարապետյանը, բրիգադիրներ Հովհաննես Մարտիրոսյանը, Հայկարամ Գալստյանը, Վարդան Խաչատրյանը, տրակտորիստներ Մանուկ Ստեփանյանը, Ալեքսան Վարդանյանը, Ստեփան Ստեփանյանը, Երջանիկ Մելքոնյանը և ուրիշներ։

1938 թ. Ախտայի ՄՏ կայանի կոլեկտիվն իր լավ աշխատանքի համար շահեց Հայկական ՍՍՀ փոխանցիկ կարմիր դրոշը։ Իրենց բարեխիղճ աշխատանքով աչքի ընկան հատկապես № 1 բրիգադը (բրիգադավար Միհրան Մարգարյան) և № 3 բրիգադը (բրիգադավար Համո Մանուկյան)։

Ոգևորված ձեռք բերածով Ախտայի ՄՏ կայանի աշխատողները ստանձնեցին նոր պարտավորություններ և մրցման հրավիրեցին Վրացական ՍՍՀ Բորչալուի շրջանի ՄՏ կայանի

աշխատողներին։ Իրենց լավ աշխատանքի համար 1939 թ. Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք ստացան 26 առաջավոր կոլտնտեսականներ։

Ախտայի ՄՏ կայանի անվանի կոմբայնավար Վահան Կարապետյանը 1938 թ. 582 հա փոխարեն հնձել է 800 հա և խնայել է 300 լիտր վառելանյութ։ Նրանից ետ չէին մնում կոմբայնավարներ Արտաշես Օհանյանը, Խաչիկ Տոնոյանը, Ինգլիզ Կարապետյանը, Նորիկ Խաչատրյանը, Մեխակ Ալեքսանյանը և ուրիշներ։

Հմայակ Հակոբյանը ՄՏ կայանի հին աշխատողներից էր։ Նա 1931—1934 թթ. աշխատել է իբրև տրակտորիստ, ապա բրիգադիր, արհեստանոցի վարիչ։ Նրա ղեկավարած կոլեկտիվի բարեխիղճ և նվիրված աշխատանքի շնորհիվ ՄՏ կայանի տրակտորների և գյուղատնտեսական այլ գործիքների աշնան-ձմեռային նորոգումները կատարվում էին ժամանակին և բարձր որակով։

1938 թ. Հ. Հակոբյանն աշխատում էր ՄՏ կայանում որպես ինժեներ-մեխանիկ։

ՄՏ կայանի տրակտորային առաջին բրիգադի տրակտորիստ Նիկոլ Հակոբյանին 1940 թ. հանձնարարված էր կատարելու 445 հա վար։ Իր եռանդուն աշխատանքի շնորհիվ նա կատարեց 603 հա վար, տալով 1834 կգ վառելանյութի խնայողություն, որի համար նա արժանացավ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու պատվին։ Այդ պարգևը նրան տվեց աշխատանքային մեծ լիցք և նա 1941 թ. պլանը ևս կատարեց բարձր ցուցանիշներով։

1940 թ. ամռանը Ներքին Ախտայի ՄՏ կայանի 22 կոմունիստներից 20-ը աշխատում էին արտադրության մեջ։ Նրանք բոլորն էլ աշխատանքի առաջավորներ էին։ Նրանցից առավել աչքի էին ընկնում և կոլեկտիվում մեծ հեղինակություն էին վայելում Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի գլխավոր կոմիտեի կողմից մեդալով պարգևատրված Վ. Կարապետյանը, տրակտորիստներ Գ. Մելքոնյանը, Ն. Հակոբյանը, մեխանիկ Հ. Հակոբյանը և ուրիշներ։

Սոցիալիստական հեղափոխության հաղթանակը հիմնովին փոխեց դպրոցի դերն ու նշանակությունը։ Դպրոցը դարձավ հասարակական զարգացման հզոր գործոն և վիթխարի ծառայություն մատուցեց բնակչության կուլտուրական մակարդակի բարձրացման գործում։

Հրազդանում կուսակցական կազմակերպություններն ու սովետական մարմինները մեծ ուշադրություն դարձրին դպրոցական գործի կազմակերպմանը, որպեսզի կուսակցության նախատեսած ծրագրով մինչև 17 տարեկան բոլոր երեխաները ստանային ձրի և պարտադիր ընդհանուր կրթություն։

1920-ական թվականների կեսերից Հրազդանում մասնավոր բնակարաններում բացվեցին տարրական դպրոցներ։ Քիչ էր դասատուների թիվը, չկային դասագրքեր, գրենական պիտույքներ։ 1930-ական թվականների սկզբին սկսեց գործել գյուղերիտ դպրոցը։ Նախապատերազմյան տարիներին Հրազդանում սկսեցին կառուցել գյուղական դպրոցական շենքեր, դրանք հարստացնել գույքով և լաբորատոր սարքերով։

1940 թ. Հրազդանում գործում էր երկու միջնակարգ և մեկ յոթնամյա դպրոց։

1930-ական թվականների սկզբին Հրազդանում նույնպես իրագործվել էր ընդհանուր պարտադիր տարրական կրթությունը, 1930-ական թվականների կեսերին ողջ հանրապետությունում անցան յոթնամյա պարտադիր կրթության։

1920-ական թվականների վերջերին Հրազդանում գործում էր 3 դպրոց։ Առաջինը հայկական տարրական դպրոցն էր չորս դասարանով, իր տիպային շենքով, երկրորդը՝ կոլերիտ-գյուղական երիտասարդության յոթնամյա դպրոցը և երրորդը՝ ռուսական տարրական դպրոցը՝ 40 աշակերտներով։

1930-ական թվականներին Հրազդանի կոլերիտ գյուղական դպրոցը դարձավ միջնակարգ։

1931 թ. Հրազդանում բացվեց հայկական մանկավարժական տեխնիկումը, 1935—1936 թթ. ուսումնական տարում տեխնիկումը փակվեց՝ համապատասխան բարձրորակ կադրեր չունենալու պատճառով։

Այսպիսով, մինչև Հայրենական պատերազմը Հրազդանում գործող դպրոցներում սովորում էին շուրջ 750 աշակերտ, աշխատում էին 43 ուսուցիչ, որոնց ճնշող մեծամասնությունն ուներ միջնակարգ և միջնակարգ մանկավարժական կրթություն։

Հայաստանում կուլտուրական շինարարության կարևոր խնդիրներից մեկն էլ մասսայական անգրագիտության վերացումն էր։ Ինչպես ընդգծում է Վ. Ի. Լենինը «անգրագետ երկրում կոմունիստական հասարակություն կառուցել չի կարելի»[6]։

Սովետական իշխանությունն առաջին իսկ տարիներից ձեռնամուխ եղավ անգրագիտության վերացմանը։ Դեռևս 1921 թ. սեպտեմբերին Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը դեկրետ ընդունեց անգրագիտության վերացման մասին, իսկ 1924 թ. ստեղծվեց «Կորշի անգրագիտությունը» ընկերությունը։ Այդ աշխատանքները ղեկավարելու համար Լուսժողկոմատին կից ստեղծվեց անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողով։

1920-ական թվականների սկզբներին Հրազդանում ստեղծվեցին անգրագիտության վերացման կետեր՝ 80 սովորողներով։ 1930-ական թվականներին դպրոցներում բացվեցին անգրագիտության վերացման խմբեր, որոնց հետ պարապում էին ուսուցիչները։ Բացի այդ տնային տնտեսուհիների հետ պարապելու համար առանձին բնակարաններում կազմակերպվեցին անգրագիտության վերացման 129 կետ։ Այդ կետերում պարապում էին բարձր դասարանի աշակերտները։

Պատմական ամենակարճ ժամանակամիջոցում Հրազդանի աշխատավորությունը նույնպես հաղթահարեց դարերով մնացած չարիքը՝ վերացրեց չափահաս բնակչության անգրագիտությունը։ Մասսաների մեջ ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքը տարվում էր մամուլի, ռադիոյի, գրադարանների, կուլտարշավների, խրճիթ-ընթերցարանների, ակումբների միջոցով։

---

[6] Վ. Ի. Լենին, Նշվ, հ. 31, էջ 338։

Սոցիալիստական խաղաղ շինարարության տարիներին ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Հրազդանում պետության ցույց տված օգնության շնորհիվ գյուղատնտեսական արտադրությունն ղգալիորեն աշխուժացավ, նկատելի տեղաշարժեր կատարվեցին արդյունաբերության, սովետական առևտրի ծավալման, ինչպես նաև տնտեսական շինարարության այլ բնագավառներում։

Ապրանքափոխանակության շնորհիվ սկսեցին ամրապնդվել գյուղի և քաղաքի կապերը, նոր նախադրյալներ ստեղծելով սոցիալիստական տնտեսության հետագա զարգացման համար։ Հանրապետության քաղաքներում և գյուղերում ծավալվեց բնակարանային շինարարությունը։ Հրազդանում ևս կոլտնտեսականների որոշ մասը, դուրս գալով հին գետնափոր խրճիթներից, կառուցեց երկհարկանի քարակերտ տներ։

Մինչև 1940 թ. Հրազդանն ուներ հիվանդանոց, բուժարան, հանրային խանութ, գյուղի ծայրամասերում կային մի քանի փոքրիկ խանութներ, խրճիթ-ընթերցարաններ, ակումբ-գրադարաններ, ճաշարան, շուկա, մսուր, մանկապարտեզ, գրախանութ և այլն։ Սովետական կառավարությունը տարեցտարի ավելի շատ միջոցներ էր հատկացնում գյուղի բնակչության սոցիալ-կուլտուրական կարիքների համար։ Նախապատերազմյան սոցիալիստական խաղաղ շինարարության տարիներին արմատապես վերափոխվեցին Հրազդանցիների կենցաղային պայմանները։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀՐԱԶԴԱՆՑԻՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941—1945 թթ.)

ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ստեղծագործական-շինարարական աշխատանքի մեջ էին, երբ գերմանաֆաշիստական զավթիչները 1941 թ. հունիսի 22-ին հարձակվեցին մեր հայրենիքի վրա։

Սովետական ժողովուրդը մեկ մարդու նման ոտքի կանգնեց իր հայրենիքի աղատությունն ու անկախությունը պաշտպանելու համար։

Այդ օրը հրապարակվեց սովետական կառավարության հայտարարությունը, որի մեջ բացահայտվեցին գերմանաֆաշիստական զավթիչների նենգ նպատակները և ցույց տրվեց մեր հայրենիքի գլխին կախված ահավոր վտանգը։ Հիտլերյան զավթիչներին հակահարված տալու նպատակով սովետական ժողովրդի բոլոր ուժերը արագորեն մոբիլիզացնելու համար ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե։

Պետք է անհապաղ վերակառուցել ամբողջ աշխատանքը ռազմական ձևով,— ասված է դիմումի մեջ,— ամեն ինչ ենթարկել ռազմաճակատի շահերին, թշնամու ջախջախումը կազմակերպելու խնդիրներին։ Պետք է կազմակերպել բազմակողմանի օգնություն կարմիր բանակին, ապահովել նրա շարքերի համալրումը և ռազմաճակատի պահանջները։

Պատերազմի առաջին օրերին բազմամարդ միտինգներ տեղի ունեցան ողջ երկրում ինչպես նաև Հրազդանի կոլտնտեսություններում, մեքենատրակտորային կայանում, արտադրական մյուս ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում։

Հրազդանում գյուղի աշխատավորների առաջ դրվեցին հրատապ խնդիրներ։ Կոլտնտեսությունների, սովխոզների, մեքենատրակտորային կայանների, գյուղատնտեսության բոլոր օղակների ողջ աշխատանքը ենթարկել հայրենիքի պաշտպանության շահերին։ Հրազդանցիները ոչ միայն համալրեցին բանակի շարքերը, այլև մտան աշխարհազորի, կործանիչ դումարտակների, հակաօդային պաշտպանության և պարտադիր ռազմական ուսուցման միավորումները։ Սովորեցին ռազմական գործը՝ մեր թիկունքը ռազմական համապարփակ ճամբարի վերածելու համար։

Հրազդանի կուսակցական կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունների, սովետական հիմնարկների աշխատանքները վերակառուցվեցին երկրի պաշտպանության շահերին համապատասխան. «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» կոչը դարձավ Սովետական Միության բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև Հրազդանի աշխատավորության մարտական ծրագիրը։

Հայրենական պատերազմի տարիներին էլ ավելի բարձրացավ ՄՏ կայանների դերը։ Կոլտնտեսություններում աշխատողների մեծ մասը մեկնել էր բանակ, նրանց փոխարինելու էին եկել կանայք։ Հրազդանի ՄՏ կայանում կազմակերպված տրակտորիստների կուրսերում սովորելու ընդգրկված Հրազդանցի 60 աղջիկներ ավարտելով տրակտորիստների կուրսերը, մեծ աշխատանք կատարեցին կոլտնտեսային դաշտերում։ Աճեցին նաև ՄՏ կայանի մեխանիզատորական կադրերը. գյուղգործիքների մեխանիկ Սամսոն Մհերյանը, խառատ Ալեքսեյ Նիկիտինը, դարբին Մեհրաբ Գևորգյանը, կոմբայնավարներ Սուրեն Քոչարյանը, Խաչիկ Հակոբյանը, բրիգադավար Սուրեն Հովհաննիսյանը, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Խաչատուր Սարգսյանը և ուրիշներ։ Իրենց պլան-

ները կրկնակի էին կատարում ստախանովականներ Ռուբեն Սողոմոնյանը, Արիս Պետրոսյանը, Հովսեփ Հարությունյանը, Արտաշ Մանուկյանը և ուրիշներ։

Հրազդանցի հայրենասեր աղջիկների տրակտորային բրիգադը, որի կազմում էին Սենուշկա Գրիգորյանը, Փունջո Ռաֆայելյանը, Հրանուշ Հովհաննիսյանը, Հայկուշ Սարգսյանը, Աստղիկ Պետրոսյանը, Արուս Պողոսյանը, Նապիկ Բարեղամյանը իրենց պլանները միշտ գերակատարում էին։ Նրանք աշխատում էին վաղ առավոտից մինչև մայրամուտ, որպեսզի հաց հասցնեն ռազմաճակատին, թշնամու դեմ ահեղ կռվի ելած իրենց հայրերին ու եղբայրներին։

Պատերազմի առաջին տարին Հրազդանցի 200 կին-հրնձվորուհիներ դուրս եկան դաշտ, նշանաբան ընդունելով՝ ոչ մի հասկ չթողնել դաշտում։

Հրազդանի բանվոր-ծառայողներն ու կոլտնտեսականները նույնպես արձագանքելով մեր երկրի առաջավոր մարզերի ու քաղաքների աշխատավորների նախաձեռնությանը, բաղմաթիվ նվեր-ծանրոցներ ուղարկեցին սովետական բանակի մարտիկներին, հրամանատարներին և բաղաշխատողներին։

Հրազդանի աշխատավորները իրենց ուղարկած ծանրոցների համար ջերմ, շնորհակալական նամակներ էին ստանում ռազմաճակատներից։ Ահա դրանցից մեկը. «Մեր գվարդիական զորամասի անձնակազմը խանդավառությամբ ընդունեց Ձեր նամակը և նվեր-ծանրոցները։ Ձեր ջերմ խոսքերը մեր սրտերում ավելի ուժեղացրին սերը դեպի մայր Հայրենիքը։ Ջերմորեն շնորհակալ ենք ձեզանից այն հոգատարության համար, որ դուք հանդես եք բերում կարմիր բանակի մարտիկների նկատմամբ։ Մենք, գվարդիական զորամասի մարտիկներս համակված ենք մի ցանկությամբ՝ մեր բոլոր ուժերը, մեր բոլոր ռազմական գիտելիքները, իսկ եթե հարկ լինի նաև մեր կյանքը նվիրաբերելու թշնամու ջախջախման գործին։

Թանկագին ընկերներ, մենք հպարտանում ենք ձեր արտադրական հաջողություններով, համոզված ենք, որ դուք

այսուհետև ևս անձնվիրաբար կաշխատենք հանուն մեր հայրենիքի, կօգնենք ռազմաճակատին, որպեսզի շուտով չախշախենք մեր բոլորիս ատելի թշնամուն՝ գերմանական ֆաշիզմին»[1]։

Ռազմաճակատից ստացվող նույնատիպ նամակները Հրազդանցիների մեջ աշխատանքային նոր լիցք առաջացրին ռազմաճակատին ցույց տրվող օգնությունը բազմապատկելու համար։

Հայրենական պատերազմի տարիներին Հրազդանի կոլտնտեսությունը ռազմաճակատին տվեց երկու ավտոմեքենա, 350 ձի, 30 ֆուրգոն, 10 բրիչկա և այլ տրանսպորտի միջոցներ։ Կարմիր բանակի ֆոնդին փոխանցեցին մոտ 5 հազար ցենտներ հացահատիկ, 6 հազար ցենտներ կաթ, 1200 ցենտներ միս, 100 ցենտներ բուրդ և այլն։ Ամեն տարի տոների նախօրյակներին կոլտնտեսականները ռազմաճակատ էին ուղարկում նվեր-ծանրոցներ։

Պատերազմի տարիներին Հրազդանի կոլտնտեսությունները զրկվեցին հիմնական աշխատող ուժից։ Գյուղատնտեսական ողջ աշխատանքները կատարում էին կանայք, ծերերն ու հաշմանդամները։ Ստեղծվեցին կանանց բրիգադներ։ 72 կին փոխարինեցին ռազմաճակատ մեկնած իրենց ամուսիններին ու եղբայրներին։

Պատերազմի սկզբներին Հրազդանում կայացավ երիտասարդ կանանց և աղջիկների հավաք, որի մասնակիցները հատուկ դիմումով կոչ արեցին Հանրապետության բոլոր երիտասարդ կանանց և աղջիկներին՝ ընդգրկվելու գյուղատնտեսական աշխատանքներում ռազմաճակատ մեկնած իրենց հարազատներին փոխարինելու համար։ Ջրառատի կոլտնտեսությունում իրենց լավ աշխատանքով աչքի ընկան Սոֆիկ Գասպարյանը, Էլիզա Նազարյանը, Աստղիկ Ղազարյանը և շատ ուրիշներ։

Հրազդանցիները մասնակցելով համաժողովրդական

---

[1] Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետ, ֆոնդ 325, գործ 1, էջ 11։

հայրենասիրական շարժմանը, հարյուր հազար ռուբլի տրամադրեցին «Հայաստանի կոլխոզնիկ» տանկային շարասյան կառուցման համար, խնայողական դրամարկղ և պետական բանկի բաժանմունքներ մուծեցին որոշակի գումարներ՝ ազատագրված քաղաքների վերականգնման և պաշտպանական տարբեր ֆոնդերի օգտին։

Կարմիր բանակ զորակոչվածները հերոսաբար կռվեցին գերմանաֆաշիստական զավթիչների դեմ։ Նրանցից շատերը փառքով պսակեցին իրենց անունները։ Մայոր Միքայել Ավետիսյանը[2] 1941 թ. դեկտեմբերին մեկնեց ռազմաճակատ, ճաշակեց սովետական բանակի նահանջի դառնությունները, ուրախացավ, ապրեց ու ոգևորվեց մարտական ընկերների ձեռք բերած հաջողություններով։ Մ. Ավետիսյանը հերոսական սխրանքներով լի ուղի է անցել 321-րդ հրաձգային դիվիզիայի 44-րդ գնդի շարքերում։

Համառ ու հերոսական կռիվներ էին գնում Դանցիգ քաղաքը գրավելու համար։ Թշնամին պաշտպանական մի շարք բնագծեր էր ստեղծել և ձգտում էր ամեն գնով պաշտպանել քաղաքը։ Դրությունը գնալով ծանրանում էր, անհրաժեշտ էր բոլոր միջոցներով հաղթահարել թշնամու դիմադրությունը։ Այդ համառ մարտերից մեկում մայոր Մ. Ավետիսյանը դուրս է գալիս խրամատից և նետվում առաջ։ Մարտիկները հետևվում են իրենց հրամանատարին։ Սակայն այդ պահին ֆաշիստ նշանառուն մահացու վերք է հասցնում Միքայելին։ Կորցնելով իրենց մայորին, գումարտակի մարտիկները մյուս դիվիզիաների մարտիկների հետ մտնում են Դանցիգ։ Համառ

---

2 Միքայել Ալեքսանի Ավետիսյանը ծնվել է 1902 թ. Ներքին Ախտայում (Հրազդանում) չքավոր գյուղացու ընտանիքում։ 1920 թ. Միքայելը ծառայության է մտնում XI բանակի շարքերը և մասնակցում Հայաստանի ազատագրմանը։ Նա սկզբում սովորել է Հրազդանի № 4 դպրոցում, ապա Թբիլիսիի հետևակային դպրոցում։ 1925 թ. Միքայելը ընդունվել է կուսակցության շարքերը։ Ավարտելով Անդրկովկասյան կոմհամալսարանը, նշանակվել է Հայկական դիվիզիայի առաջին գնդում որպես քաղբեկ։ Մ. Ավետիսյանը մասնակցել է սովետաֆիննական պատերազմին և պարգևատրվել Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով։



Հրազդան քաղաքի կուլտուրայի տունը։



Փողոց Հրազդան քաղաքում

մարտեր են մղվում քաղաքի յուրաքանչյուր փողոցի, յուրաքանչյուր տան համար և այդ մարտերի առջևից գնում էին Միքայելի խիզախ զինվորները։ Դանցիգը գրավելուց հետո 321-րդ հրաձգային դիվիզիայի 74-րդ գնդի հրամանատար Կոնստանտին Սիրոդին Մ. Ավետիսյանի կնոջը նամակ է ուղարկում, ուր գրված է. «Հարգելի Վարդուշ, ստացանք Ձեր նամակը՝ Միքայելի թաղման օրը. մենք նրան թաղեցինք Դանցիգի Սենատի հրապարակում։ Նրա գերեզմանի վրա կանգնեցված է հուշարձան։ Միքայելը իմ ամենամտերիմ ընկերն էր, նա բացառիկ տաղանդի տեր մարդ էր, լավ ընկեր էր, հերոս հրամանատար։ Դուք և Ձեր զավակները պետք է հպարտանաք Միքայելով։ Նա ապրեց ու ընկավ հերոսի մահով»[3]։

Հերոս զինվոր Միքայել Ավետիսյանի անունը սերունդների մեջ անմահ պահելու նպատակով աշխատավորների դեպուտատների Հրազդանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեն 1972 թ. մարտի 14-ին ընդունում է հետևյալ որոշումը։

«Ի նկատի ունենալով, որ մայոր Միքայել Ալեքսանի Ավետիսյանը սկզբից մինչև վերջ ակտիվ մասնակցություն է ունեցել Հայրենական մեծ պատերազմին և հերոսաբար զոհվել է հաղթանակից հինգ օր առաջ, ընդառաջել հրազդանցիների խնդրանքին՝ Հրազդան քաղաքի փողոցներից մեկը անվանել մայոր Մ. Ավետիսյանի անունով։ Այսուհետև այն կոչել Միքայել Ավետիսյանի անվան փողոց»։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետում պահվում են մայոր Միքայել Ավետիսյանի ջերմ, հայրենասիրական շնչով գրած սրտառուչ նամակները։ Ահա Միքայելի ուղարկած վերջին նամակը, որ նա գրել է հաղթանակից հինգ օր առաջ կնոջը։

«Սիրելի Վարդուշ։ Շատ կուզենայի այս պահին քեզ և իմ բալիկներին համբուրել և գնալ մարտի։ Ով է իմանում, ինչ

---

[3] «Հրազդան», 1972, 22 փետրվարի։

[4] Նույն տեղում։

կարող է պատահել։ Ոչ ոք չի կարող զուշակել իր կյանքի վերջին վայրկյանը, թե նա որտեղ և երբ կարող է կտրվել։

Սակայն ես հույսով եմ, որ պետք է մնամ անվնաս, որովհետև ես մտածում եմ ոչ թե իմ կյանքի, այլ թշնամուն հաղթելու մասին։ Վարդո՛ւշ, միշտ գրիր նամակներ, քո ամեն մի նամակը ինձ համար հաղթանակ է։ Սակայն, սիրելիս, եթե որևէ դեպք պատահի, եղիր ինձ հարազատ, հիշիր, ինձ համարիր քո և երեխաների կյանքի համար, Հայրենիքի համար զոհված ազնիվ հայրենասեր։ Հաղթանակն առանց զոհերի չի լինի, նա զոհերով է նվաճվում։

Քո Միքայել

4 մայիսի 1945 թ.»[4]։

Վարշավայից ոչ հեռու գտնվող Բենյամինովոյի համակենտրոնացման ճամբարի հայ ռազմիկների շրջանում ստեղծված (1942 թ. մայիս) հակաֆաշիստական ընդհատակյա հայրենասիրական կազմակերպության ղեկավարներից մեկն է եղել հրազդանցի Ենոք Խաչատրյանը։

Թշնամու դեմ տարած ահեղ մարտերում Ենոքը ծանր վիրավորվում է և գերի ընկնում։ Կարճ ժամանակում իր շուրջն է համախմբում ռազմագերիներին և ստեղծում ընդհատակյա խումբ, կապ հաստատում լեհ պարտիզանների հետ։ Ընդհատակայինները նախապատրաստվում են փախուստի, բայց ձախողվում է։ Էսէսականները ձերբակալում են ընդհատակի ղեկավարներին, այդ թվում և Ենոք Խաչատրյանին։

Գերմանական ֆաշիստների կողմից կախաղան բարձրացվելուց առաջ Ե. Խաչատրյանը կարճ ու հատու արտասանել է. «Մենք սովետական իշխանության և կոմունիստական կուսակցության սաներն ենք, մենք երբեք չենք դավաճանի մեր հավատը։ Մենք կմեռնենք այդ հավատով»[5]։

Պատերազմի ահեղ օրերին հայ ժողովուրդը հատուկ նամակով դիմեց սովետական բանակում գտնվող հայ մարտիկ-

---

5 Մ. Պողոսյան, Հրազդանի այգաբացը, Երևան, 1970, էջ 12—13 (մանրամասն տե՛ս «Հրազդան» թերթ, 1968 թ., 29 հուլիսի)։

ներին, կրկին հիշեցնելով նրանց սրբազան պարտքը։ Ահա նամակի համառոտ տեքստը։

«...Հայ ժողովուրդը հազարամյակներ շարունակ իր սուրը պատյան չի դրել, նա հաղթահարել է շատ տառապանքներ, մինչև որ հասել է այն երջանկությանը, որ բերել է սովետական իշխանությունը, որը մեզ տվել է ազատություն, խաղաղություն, պետականություն, որից մենք զրկված էինք մի քանի դար շարունակ։

Հայ մարտիկներ, ատեցնք թշնամուն ձեր հոգու ամբողջ խորությամբ, թող այդ ատելությունը ձեր կրծքերը դարձնի պողպատակուռ զրահ, ձեր բազուկներին տա անսպառ կարողություն։ Թող նոր ուժով վերակենդանանա ձեր մեջ մեր քաջ նախնիների խիզախությունը»[6]։

Հայ ժողովրդի սրտառուչ նամակը հասավ նրա զավակներին։ Այդ նամակը ոչ միայն հայ մարտիկներին, այլև սովետական հայրենիքի պաշտպաններին ոգեշնչեց նոր հաղթանակների։

Հրազդանի շրջանի Ջրառատ գյուղի բնակիչ Աղասի Մարտիրոսյանը մասնակցել է սովետաֆիննական և ապա Հայրենական մեծ պատերազմներին։ Նա հայկական հրաձգային դիվիզիայի հետ Թերեքից հասել է Բեռլին։ 390-րդ գնդի 2-րդ գումարտակի 3-րդ վաշտի գնդացրորդ Ա. Մարտիրոսյանը իր խիզախության համար պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով, «Խիզախության համար» երկու մեդալով և մի շարք այլ մեդալներով։

Թամանյան դիվիզիայի շարքերում մարտական ուղի է անցել 531-րդ հրետանային գնդի կապավոր Հրազդանցի Աշոտ Ստեփանյանը, որը Կովկասից հասել էր Բեռլին։ Նա պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով և բազմաթիվ մեդալներով։ Այդ նույն դիվիզիայում է կռվել Դերենիկ Վարդանյանը, որը պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով և մեդալներով։

---

6 «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին», Երևան, 1943, էջ 9։

1941 թ. Հրազդանի միջնակարգ դպրոցը նոր էր ավարտել Վարազդատ Ավետիսյանը, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը։ 18-ամյա Վարազդատը կամավոր մեկնեց սովետական բանակ։ Նա 89-րդ Հայկական դիվիզիայի 526-րդ հրաձգային գնդի ականանետային գումարտակի դասակի հրամանատարի տեղակալն էր։ 1942 թ. ուժեղ մարտերի ժամանակ Թերեքի ափերին զոհվեց դասակի հրամանատարը, Վարազդատ Ավետիսյանը իսկույն փոխարինեց նրան և շարունակեց մարտը։ Նրան հաջողվեց կատարել տրված առաջադրանքը։ Վ. Ավետիսյանն իր կատարած սխրագործության համար պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով, սակայն հետագա մարտերից մեկում Ավետիսյանը զոհվեց։ Թերեքի ափին մղած մարտերում քաջի մահով ընկան նաև Սամվել և Սարիբեկ Ղրիմյան եղբայրները[7]։

1943 թ. ապրիլի 4-ին Կրասնոդարի երկրամասի Վերին Զագուկի տարածքում մղած մարտերից մեկում հերոսաբար զոհվեց Հրազդանի զավակ, գվարդիայի կարմիր բանակային Լևոն Սարոյանը։

Հրազդանի շրջանի Զրառատ գյուղի կոլտնտեսական 19-ամյա Նիկոլայ Զարգարյանը պատերազմի դառնությունը ճաշակեց դեռևս խալխին Գոլի մարտերի ժամանակ։ Երիտասարդ, անփորձ զինվորը թրծվեց մարտերի մեջ։ Մարտական ծառայությունների համար նա պարգևատրվեց մեդալներով, դարձավ դասակի հրամանատարի տեղակալ։ Երեք տարի բանակում ծառայելուց հետո, սկսվեց Հայրենական մեծ պատերազմը և նա զորակոչվեց ռազմաճակատ։ Այստեղ էլ հենց նա ընդունվեց կուսակցության շարքերը։

Ն. Զարգարյանը Արևելքից տեղափոխվեց Հյուսիսային Կովկաս։ Ահեղ մարտեր էին գնում Գրոզնիի, Արմավիրի, Գեորգիևսկի շրջաններում։ Այդ մարտերում նա վիրավորվեց և բուժվելուց հետո նորից վերադարձավ ռազմաճակատ։ Այստեղ ծանոթացավ Հունան Ավետիսյանին, Զահան Կարախան-

---

7 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, ՀՊՊԿ ֆոնդ, 325, գործ 1, էջ 12։

յանին, որոնցով նա հպարտանում էր։ Պատերազմի ճանապարհը շատ երկարից Նիկոլայի համար։ Զինվորական շինելից անբաժան ջրառատցին «աշխարհը» տեսավ մահը միշտ աչքի առաջ։ Նա կռվեց Ռումինիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Ավստրիայի ազատագրման համար։ Հայրենիքը բարձր գնահատեց նրա ծառայությունը։ Նա պարգևատրվեց «Փառքի» 2-րդ և 3-րդ աստիճանների շքանշաններով[8]։ Վիեննայում Զարգարյանը ծանր վիրավորվեց և հենակներով վերադարձավ տուն[9]։ Ն. Զարգարյանը երկար տարիներ աշխատել է Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատում։ Այժմ անցել է կենսաթոշակի։

Հայրենական մեծ պատերազմի սկզբներին կարմիր բանակ զորակոչվեց Հրազդանցի Մկրտիչ Մկրտչյանը։ Նա ծառայել է Հայկական հրաձգային 89-րդ Թամանյան դիվիզիայի 467-րդ առանձին գումարտակում, որպես կապի դասակի հրամանատար։ Լեյտենանտ Մ. Մկրտչյանը դիվիզիայի շարքերում Կովկասի մատույցներից հասավ մինչև Բեռլին, վայելեց հաղթանակի բերկրանքը։ Մ. Մկրտչյանի կուրծքը զարդարում էին Հայրենական պատերազմի 2-րդ և 3-րդ աստիճանների, Կարմիր աստղի շքանշանները, 3 մարտական և 6 տարբեր մեդալներ։ Այդ նույն դիվիզիայի 526-րդ հրաձգային գնդի ականանետային գումարտակում իբրև դասակի հրամանատար է աշխատել 1941 թ. կամավոր բանակ մեկնած Հայրապետ Գալստյանը։ Գնդի անցած ուղու հետ նա Թերեքից անցել է Ղրիմ, որտեղ և վիրավորվել է։ Հ. Գալստյանն իր մարտական ծառայությունների համար պարգևատրվել է Հայրենական պատերազմի 3-րդ աստիճանի շքանշանով, «Մարտական ծառայության համար» և 10-ից ավելի այլ մեդալներով։

Հայրենիքի ազատության և անկախության համար մղված մարտերում հերոսաբար ընկան մարքալանցիներ Սըմ-

---

[8] «Հրազդան», 8 մայիսի, 1976։

[9] Տարիներ հետո Կրասնոդարի երկրամասի Վերին Զագուկ գյուղի բնակիչները Ն. Զարգարյանին գրում են, որ ի նկատի ունենալով նրա մարտական սխրագործությունները տեղի դպրոցը կոչել են նրա անունով։

քատ Մարգարյանը, Հայկարամ Խաչատրյանը, ութարբեկյանցիներ Ավագ Խաչատրյանը, Անդրանիկ Հարությունյանը։ Անդրանիկ Հարությունյանը զոհվել է 1945 թ. մայիսի 2-ին[10]։

Կովկասի համար մղված մարտերում զոհվեց գվարդիական զորամասի գնդացրորդ Նիկողոս Հակոբյանը։ Վորոնեժի ուղղությամբ մղված մարտերում էլ հերոսաբար զոհվեց հրաձգանցի Կարապետ Ադամյանը։

Տուապսեի համար մղվող մարտերում զոհվեց ջրառատցի Մանվել Թովմասյանը։ Հերոսաբար զոհվեցին նաև հրաձգանցիներ Ցոլակ Գրիգորյանը, Սեդրակ Խաչատրյանը, Հովհաննես Կարագյոզյանը, Հովհաննես Մկրտչյանը, Աղվան Մարկոսյանը, կրտսեր լեյտենանտ Սուրեն Գրիգորյանը, Համազասպ Հովհաննիսյանը։ Միայն հայկական հրաձգային 89-րդ Թամանյան դիվիզիայի շարքերում կռվում էին ավելի քան 120 հրաձգանցիներ[11]։

Հրաձգանի զավակներից Հայրենական պատերազմի մասնակիցներ են լեյտենանտ Պատվական Ալեքսանյանը, տավաջ սերժանտներ Սուրեն Ավետիսյանը, Սուրեն Գրիգորյանը, շարքայիններ Սուրեն Կիրակոսյանը, Ասքանազ Խաչատրյանը, Արամ Հարությունյանը, Վանիկ Խաչատրյանը, Հմայակ Ստեփանյանը և ուրիշներ։ Նրանք մասնակցել են սովետաֆիննական պատերազմին, Խասանի, Խալխին Գոլի, Պորտ Արտուրի, Բեսարաբիայի և Մանջուրիայի համար մղվող մարտերին։

Ջրառատցի Արամայիս Նուրիջանյանը 1938 թ. զորակոչվել է բանակ և մարտական ծառայությունը կատարել է Բելոռուսիայում։ 1939 թ. ավարտել է գնդի հրամանատարական դպրոցը, ստացել սերժանտի կոչում և 24-րդ հեծելազորային դիվիզիայի շարքերում մասնակցել է արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը, իսկ այնուհետև՝ սովետաֆիննա-

---

10 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, ՀՊՊԿ ֆոնդ 325, գործ 1, էջ 14։

11 Նույն տեղում։

կան պատերազմին իբրև փոխդասակի հրամանատար, այդտեղ էլ ընդունվել է կուսակցության շարքերը։

1941 թ. երբ սկսվեց Հայրենական պատերազմը, Ա. Նուբիջանյանը սովորում էր սպայական դպրոցում։ Դպրոցն ավարտելուց հետո լեյտենանտի կոչում ստացած մեկնեց առաջավոր գիծ՝ իբրև ծանր գնդացրային դասակի հրամանատար։ Մի քանի անգամ վիրավորվելուց և ապաքինվելուց հետո կրկին մեկնել է ռազմաճակատ։ Պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով, «Արիության համար» և բազմաթիվ այլ մեդալներով։

Աթարբեկյանցի Թևոս Մկրտչյանը իր երկու եղբայրների՝ Սուրենի և Աղիբեկի հետ մեկնեց ռազմաճակատ։ Թ. Մկրտչյանը նշանակվեց 26-րդ օդադեսանտային գվարդիական հրաձգային գնդի դասակի հրամանատար։ Մարտերից մեկում Թ. Մկրտչյանը գոհվեց և թաղված է Վիսլայի ափին եղբայրական գերեզմանատանը[12]։

Ջրառատցի Պատվական Բեջանյանը 1940 թ. ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը, զորակոչվում է բանակ։ Ծառայել է Մինսկում, Լվովում, Կրոնշտադտում, Լենինգրադում, Ռիգայում և ապա Կալինինի մարզում։ Պ. Բեջանյանը կռվել է նաև Բրեստում։ Նա Բրեստի ամրոցի համար մղված մարտերում 5 օր ծանր վիրավոր, անօգնական վիճակում մնացել է ամրոցի պատի վառարաններից մեկում և ապա ազատվել։ Ահա թե ինչ է գրում մորը.

«Բարև սիրելի մայրիկ։ Նամակով իմացա, որ դու իմ վերքերի համար շատ ես մտածել, բայց իզուր, որովհետև ես հիմա արդեն առողջ եմ։ Ճիշտ է սկզբում շատ չարչարվեցի, տանջանքներ շատ կրեցի, բայց արդեն ամեն ինչ անցել է։ Մամա ջան, ես արդեն հրամանատար եմ։ Մամա ջան մինչև վիրավորվելս ես Բրեստում էի (որ հիմա մեր ձեռքում չէ) կռվում, փամփուշտներս վերջացան, իմ 200 զինվորներից 2

---

12 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, ՀՊՊԿ ֆոնդ, 325, գործ. 1, էջ 15։

հոգի մնաց, որից մեկը ես։ Կռվի ժամանակ թշնամուց էլ քիչ «մնաս-բարով» չասացին։

Մամա ջան, նկարիս վրա տեսնո՞ւմ ես Կարմիր աստղի շքանշանը։ Մ. Ի. Կալինինը իր ձեռքով է ամրացրել կրծքիս՝ շատ զինվորներ գերի վերցնելու համար։ Մայրիկ ջան, շատ մի մտածիր, թշնամին կջախջախվի և մենք տուն կվերադառնանք»[13]։

Պ. Բեջանյանը երկար տանջանքներ, զրկանքներ կրելուց հետո, հասնելով իր գործամասը, շարունակում է պայքարի խիզախ ուղին։ Փառքի 2-րդ, 3-րդ աստիճանների, Կարմիր աստղի երեք շքանշանները, «Արիության համար» և այլ բազմաթիվ մեդալներ զարդարում էին Պատվական Բեջանյանի կուրծքը։

Պ. Բեջանյանը մասնակցեց Մերձբալթիկայի, Լեհաստանի ազատագրության համար մղված մարտերին։ Քսաներեքամյա ավագ լեյտենանտը գվարդիականի կոչման էր արժանացել, նշանակվել հրետանային մարտկոցի հրամանատար[14]։ Պատվականը զոհվեց 1945 թ. մարտի 27-ին, երբ հաղթանակին մնացել էր մեկ ու կես ամիս։

Հայրենական պատերազմի ակտիվ մասնակիցներից են Հրազդանցի Երեմ Խաչատրյանը, Դուրգեն Պողոսյանը, Խաչիկ Խաչատրյանը, Առաքել, Պապին, Գևոնդ և Վանուշ Գալստյանները, Արամայիս Եղիազարյանը, Վարազդատ Նիկողոսյանը, Երվանդ Զաքարյանը, Գարսևան Մարգարյանը, Հարություն Մինասյանը, Յակով Նեներովը, Ռուբեն Ներսիսյանը, սնդապետ Գեորգ Ավետիսյանը, Աթաբեկյանից Խաչիկ Գալստյանը, Ջրառատից Սերյոժա Կարապետյանը, Աբրամ Գասպարյանը և ուրիշները։

Այսպիսով, Հայրենական պատերազմի տարիներին ինչպես հայ ժողովուրդը, այդ թվում նաև Հրազդանցիները պատվով կատարեցին իրենց պարտքը Հայրենիքի հանդեպ։ Հրազդանցի 2150 ռազմիկներ ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների զավակ-

---

13 Նույն տեղում։

14 «Հայրենիքի ձայն», 12 մայիսի, 1982, № 20։

ների հետ անձնավիրաբար պաշտպանեցին հայրենիքի ազատությունն ու անկախությունը, նրանցից 860-ը չվերադարձան՝ զոհվեցին, իսկ կոլտնտեսային հրաղդանցիները թիկունքում անդուլ կերպով աշխատեցին ռազմաճակատին անհրաժեշտ ամեն ինչով ապահովելու, թշնամու դեմ հաղթանակ տանելու համար։

Հայրենական պատերազմի ծանր տարիներին աշխատավոր կոլտնտեսականները կրելով մեծ դժվարություններ, անձնազոհ կերպով աշխատեցին «ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով։ Ինչպես ռազմաճակատն, այնպես էլ թիկունքն ապահովեցին պարենամթերքով։ Այդ տարիներին դրսևորվեցին կոլտնտեսային կարգերի ուժն ու կենսունակությունը։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՁԴԱՆԸ

Սովետական Միության կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության լենինյան ազգային քաղաքականության, ՍՍՀՄ ժողովուրդների միջև հաստատված բարեկամության ու սերտ համագործակցության շնորհիվ Սովետական Հայաստանի արդյունաբերությունն արագ կերպով վերականգնվեց, վերակառուցվեց և զարգացման նոր ուղու վրա կանգնեց։

Արտադրողական ուժերի նոր և արդյունավետ տեղաբաշխման շնորհիվ հնարավորություն ստեղծվեց յուրացնելու հանրապետության տարածքում գտնվող բնական հարստությունները և արագացնելու ընդլայնված վերարտադրության տեմպերը։ Սովետական Հայաստանը ապրեց սոցիալ-տնտեսական մեծ վերափոխումներ, արդյունաբերության զարգացման շնորհիվ ագրարային հետամնաց երկրից դառնալով ինդուստրիալ հզոր հանրապետություն։

Դեռևս նախապատերազմյան տարիներին արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ բարձրացավ 78 տոկոսով։ Բարձրացավ աշխատավորության նյութական և կուլտուրական մակարդակը։ Ամրապնդվեց բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը։

Նախապատերազմյան տարիներին կառուցված արդյունաբերական ձեռնարկությունների շնորհիվ հանրապետությունում զարգացան արդյունաբերության մի շարք նոր ճյու-

ղեր՝ քիմիական, մեքենաշինական, շինանյութերի արտադրության։ Արդյունաբերության զարգացումը խթանեց Հանրապետության հին քաղաքների խոշորացմանը և նոր քաղաքների և քաղաքատիպ ավանների առաջացմանը և զարգացմանը։

Ստալինյան տարիներին Հանրապետությունում ստեղծվեց բազմաճյուղ արդյունաբերություն, իսկ վերջին քսան տարում զարգացան արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են էլեկտրոնիկան, էլեկտրատեխնիկական սարքաշինությունը, ճշգրիտ մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը։ Հանրապետությունում արագ տեմպերով աճեց նաև արդյունաբերաարտադրական անձնակազմը։ Բնականաբար, խոշոր չափերով բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը։

Հայաստանի արդյունաբերության զարգացման բնագավառում Ստալինյան տարիներին ակնառու են ճյուղային կառուցվածքի դրական փոփոխությունները, արդյունաբերության տարածքային տեղաբաշխման միակողմանիության հաղթահարումը և աշխատանքի որակական ցուցանիշների բարելավումը։

Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղաբաշխման հետևողական կենսագործման, տեղական հումքային և էներգետիկ պաշարների օգտագործման շնորհիվ Սովետական Հայաստանում ստեղծվեց միութենական արդյունաբերության հետ փոխադարձորեն կապված, ժամանակակից առաջավոր տեխնիկայով հագեցված և մասնագիտացված բազմաճյուղ արդյունաբերություն։

Հանրապետության ժողովրդական տնտեսության և քաղաքային բնակչության աճը, հասարակության սոցիալական կառուցվածքի մեծ տեղաշարժերը, բանվոր դասակարգի և գյուղացիության քանակական և որակական փոփոխությունները, մասավորականության, հատկապես գիտատեխնիկական մասավորականության արագ աճը խոշոր հաջողություններ բերեցին Հայաստանի աշխատավորությանը։

Մեր երկրում քաղաքների առաջացման ու զարգացման

բարձր տեմպերը ձեռք են բերվում երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պայմաններում։

Կուսակցության պահանջն է՝ արդյունաբերությունը տեղաբաշխել այն հաշվով, որ կառուցվող ձեռնարկությունները ավելի մոտ լինեն հումքի աղբյուրներին և զարգացնել արդյունաբերությունը ոչ միայն քաղաքներում, այլև խոշոր գյուղերում։ Այդ տեսակետից ակնառու է Սովետական Հայաստանի փոքր և միջին քաղաքների զարգացման աշխարհագրության փոփոխությունը։ Դրանցից շատերը, որոնք մի ժամանակ գտնվում էին «խուլ» տեղում, այժմ հայտնվեցին նոր կառուցված երկաթուղիների (Աբովյան, Զարենցավան, Հրազդան, Սևան, Իջևան) գազամուղերի, էլեկտրական գծերի (Սպիտակ, Արարատ, Հոկտեմբերյան, Դիլիջան, Արտաշատ) օգտակար հանածոների (Ալավերդի, Քաջարան, Ղափան, Արթիկ) բուժիչ հանքային ջրերի (Ջերմուկ) շրջաններում։ Բնականաբար, բարձրացավ այս քաղաքների ու մի շարք քաղաքատիպ ավանների (Անի-Պեմզա, Ախթալա, Ագարակ, Դաստակերտ, Թումանյան, Պեմզաշեն, Շամլուղ, Մասիս) տարողունակությունը, նոր արտադրության ստեղծման իմաստով, ապահովելով աշխատունակ բնակչության, հատկապես երիտասարդության լրիվ զբաղվածությունը։

* * *

Սևանը ներկայացնում է մեծ ջրամբար, ծովի մակերևույթից մոտ երկու հազար մետր բարձրության վրա, որտեղ թափվում է շուրջ 30 գետ և գետակ և սկիզբ է առնում միայն Հրազդանը։ Դիտնականները շատ վաղուց են մտածել օգտագործել Սևանի ջուրը, Արարատյան դաշտի ոռոգման համար։

Սովետական իշխանության տարիներին, ավարտվեց Սևան-Հրազդան կասկադը, Հրազդան գետի վրա կառուցվեցին 6 հիդրոկայաններ, որոնցից ամենաբարձրը՝ Սևանի ստորգետնյա հիդրոկայանն է։ Այն գտնվում է լճի ափին, կատարում է Սևանի ջրերի ծախսման կարգավորիչի և ավ-

տոմատ «վերահսկիչի» դերը։ Ջուրն անցնելով այդ կայանի ագրեգատների միջով, հասնում է հաջորդ Աթաբեկյանի կայանի դերիվացիոն կառույցները, որտեղ և տուրբինների թիակներին է թափվում 130 մ. բարձրությունից։ Այսպիսով ջուրը թափվելով թունելի մեջ և ապա նորից ջրանցքը, կատարում է 300 մետրանոց թռիչք կասկադի ամենախոշոր հիդրոկայանի՝ Գյումուշի տուրբինների մեջ։ Կասկադի հաջորդ աստիճանը Արզնի հիդրոկայանն է, որի շենքը կերտված է ժայռի մեջ։

Սևան-Հրազդան կասկադի շնորհիվ ստացվեց ոչ միայն հիդրոէներգիա, այլև Հայաստանում զարգացան արդյունաբերական մի շարք ճյուղեր, կենդանություն ստացան տասնյակ հազարավոր հեկտար տարածություններ, ստեղծվեցին սոցիալիստական նոր քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ։

Շինարարների կոլեկտիվը 1955 թ. սկսած իր ուժերը կենտրոնացրեց Աթաբեկյանի հիդրոէլեկտրակայանի կառուցման շուրջը։ Բավական է նշել, որ կատարվեց 950 հազար խորանարդ մետր հողային աշխատանք, որից 200 հազար խորանարդ մետրը՝ թունելային։ Կատարվեց նաև 15 կմ երկարությամբ, շուրջ 140 հազար խորանարդ մետր երկաթբետոնային աշխատանք։

Շինարարները, մոնտաժողները, հիդրոմոնտաժողները հերոսական գործ արեցին ագրեգատներ ստեղծելու, սարի թեքությունից իջնող խողովակաշարը, կայանային շենքը և այլ օբյեկտներ կառուցելու ուղղությամբ։ Հիդրոէլեկտրակայանի շինմոնտաժային աշխատանքների և սարքավորումների վրա ծախսվեց 2,5 միլիոն ռուբլի։ Լավագույն աշխատանքով առանձնապես աչքի ընկան վարպետներ Ա. Մանուչարյանը, Խ. Օհանջանյանը, բրիգադիրներ Վ. Մինասյանը, Վ. Ռուսովը, բուլդոզերավար Մ. Ներսիսյանը, շինմասի պետեր Ն. Ելիսեևը, Լ. Ջավարյանը, աշխղեկներ Հ. Նազարյանը, Դ. Կուզիկյանը, բանվորներ Ս. Գրիգորյանը, Վ. Մանուկյանը, Ս. Դանիելյանը, Ս. Ավդալյանը և շատ ուրիշներ[1]։

1959 թ. նոյեմբերի 5-ին հանրապետության կարևոր

---

1 «Լենինի դրոշով», 1959, 5 նոյեմբերի։

էներգետիկ բաղաներից մեկի՝ Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի շահագործման հանձնման առթիվ շրջանի աշխատավորները հավաքվեցին միտինգի։ Միտինգի վերջում ընդունվեց նամակ ուղղված ՍՄԿԿ Կենտկոմին ու ՍՍՀ Մինիստրների խորհրդին։

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի շինարարությունում առավել աչքի ընկած աշխատողները ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1959 թ. դեկտեմբերի 8-ի հրամանագրով պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով։ Լենինի շքանշանով պարգևատրվեցին հորատողների բրիգադավարներ Մնացական Մանուկյանը, Աղվան Աղաջանյանը, Ժորա Թադևոսյանը, Վանուշ Մինասյանը, բետոնագործների բրիգադավարներ Վանուշ Սաղաթելյանը, Շավարշ Գևորգյանը, շինմասի պետ Նիկոլայ Ելիսեևը, ավագ էքսկավատորավար Վորոնցով Մելքոնյանը, բետոնագործուհի Աղավնի Ներսիսյանը, բուլդոզերավար Մաքսիմ Ներսիսյանը, հիդրոկայանի շինարարության վարչության գլխավոր ինժեներ Սիսակ Սարգսյանը։ 27 հոգի պարգևատրվեցին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, 26 հոգի՝ «Աշխատանքային արիության համար» և 20 հոգի՝ «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով[2]։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1960 թ. մարտի 31-ի հրամանագրով Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի շինարարների կոլեկտիվից 66 հոգի պարգևատրվեցին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրերով։

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի ենթակայանը բարձր լարման հաղորդման գծով Հայաստանի և Անդրկովկասի էներգոսիստեմները կապում է իրար հետ։ Քանի որ հանրապետության ժողովրդական տնտեսության համար հիմնական էլեկտրաէներգիան արտադրում են ջերմային կայանները, ապա Սևան-Հրազդան կասկադի և Աթարբեկյանի հիդրոէլեկ-

---

2 Նույն տեղում, 13 դեկտեմբերի։

տրակայանները հանդիսանում են էներգետիկայի համար ռեզերվներ և հիմնականում օգտագործում են ոռոգման համար նախատեսված ջուրը։

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանը լրիվ ավտոմատացված կայան է։ Նրա շինարարության ու շահագործման գործում իրենց լավ աշխատանքով աչքի ընկան ինժեներներ Գագիկ Վիրաբյանը, Մարտիկ Քոչարյանը, էլեկտրամոնտյորներ Վահան Ավագյանը, Անդրանիկ Նիկողոսյանը, բանվորներ Բորիս Շուբինը, Հրաչիկ Պողոսյանը, Խորեն Խաչատրյանը, Սերյոժա Խաչատրյանը և ուրիշներ։ Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանին խոշոր ծառայություններ են մատուցել նաև աշխատանքի վետերան, էլեկտրական սարքերի ու սարքավորումների հմուտ մասնագետ Վ. Մովսեսյանը, ավտոմատ սարքերին հմուտ տիրապետող ամուսիններ Նիկոլայ Տարասովը և Տատյանա Մոտորնայան, հերթապահ ինժեներներ Իվան Կոլլովը, Նելլի Մհերյանը, էլեկտրամեխանիկներ Կարլեն Գաբրիելյանը, հիդրոարտադրամասի վարպետ Ս. Մխիթարյանը, փականագործ Սիմյոն Կուզնեցովը և ուրիշներ։

ՍՍՀՄ էներգետիկայի և էլեկտրիֆիկացիայի արդյունաբերության մինիստրության «Հատուկ վերանորոգում» ձեռնարկությունը Հրազդանում ստեղծվել է 1975 թ.։ Ձեռնարկությունն ունի յոթ արտադրամաս, որոնցից երկուսը՝ Երևանում և հինգը՝ Կիրովականում ու Հրազդանում։ Բացի այդ, գործում են նաև փայտամշակման, բետոնախառնման արտադրամասերը։ 1980 թ. ձեռնարկության շինմոնտաժային աշխատանքների և սարքավորումների համար հատկացվել է 100 հազար ռուբլի։ «Հատուկ վերանորոգում» ձեռնարկությունում աշխատում են 345 բանվոր-ծառայողներ։

Ձեռնարկությունը 10-րդ հնգամյակի առաջադրանքները ավարտել է 1980 թ. դեկտեմբերի կեսերին։ Ձեռնարկության կոլեկտիվը իրեն կցված կոլտնտեսությանը շեֆական լավ օգնություն ցույց տալու համար շահել է ՀԿԿ Հրազդանի շրջկոմի և ժողովրդական դեպուտատների Հրազդանի քաղաքային սովետի փոխանցիկ կարմիր դրոշը։

Հրազդանի արդյունաբերական դեմքը ձևավորվեց վերջին հնգամյակներում։

Հրազդանում խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը պայմանավորված է հետևյալ կարևոր գործոններով։

1. Մայրաքաղաք Երևանին մոտ լինելը։

2. Երևան-Սևան երկաթուղագծի առկայությունը։

3. Երևան-Թբիլիսի և Երևան-Բաքու ավտոճանապարհին մոտ գտնվելը։

4. Արժեքավոր հանքային հանածոներ ունենալը։

5. Բանվորական աղատ ուժի առկայությունը։

6. Էներգիայի աղբյուրների առկայությունը[3]։

10-րդ հնգամյակում Հրազդանի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 9-րդ հնգամյակի համեմատությամբ կրկնապատկվել է։

Այսօրվա Հրազդանը դարձել է հանրապետության գլխավոր էներգետիկ բազան։ Դրա սկիզբը դրվեց 1959 թ. Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի շինարարությամբ[4]։

1962 թ. սկսվեց Հրազդանի ջերմաէլեկտրակենտրոնի շինարարությունը։ 1966 թ. դեկտեմբերի 22-ին այն տվեց առաջին հոսանքը։

1972 թ. ավարտվեց բարձր լարման երկճյուղ հաղորդագծի շինարարությունը, որը Հրազդանի ջերմաէլեկտրակայանի ագրեգատները կապում է Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանից ձգվող Գուգարքի հոսանքալարին։ Այս կառույցներում զգալի ավանդ են ներդրել շինվարչության պետ Երվանդ Գրիգորյանը, տեղամասի պետեր Ռազմիկ Թումանյանը, Վոլոդյա Գրիգորյանը, զոդողներ Սամվել Հակոբյանը, Ալեքսեյ Նովիկովը, Սուրեն Թորոսյանը, տուրբինային արտադրամասի պետ Վիտալի Ֆեոդորովը, հերթապահ ինժեներ Սերգեյ Նագլաղյանը և շատ ուրիշներ։

1967 թ. շահագործման հանձնվեցին 50 հազար կիլո-

---

3 Օ. Ս. Թումոյան, Հրազդանի շրջանը, Երևան, 1981, էջ 23—24։

4 «Հայաստանի արդյունաբերություն», 1971, 5, էջ 33։

Նորակառույց շենք Հրազդանում։



Միջնակարգ դպրոց Հրազդանում

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

վատ կարողություն ունեցող առաջին և երկրորդ, իսկ 1969 թ. հոկտեմբերին՝ 3-րդ, 1970 թ. հունվարի 11-ին՝ 4-րդ ագրեգատները։ 1969 թ. վերջերին Հրազդանի ջերմաէլեկտրակայանը հասավ նախագծային կարողության։ Բացի այդ, շրջանի և ապա քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները, կոմունալ և կենցաղային օբյեկտները ստանում են մեկ ժամում 320 տոննա շոգի։

Ջերմաէլեկտրակայանի կառուցում կատարվել են շինարարական խոշոր աշխատանքներ 297 հազար խորանարդ մետր հողային, 30 հազար խորանարդ մետր բետոնային, 5 հազար խորանարդ մետր քարային աշխատանքներ։ Շինարարության ընթացքում ծախսվել է 1600 տոննա մետաղե կառուցվածք[5]։

1970 թ. սկզբից Հրազդանի ջերմաէլեկտրակայանը սկսեց աշխատել ամբողջ հզորությամբ, տալով տարեկան երկու միլիոն կիլովատտ-ժամ էլեկտրաէներգիա։ Ինտերնացիոնալ ուժերով կառուցված Հրազդանի ջերմաէլեկտրական կենտրոնի շենքի ճակատին դրված է. «Կառուցված է մեր մեծ հայրենիքի 14 ազգությունների զավակների ձեռքով»։

1966 թ. սկսվեցին Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի շինարարական աշխատանքները։

1972 թ. հոկտեմբերին գործարկվեց Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի առաջին բլոկը՝ 200 հազար կիլովատտ կարողությամբ։ Այն տարեկան տալիս է ավելի քան մեկ միլիարդ կիլովատտ-ժամ էլեկտրաէներգիա, այսինքն՝ այնքան, որքան Հանրապետության բոլոր հիդրոկայանները միասին տալիս էին 1969 թ.։

Հանրապետության արդյունաբերության օրեցօր աճող պահանջները բավարարելու նպատակով կառուցվեցին ջերմաէլեկտրակայաններ, որոնք 1960-ական թվականներին հանրապետության էներգետիկայի հաշվեկշռում ավելի մեծ տեղ գրավեցին, կազմելով շուրջ 80 տոկոսը։ Դրա շնորհիվ ներկայումս Սևանից ջուրը բաց են թողնում բացառապես

---

5 «Հրազդան», 1966, 23 դեկտեմբերի։

տոգման նպատակով։ Մոսկվայից, Տաշքենդից, Բաքվից, Դոնեցկից, Կրասնոդարից, Օմսկից, Իրկուտսկից և երկրի այլ քաղաքներից ամեն տարի աշխատանքի են հրավիրվել փորձված էներգետիկներ։ Նրանցից շատերը մշտական բնակություն են հաստատել Հրազդանում և իրենց փորձն ու գիտելիքները մեծ սիրով հաղորդում են երիտասարդներին։ Դրանցից են արտադրամասի պետեր Ի. Անչուկովը և Վ. Սոկոլովսկայան, կաթսատուրբինային արտադրամասի պետի տեղակալ Ի. Բոյանովը, ինժեներներ Ն. Կուզնեցովը, Յու Իոնովը, Լագուտինը և ուրիշներ։

Նովոկուզնեցկից Հրազդանի ՊՇԷԿ մշտական աշխատանքի եկավ էլեկտրիկ Լյուբով Լիպատովան։ Լ. Լիպատովան նվաճեց ողջ կոլեկտիվի սերն ու համակրանքը։

Անդրկովկասի միացյալ էներգետիկ համակարգի Հրազդանի այս հանգույցի կառուցումը իրականացվեց «Հիդրոէներգոշին» տրեստի «Կովկաս-էներգոմոնտաժի» Հրազդանի վարչության, «Հիդրոէներգոմոնտաժի» Անդրկովկասյան բաժանմունքի և ուրիշ կազմակերպությունների կոլեկտիվների անձնվեր աշխատանքի շնորհիվ։ Կառուցողների հերոսական տարեգրության մեջ վառ էջեր գրեցին Մայիս Սահակյանի, Վասիլ Օսյակովսկու, Լևոն Հարությունյանի, Ալեքսանդր Դուպլյանսկու և ուրիշների ղեկավարած մոնտաժային բրիգադները, շինարարները, էլեկտրաղողողները, բետոնագործները։

Հրազդանի նորակառույց պետական շրջանային էլեկտրակայանը աչքի է ընկնում ոչ միայն իր հզորությամբ, այլև ինքնատիպ կառուցվածքով։ Սովետական Միությունում առաջին անգամ Հրազդանում իրականացվեց փակ ջրահովացման համակարգ։ Դրա համար կառուցվեց 124 մ. բարձրության աշտարակ, որտեղ և կատարվում է ջրի հովացումը, նվազեցվում ջրի անտեղի կորուստը։ Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի ագրեգատի շահագործման բոլոր պրոցեսները գրեթե ավտոմատացված են, կառավարման վահանակները հագեցվում են բարձր «զգայնության» և ճշգրիտ սարքերով։ Զգալիորեն ցածր է էլեկտրաէներգիայի ինքնար-

ժերը։ Հրազդանի էլեկտրաշինարարներին օգնություն են ցույց տվել մեր լայնածավալ երկրի մի քանի տասնյակ ձեռնարկություններ և կազմակերպություններ։ Այսպես, օրինակ, Հրազդանի էլեկտրակայանի առաջին բլոկի հսկա կաթսան պատրաստել են Տագանրոգի «Կրասնի կոտելշչիկ» գործարանի բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները։ Լենինգրադի «Էլեկտրասիլայի» կոլեկտիվի ուղարկած գեներատորը փայլուն քննություն անցավ թե փորձարկումների և թե բլոկի գործարկման ժամանակ։

1973 թ. պլանները կատարելու համար 1974 թ. մարտի 29-ին Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի տուրբինի մեքենավար Ալբերտ Բաղդասարյանը, էներգոբլոկի մեքենավար Անատոլի Զինչենկոն պարգևատրվեցին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով[6]։

Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանը կառուցողներից առավել աչքի ընկան «Կովկասի էներգոմոնտաժ» Հրազդանի տեղամասի փականագործների բրիգադները, բրիգադավարներ սոցիալիստական աշխատանքի հերոս Յուրի Տորոբցևը, Վլադիմիր Ֆուրմանովը, Իվան Վասիլիցանը, Զիադին Վելիևը, Վոլոդյա Խաչատրյանը, Քաջիկ Շաբոյանը, զոդողներ Սամվել Հակոբյանը, Յուրի Սարգսյանը, Մարիա Մասլովան և ուրիշներ։

ՊՇԷԿ-ի բաղմազգ, համերաշխ հզոր կոլեկտիվը 1974 թվականից իր ձեռքում է պահում ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԿ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշը[7]։

Չորրորդ բլոկի կառուցմանը մասնակից են «Հայէներգոշին» և «Կովկասէներգամոնտաժի» Հրազդանի տեղամասերի, Լենինգրադի «Հիդրոէլեկտրամոնտաժ» տրեստի մասնագիտացված վարչության Անդրկովկասյան տեղամասի, Ալի Բայրամլիի վարչության Հրազդանի տեղամասի կոլեկտիվները։ Նրանք ՊՇԷԿ-ի կայանի առաջին հերթը դերազանց

---

6 «Հրազդան», 1974, 5 մայիսի։

7 «Հրազդան», 1975, 13 հուլիսի։

գնահատականով են հանձնել և հիդրոլիտների համամիութենական մրցույթում շահել են որակի համար սահմանված պետական 2-րդ կարգի դիպլոմը։ ՍՍՀՄ կազմավորման առթիվ ծավալված սոցիալիստական մրցության շնորհիվ, հրազդանցիները շահագործման հանձնեցին ՊՇԷԿ-ի 3-րդ, իսկ 1974 թ. օգոստոսի 4-ին 4-րդ էներգոբլոկը և կայանն սկսեց աշխատել ամբողջ կարողությամբ։

ՊՇԷԿ-ի 4-րդ էներգոբլոկի հաջող փորձարկման առթիվ ստացվել է հետևյալ հեռագիրը.

Թանկագին ընկերներ,

ՀԿԿ Կենտկոմը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանների բանվորներին, ինժեներատեխնիկական աշխատողներին, շինարարության բոլոր մասնակիցներին ջերմորեն շնորհավորում են աշխատանքային մեծ հաղթանակի՝ 210 հազար կիլովատտ հզորությամբ 4-րդ էներգոբլոկը սահմանված ժամկետից երկու ամիս շուտ շահագործման հանձնելու և այն միացյալ էներգոսիստեմին միացնելու առթիվ։ Հրազդանի ՊՇԷԿ-ը ավելի քան մեկ միլիոն կիլովատտ հզորություն ունեցող էլեկտրակայանների շարքը մտավ[8]։

Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի շինարարությունում առավել աչքի ընկած 31 բանվորներ և ինժեներատեխնիկական աշխատողներ պարգևատրվեցին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով։ Դրանց թվում էին արտադրամասի պետ Ֆրունզիկ Այվազյանը, մեքենավար Ալբերտ Բաղդասարյանը, վարչության գլխավոր տեխնոլոգ Մկրտիչ Բիշարյանը, Գրիշա Գևորգյանը, Նիկոլայ Տամոժնիկովը. և ուրիշներ։

9-րդ հնգամյակում առավել լավ աշխատեց Հրազդանի պետական շրջանային ջերմաէլեկտրակայանի կոլեկտիվը. 5 տարում արտադրվել է մոտ 20 միլիարդ կիլովատտ-ժամ էլեկտրաէներգիա, տնտեսվել է մեկ միլիոն ռուբլու վառելանյութ։

Էլեկտրաէներգիայի արտադրության արդյունավետության բարձրացման, էներգետիկ նոր սարքավորումների յու-

---

[8] «Հրազդան», 1974, 6 օգոստոսի։

բացման գործում ձեռք բերած հաջողությունների և 9-րդ հինգամյա պլանի առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համար Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանը պարգևատրվեց «Պատվո նշան» շքանշանով[9]։

ՊՇԷԿ-ի մոնտաժը կատարեցին սովետական լավագույն էլեկտրամոնտաժողները. շեֆ-մոնտաժը իրականացրեց հունգար մասնագետների բրիգադը՝ ինժեներ Յանոշ Բոդաշի ղեկավարությամբ։

Մոսկվայում 1973 թ. ապրիլին ամփոփվեցին արտադրական շենքերի կառուցման որակի համամիութենական ստուգատես-մրցույթի արդյունքները։ ՍՍՀՄ Պետշինը և ճարտարապետների միությունը շինարարական ինդուստրիայի վերջին խոսքով կառուցված Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի շենքն արժանացրին համամիութենական 3-րդ կարգի դիպլոմ[10]։ Այս կառույցի հեղինակն է Է. Ա. Պոլյանսկին։

Այսօրվա Հրազդանը վեր է ածվել հանրապետության գլխավոր էներգետիկական բազայի։ Առաջինները եղան 1959 թ. շահագործման հանձնված Աթարբեկյանի և 1965 թ. Գյումուշի էլեկտրակայանները։ Հետագա տարիներին շահագործման հանձնվեցին Հրազդանի ջերմաէլեկտրակայանը և Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանը։ Այս կառույցների շնորհիվ Հրազդանը դարձավ խոշոր էներգետիկական բազա Անդրկովկասի մասշտաբով[11]։

Էլեկտրակայանում աշխատում են 204 ինժեներատեխնիկական աշխատողներ և 902 բանվորներ։ Կոլեկտիվի անձնակազմի 35—40 տոկոսը ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, արդրբեջանցիներ, թաթարներ, հրեաներ և այլ ազգությունների ներկայացուցիչներն են։

Հրազդանի «Պատվո նշանի» շքանշանակիր ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի անվան ՊՇԷԿ-ին արտադրական

---

9 «Հրազդան», 1973, 20 հունվարի։

10 «Հրազդան», 1973, 3 ապրիլի, № 34։

11 «Հայաստանի արդյունաբերություն», 1971, № 5, էջ 33։

բարձր ցուցանիշների և աշխատավորների կոմունիստական դաստիարակության աշխատանքում մեծ հաջողությունների հասնելու համար շնորհվել է «Կոմունիստական աշխատանքի ձեռնարկություն» կոչումը[12]։

Այս կոլեկտիվում արտադրության կատարելագործումն ու աշխատանքի կազմակերպման կառավարումը անընդհատ շարունակվում է։ Գիտատեխնիկական առաջընթացը ձեռնարկության զարգացման հիմնական ուղղությունն է։ Այս կայանի կոլեկտիվը հանրապետության առաջավոր ձեռնարկություններից է և օրինակ է ծառայում արտադրության ամենաբարձր արդյունավետության և աշխատանքի որակի բարելավման համար մղվող պայքարում։

Էլեկտրակայանի լավագույն ռացիոնալիզատորներն են ջերմային ավտոմատիկա արտադրամասի փականագործ Աբենտինո Վարդանյանը, կենտրոնական վերանորոգման արտադրամասի փականագործ Անատոլի Բուրյակինը, էլեկտրական արտադրամասի ավագ վարպետ Սերգեյ Նագդալյանը։ Միայն 10-րդ հնգամյակում ներդրվել են 940 ռացիոնալիզատորական և նորարարական առաջարկներ, որոնք տվել են 1,5 միլիոն ռուբլու տնտեսական օգուտ։

10-րդ հնգամյակի տարիներին արտադրվել է 27 միլիոն կիլովատտ-ժամ էլեկտրաէներգիա և միլիոն ու կես հեկտակալորիա ջերմություն, տնտեսվել է 42 հազար տոննա պայմանական վառելանյութ։ Պլանից դուրս էլեկտրակայանը արտադրել է 163 միլիոն կիլովատտ-ժամ էլեկտրաէներգիա։ Էլեկտրակայանի զարգացման հեռանկարները կապված են ջերմային ծանրաբեռնումը ավելացնելու մինչև 340 գիգա-կալորիայի կապված Հրազդանի ջերմոցային տնտեսության զարգացման հետ։

Առանց հպարտության չի կարելի չնշել, որ 10-րդ հնգամյակի տարիներին կոմունիստական աշխատանքի հարվածայիններ՝ էներգոբլոկի մեքենավար Մ. Բաղալյանը և կաթսայական արտադրամասի մեքենավար Ա. Զայցևը միութենա-

---

12 Նույն տեղում, 1977, № 12, էջ 2։

կան մինիստրության մասշտաբով ճանաչվել են «լավագույնս լուծ մասնագիտության»։

Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանը Հանրապետության արդյունաբերության համար տարեկան արտադրում է ավելի քան 6 միլիարդ կիլովատտ-ժամ էլեկտրաէներգիա, որը կազմում է Հանրապետության էլեկտրաէներգիայի արտադրանքի 40 տոկոսը[13]։

* * *

Հրազդանում գազիֆիկացման աշխատանքները սկսվել են 1959 թ., իսկ 1971 թ. Հրազդանի արդյունաբերական ձեռնարկությունները, պետական կապիտալ շենքերի ջեռուցման կաթսայատները և բնակարաններն արդեն գազիֆիկացված էին։

1980 թ. Հրազդանում շենքերի 98 տոկոսը գազիֆիկացված է բնական և հեղուկ գազով։ Գազիֆիկացման աշխատանքներն էլ ավելի ծավալելու նպատակով 1973 թ. հոկտեմբերից կազմակերպվում է Հրազդանի գազի տնտեսության միջշրջանային արտադրական-շահագործման վարչությունը։ Այդ վարչությունը սպասարկում է Արովյանի, Նաիրիի, Սևանի և Հրազդանի շրջանները։ Հրազդանում 1980 թ. իրացվել է Հանրապետությունում ստացված բնական գազի 10 տոկոսը։

Հրազդանի գազի տնտեսության ցանցում աշխատում են 330 բանվոր-ծառայողներ, որոնցից 40-ը ինժեներատեխնիկական աշխատողներ են։ Հայկական ՍՍՀ գազիֆիկացման պետական կոմիտեի ուսումնական կոմբինատը Հրազդանում ունի առանձին մասնաճյուղ, որը տարեկան պատրաստում և վերապատրաստում է շուրջ 300 միջին որակի մասնագետներ։ 1972 թ. երրորդ եռամսյակից մինչև 1973 թ. երրորդ եռամսյակը, շուրջ մեկ տարի, սոցմրցման մեջ առաջնություն շահելու համար Հրազդանի գազի դրասենյակի կոլեկտիվի

---

13 «Հայրենիքի ձայն», 1980, 24 դեկտեմբերի։

ձեռքում էր գտնվում Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԽ-ի փոխանցիկ կարմիր դրոշը։

Հրազդանի գազի շահագործման վարչությունը սպասարկում է շուրջ 95 քաղաքների, բանավանների և գյուղերի։ Ջարենցավան քաղաքը և Հրազդանի միկրոշրջան թաղամասը լրիվ գազիֆիկացված են։

1980 թ. տվյալներով վարչությունը սպասարկում է 49000 բնակարան, ուր տեղադրված են 70 հազար գազային սարքավորումներ, շուրջ 120 կենցաղային և ջեռուցման կաթսայատներ, բնական գազով գազիֆիկացված են 58 արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք են Հրազդանի ցեմենտի գործարանը, ՊՇԷԿ-ը և ուրիշ օբյեկտներ։

* * *

1970 թ. նոյեմբերի 23-ին կայացավ Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի ցեմենտի գործարանի հանդիսավոր բացումը, որի շինարարությունը սկսվել էր 1964 թ.։ Բացմանը ներկա էին Սովետական Հայաստանի կուսակցության ու կառավարության ղեկավարները, շինարարներն ու Հրազդանի ձեռնարկությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչները։ Բավական է ասել, որ գործարանի կոլեկտիվը պատրաստել է 14 հազար տոննա շինարարական և տեխնոլոգիական կոնստրուկցիաներ, 11 հազար տոննա քաշ ունեցող սարքավորումներ, 20 կմ երկարությամբ լայն տրամագծով խողովակաշար, 3,5 կմ հարահոսային սիստեմներ, շուրջ 560 կմ կաբելային ցանց։ Ցեմենտի գործարանի արտադրամասերը (հումքի աղացման, կիրման և ցեմենտի աղացման) հագեցված են հայրենական և արտասահմանյան երկրներից ստացված սարքավորումներով։

Գործարանի կառուցման, շինմոնտաժային աշխատանքների վրա ծախսված է 54 միլիոն ռուբլի, որից 17 միլիոնը

հատկացված է սարքավորումներին։ Հրազդանի ցեմենտի գործարանը 1977 թ. բաժանվել է լեռնաքիմիական կոմբինատից և դարձել ինքնուրույն գործարան։

Հրազդանի ցեմենտի գործարանի կառուցմանը մեծ օգնություն են ցույց տվել եղբայրական հանրապետություններից եկած 35 կազմակերպությունների մասնագետներ։ Լավագույն կառուցողի անուն վաստակեցին էլեկտրաշղթողներ Մ. Պողոսյանը, Ն. Սահակյանը, Պ. Բաբայանը, բրիգադավար Ա. Հարությունյանը, ամբարձիչավարներ Վ. Պողոսյանը, Ե. Գևորգյանը։ Գործարանի 2-րդ հերթի կառուցման աշխատանքներն արագացնելու համար մեծ ջանքեր են թափել նաև «Յուժտեխմոնտաժստրոյ» տրեստի Նովորոսիյսկի շինվարչության մասնագետներ Ի. Խաչատուրովը, Ն. Դորշինկոն, Ա. Էկշիյանը, Վ. Դիբրովը և ուրիշներ։ Ցեմենտի արտադրությունը շահագործման հանձնելու կապակցությամբ ընտրված էին լավագույն կադրեր։ Դեռ չէին ավարտվել ցեմենտի գործարանի շինարարական աշխատանքները, երբ կոմբինատի ղեկավարությունը շուրջ 70 հոգու ուղարկեց Բալակլիայի և Նովորոսիյսկի գործարանները՝ որակավորվելու, ցեմենտի արտադրության տեխնիկան սովորելու։ Հայաստան հրավիրվեցին ցեմենտի արտադրության մի շարք մասնագետներ։ Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի ցեմենտի գործարանի գործարկումով լուծվեց հանրապետությանը ցեմենտով ապահովելու հարցը։ Ցեմենտի գործարանում աշխատում են 1185 բանվոր-ծառայողներ, որոնցից առավել աչքի են ընկնում Օֆարի Գյուլմիսարյանը, Բարկին. Հովհաննիսյանը, Գագիկ Ակֆյանը, Գարեգին Դանիելյանը, Տուրիկ Նազարյանը, Ալիկ Մաքիևոսյանը, Ստելլա Ղազարյանը, Լենա Նազարյանը և ուրիշներ։ Գործարանին մեծ օգուտ են բերում ռացիոնալիզատորներ Վ. Հակոբյանի, Վ. Ալեքսեևի, Վ. Էլոյանի, Մ. Հակոբյանի, Խ. Մկրտչյանի, Ռ. Թորոփյանի, Կ. Աթոյանի, Շ. Կարապետյանի ռացիոնալիզատորական-նորարարական առաջարկությունները։

Գործարանի կոլեկտիվը 10-րդ հնգամյակի տարիներին ստանձնած սոցմրցման պարտավորությունները կատարելու

համար երկու անգամ շահել է ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԽ-ի և ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշը։

Հրազդանի խոշոր պանելային տնաշինական գործարանը 1960 թ. կառուցեց Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատը։ Անհրաժեշտություն ղգացվեց ստեղծել արտադրական կոմբինատ, որը պետք է ապահովեր այդ շինարարությունը շինանյութերով։ Արտադրական կոմբինատի շինարարությունն սկսվել էր 1960 թ. և շահագործման հանձնվեց 1963 թ.։

1966 թ. շահագործման հանձնվեց երկաթբետոնե կոնստրուկցիաների № 9 գործարանը, ուր աշխատում էին 160 բանվոր-ծառայողներ։ Գործարանն անցավ Հայկական ՍՍՀ շինարարության մինիստրության տնօրինության տակ և անմիջապես ենթարկվում էր «Հրազդանշին» տրեստին։ Գործարանի նախագծային կարողությունը կազմում էր 35 հազար խորանարդ մետր երկաթբետոնե կոնստրուկցիաներ՝ թվով 35 արտադրատեսակներ քաղաքացիական և արդյունաբերական շինարարության համար։

1968 թ. այդ գործարանը բաժանվեց երկու մասի, մեկը որպես երկաթբետոնե կոնստրուկցիաների № 9 գործարան, մյուսը՝ տնաշինական գործարան։ Տնաշինական գործարանի համախառն արտադրանքը դրամական արտահայտությամբ 1,5 միլիոնից հասավ մոտ 3 միլիոնի։ Եթե 1968 թ. գործարանը տվել է 15 հազար խորանարդ մետր երկաթբետոնե կոնստրուկցիաներ, ապա 1978 թ. այն հասավ մոտ 50 հազար խորանարդ մետրի։ Մեկ բանվորի տարեկան միջին արտադրողականությունը եթե 1968 թ. կազմել է 6500 ռուբլի, ապա 1978 թ. այն հասել է 14 հազար ռուբլու։ Գործարանն արտադրում է 35 արտադրատեսակ, որոնք սպառվում են ոչ միայն մեր, այլև եղբայրական մյուս հանրապետություններում։

Գործարանի արմատուրային, տնաշինական ստենդ, բետոնախառնիչ և այլ օժանդակ արտադրամասերը հագեցված են հայրենական սարքավորումներով։ Գործարանի շինմոնտաժային աշխատանքների և սարքավորումների համար ներդրվել է երկու և կես միլիոն ռուբլի։

1971 թ. գործարանը հիմնովին վերակառուցվեց և աշխատեց լրիվ կարողությամբ։

* * *

Ետպատերազմյան տարիներին Հրազդանում զարգացան սննդարդյունաբերական մի շարք ճյուղեր։

1964 թ. սեպտեմբերին շահագործման հանձնվեց Հրազդանի կաթի գործարանը։ Այստեղ տեղադրված հայրենական և արտասահմանյան սարքավորումների շնորհիվ կաթի ընդունման և մշակման բոլոր աշխատանքները մեքենայացված են։ Գործարանն ունի լաբորատորիա, որը որոշում է կաթի յուղայնության տոկոսը, որակը, հետևում արտադրամասերում կատարվող տեխնոլոգիական պրոցեսներին։

Անցած երկու տասնամյակներում երեք և կես անգամ ավելացել է գործարանի թողարկած արտադրանքի ծավալը, քառապատկվել է տեսականին։ Եթե գործարանի գործարկման առաջին տարիներին վերամշակվում էր և արտադրվում 10 հազար տոննա կաթնամթերք, ապա 1980 թ. Հրազդանի, Զարենցավանի, Գագարինավանի և Սևանի ափի հանգստավայրերի ազգաբնակչությանը մատակարարում է ավելի քան 35 հազար[14] տոննա 15 տեսակների բարձրորակ կաթնամթերք։

Ծաղկաձորի և Հանքավանի ճամբարներին գործարանն օրական հատկացնում է 4 տոննա կաթ, 5 տոննա մածուն, 1 տոննա թթվասեր, 50 ցենտներ կաթնաշոռ, պանրիներ և այլն։

1980 թ. Հրազդանի կաթի գործարանն արտադրել է շուրջ 2 միլիոն ռուբլու կաթնամթերք։ Գործարանում աշխատում են 80 բանվոր-ծառայողներ, որոնց մեջ առաջավոր են հնադույն, իրենց գործի մեջ հմուտ բանվորուհիներ Լաուրա Պողոսյանը, Շուշիկ Հակոբյանը, Սաթիկ Գևորգյանը, Հերիքնազ Ադիլյանը և ուրիշներ։

---

14 «Գիտություն և տեխնիկա», 1980, նոյեմբեր, № 11, էջ 26։

* * *

1964 թ. Հրազդանում գործող մի քանի մանր փռերի բազայի վրա կազմակերպվեց հացի կոմբինատը։ 1966 թ. սկսվեց հացի նոր գործարանի շինարարությունը, որը 1972 թ. ավարտվեց և նույն թվականի սեպտեմբերին շահագործման հանձնվեց։ Հետագա տարիներին վերակառուցվեցին տեխնոլոգիական-հոսքային գծերը, տեղադրվեցին ԳԴՀ-ից ստացված 4 վառարաններ։ Սարքավորված լինելով ժամանակակից տեխնիկայի պահանջներին համաձայն, հացի թխման աշխատանքների բոլոր դժվարին պրոցեսները մեքենայացվեցին։ Այդ տարիներին գործարանի շենքի և սարքավորման վրա ներդրվեց ավելի քան 2 միլիոն ռուբլի։ Գործարանն ունի նաև հրուշակեղենի արտադրամաս 250 տոննա արտադրողականությամբ։ Հրազդանի հացի գործարանը 1980 թ. դրամական արտահայտությամբ տվել է շուրջ 3 միլիոն ռուբլու համախառն արտադրանք։ Գործարանը 1970 թ. ունեցել է 30 տոննա կարողություն, այն 1980 թ. հասել էր 90 տոննայի։

Առաջավորների, նորարարների փորձը կենսագործելու, բարձր որակի արտադրանք տալու համար գործարանի հրուշակեղենի արտադրամասի բանվորուհի Սիլվա Հովակիմյանը պարգևատրվեց «Պատվո նշան» շքանշանով, իսկ հացթուխ, հնադույն վարպետ Աշոտ Բաղալյանը՝ Աշխատանքային փառքի երրորդ աստիճանի շքանշանով։

Հրազդանի սառցակոմբինատը շահագործման է հանձնվել 1979 թ.։ Սառցակոմբինատը բաղկացած է գլխավոր պահեստային մասնաշենքերից՝ 25 սառնարանային խուցերով, որոնց ընդհանուր տարողությունը 10 հազար տոննա է։ Պահածոների պահեստային շենքը իր 4 պահեստներով ունի 2500 տոննա տարողություն։

Հրազդանի սառցակոմբինատի շինմոնտաժային աշխատանքների վրա ներդրվել է հինգ միլիոն ռուբլի գումար, որից կես միլիոնը օգտագործվել է սարքավորման համար։

Հրազդանի սառցակոմբինատը տարբեր կոմբինատներից

և գործարաններից ընդունում է միս, կարագ, ձուկ և այլ սննդամթերքներ և ապահովելով բարձր որակ, դրանք բաց է թողնում առևտրական կազմակերպություններին։ Կոմբինատը սպասարկում է Հրազդանի, Աբովյանի, Էջմիածնի, Արտաշատի, Աշտարակի, Նաիրիի, Արարատի և այլ շրջաններին, անհրաժեշտության դեպքում՝ նաև Երևանին։ Կոմբինատը տարեկան ընդունում և բաց է թողնում 40 հազար տոննա սննդամթերք կամ դրամական արտահայտությամբ կատարում է 30 միլիոն ռուբլու ապրանքաշրջանառություն[15]։

Կոմբինատում աշխատում են 160 բանվոր-ծառայողներ, որոնցից 15-ը ինժեներատեխնիկական աշխատողներ են։ Կոլեկտիվում իրենց նվիրված աշխատանքով աչքի են ընկնում ավագ մեքենավար Սայադ Վարդանյանը, հերթապահ էլեկտրիկ Մերուժան Աբրահամյանը, բանվորներ Սամվել Սողոմոնյանը, Ռաֆիկ Վարդանյանը, փաթեթավորող բանվորուհիներ Հասմիկ Սարգսյանը, Նաղիկ Առաքելյանը և ուրիշներ։

* * *

Երևանի Շահումյանի շրջանի Ալ. Մյասնիկյանի անվան տրիկոտաժի արտադրական միավորման Հրազդանի տրիկոտաժի կարի մասնաճյուղը շահագործման է հանձնվել 1964 թ.։ Մասնաճյուղի արտադրամասերը հագեցված են հայրենական և դեմոկրատական երկրների կարի արտադրության սարքավորումներով։ Հրազդանի մասնաճյուղը արտադրում է կանանց և տղամարդու տրիկոտաժե ներքնազգեստ։ Մասնաճյուղի կոլեկտիվը եթե 1965 թ. արտադրել է շուրջ մեկ միլիոն հատ արտադրանք, ապա 1980 թ. այն հասցրել է 2,5 միլիոն հատի, 10-րդ հնգամյա պլանը կատարել է չորս և կես տարում։ Կոլեկտիվը բաղկացած է 225 հոգուց, որոնցից շատերը սոցմրցության առաջավորներ են, նրանցից են կարող բանվորուհիներ Սիրուշ Մակարյանը, Ջելիֆ Մանուկյանը,

---

15 Տվյալները վերցված են Հրազդանի սառցակոմբինատի հաշվապահության բաժնից։

Վերգուշ Թուռչյանը և ուրիշներ։ Նրանք իրենց արտադրական պլանները դերակատարում են և տալիս բարձր որակի արտադրանք։

Նույն արտադրական միավորումը Հրազդանում 1979 թ. վերջերին շահագործման հանձնեց երկրորդ մասնաճյուղը, որն արտադրում է սպիտակեղեն և վերնազգեստ։ Այս կոլեկտիվում աշխատում են 150 բանվորուհիներ։ Նրանք 1980 թ. տվել են կես միլիոն ռուբլու համախառն արտադրանք[16]։

Ալ. Մյասնիկյանի անվան տրիկոտաժի արտադրական միավորման Հրազդանի երկու մասնաճյուղերը 1980 թ. տվել են 2 միլիոն 300 հազար ռուբլու համախառն արտադրանք[17]։

Հրազդանի շրջանային սովետի գործադիր կոմիտեի տպարանը կազմակերպվել է 1931 թ. շրջանային «Լենինյան դրոշով» թերթի լույս ընծայման կապակցությամբ։ Տարեցտարի ավելացավ տպագրական սարքերի, ինչպես նաև բանվորների քանակը, բարձրացավ տպարանի արտադրողականությունը։ Հրազդանի տպարանում հիմնականում տպագրում են «Հրազդան» շրջանային թերթը և Հրազդանի արդյունաբերական ձեռնարկություններից ընդունված զանազան պատվերներ, որտեղ 15—20 տարի է, ինչ աշխատում են գրաշարներ Արաքսյա Խաչատրյանը, Գեղեցիկ Առաքելյանը, Սերյոժա Մհերյանը, Գեղեցիկ Խաչատրյանը։

Երեմ Խաչատրյանն 1936 թ. Հրազդանի տպարանում աշխատել է որպես գրաշար։ Նա 1941 թ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, պարգևատրվել Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի, Փառքի երրորդ աստիճանի շքանշաններով։ Պատերազմից հետո վերադարձել է և անցել աշխատանքի նույն տպարանում։

Հայկական ՍՍՀ տեղական արդյունաբերության Երևանի «Պլաստիկ» արտադրական միավորման Հրազդանի մասնաճյուղը կազմակերպվել է 1976 թ. կուլտուրայի մինիստրու-

---

16 Տվյալները վերցված են Ալ. Մյասնիկյանի անվան տրիկոտաժի արտադրական միավորման պլանային բաժնից։

17 Նույն տեղում։

թյան ենթակայության փոքրիկ արհեստանոցի բազայի վրա։ Մասնաճյուղն ունի ձուլածո և փշրվի իրերի կամ ոչ հանգուցյալին արտադրամասեր, որտեղ պլաստմասսայից պատրաստում են տնտեսական ապրանքներ։ Ձեռնարկությունում աշխատում են 135 բանվոր-ծառայողներ։ Առաջավոր բանվորներ Արշալույս Մարգարյանը, Անահիտ Վիրաբյանը, Գևորգիկ Ստեփանյանը, Հովիկիկ Ալեքսանյանը, Վարդան Սամսոնյանը և ուրիշներ միշտ գերակատարում են պլանները և տալիս բարձրորակ արտադրանք։ Ձեռնարկությունում աչքի ընկնող ռացիոնալիզատորներ են Ն. Թովմասյանը, Ս. Գրիգորյանը և Գ. Գրիգորյանը։

Գործարանի կոլեկտիվը 1980 թ. համախառն արտադրանքի պլանը կատարել է 103 տոկոսով։ 10-րդ հնգամյակում պլանով նախատեսված 7 միլիոնի փոխարեն տվել է 7,330 հազար ռուբլու համախառն արտադրանք[18]։ Հնգամյակի պլանը կատարել է 104 տոկոսով։

* * *

Հրազդանի ավտոձեռնարկության շինարարական աշխատանքներն սկսվել են 1976 թ.։ Այն շահագործման է հանձնվել 1979 թ. սկզբներին։ Ձեռնարկության հիմնական արտադրամասերն են՝ ՏՍ № 2 պոստը, ընթացիկ վերանորոգման, շինմոնտաժային և մեխանիկափականագործական։ Այդ բոլոր արտադրամասերում տեղադրված են հայրենական սարքավորումներ։ Ձեռնարկության շինմոնտաժային աշխատանքների վրա ներդրվել է երկու և կես միլիոն ռուբլի, իսկ սարքավորումների վրա ծախսվել է 60 հազար ռուբլի։

Ձեռնարկությունում աշխատում են 652 բանվոր-ծառայողներ, մեծ մասամբ վարորդներ։ Ամեն օր մի քանի տասնյակ ավտոբուսներ և մարդատար տաքսիներ են դուրս գալիս Հրազդանի ավտոձեռնարկության բազայից, որոնք Հրազդան

---

18 Տվյալները վերցված են Երևանի «Պլաստիկ» արտադրական միավորման պլանֆին բաժնից։

քաղաքը կապում են նրա շրջակա գյուղական վայրերի և Երևանի հետ։ 1980 թ. տեխնիկատնտեսական բարձր ցուցանիշների համար Հրազդանի ավտոձեռնարկության կոլեկտիվը երկու անգամ շահել է Հայկական ՍՍՀ ավտոտրանսպորտի միներությունի և խնդրային ճանապարհների բանվորների արհմիության Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշը և արժանացել դրամական պարգևի։

Ձեռնարկության կոլեկտիվը 10-րդ հնգամյակի պլանները կատարեց ժամկետից շուտ։ Ձեռնարկությանը մեծ օգնություն են ցույց տալիս ռացիոնալիզատորներ Վազգեն Առաքելյանը, Սերգեյ Սիմոնյանը, Վաղարշակ Շահնազարյանը և ուրիշներ։

1958 թ. երբ նոր կազմակերպվեց Հրազդանի ավտոտրանսպորտային գրասենյակը, այն ուներ ընդամենը 13 ավտոմեքենա և 25 աշխատող, իսկ 1980 թ. այդ ձեռնարկությունն արդեն ուներ մի քանի տասնյակ ավտոբուսներ, մարդատար և բեռնատար տաքսի մեքենաներ և 100-ից ավելի աշխատողներ։

10-րդ հնգամյակի բոլոր տարիներին Հրազդանի ավտոտրանսպորտային ձեռնարկության կոլեկտիվը հասել է մեծ հաջողություններ։ Կատարվել և գերակատարվել են ինչպես պետական պլաններն, այնպես էլ ստանձնած սոցիալիստական պարտավորությունները։

Այս կոլեկտիվը 10-րդ հնգամյակում պլանից դուրս փոխադրել է մոտ 200 հազար ուղևոր, իսկ տաքսիների վճարովի վարքը գերակատարել է մոտ 300 հազար կիլոմետրով։ Ուղևորների կուլտուրական սպասարկման համար շահագործման հանձնվեց ավտոբուսային նոր կայարանը, ընդարձակ սրահով և սպասարկման բոլոր հարմարություններով։ 11-րդ հնգամյակի տարիներին ձեռնարկությունը ավելի մեծ հաջողությունների հասավ։

* * *

Հրազդանի արդյունաբերական կենտրոնի զարգացման գործում խոշոր նշանակություն ունեցավ Երևան-Հրազդան-

Սևան երկաթուղու կառուցումը։ 1960 թ. նոյեմբերի 29-ին, Սովետական Հայաստանի 40-ամյակի օրը Երևանից գնացքը հասավ Սևան (1958 թ. Հրազդան), իսկ 1962 թ. հունիսի 15-ին Սևանի երկաթուղային կայարան մտավ առաջին մարդատար գնացքը, անցնելով 84 կմ ճանապարհ՝ Աբովյան-Հրազդան-Սևան երթուղիով։ Այդ նույն ժամանակաշրջանում (1962 թ. նոյեմբերի 29-ին) ավարտվեցին Երևան-Հրազդան 61 կմ երկարությամբ գծամասի էլեկտրիֆիկացման աշխատանքները։ Այն կատարում էր «Անդրարանոշին» № 134 շինարարական տեղամասի կոլեկտիվը։ Այդ կոլեկտիվի ջանքերով 1962 թ. նոյեմբերի 29-ին էլեկտրիֆիկացված գծամասով Հրազդան մտավ առաջին փորձնական էլեկտրաքարշը։ Հայ երկաթուղային շինարարների հետ իրենց աշխատանքով աչքի ընկան Պ. Ցրոլովի և Ա. Նեստերովի ղեկավարած էլեկտրամոնտաժողների բրիգադները, որոնք այստեղ էին եկել Տիխորեցկից և Դոնի Ռոստովից։ Նվիրումով աշխատեցին նաև Բաղայսկից և Սվերդլովսկից եկած ինժեներատեխնիկական աշխատողները։

Աշխատասեր, իրենց գործին գիտակ երկաթուղայինների մի լավ կոլեկտիվ է աշխատում Հրազդանի երկաթուղային կայարանում։ Կոլեկտիվի նպատակն է՝ ժողովրդատնտեսական բեռների փոխադրման գործի հետագա բարելավում, վագոնների պարապուրդների կրճատում, ուղևորների սպասարկման կուլտուրայի բարձրացում, երկաթուղային տրանսպորտում աշխատանքի առաջավոր ձևերի ու մեթոդների ճիշտ կիրառում, բեռնաշրջանառության առավել արդյունավետ եղանակների արմատավորում։

1980 թ. առաջին կիսամյակում պլանով նախատեսված 485 հազար տոննայի դիմաց (7656 վագոն) բարձել են 487 հազար տոննա ժողովրդատնտեսական բեռներ (7545 վագոն)։ Այսպիսով, պլանից դուրս ավելի են բարձել 2000 տոննա բեռ։ Բացի այդ մեկ վագոնի ամբարձիչ ուժը, միջին նորմայով սահմանված 64 տոննայի դիմաց կազմել է 64,5 տոննա։ Դրա համար Հրազդանի երկաթուղային կայարանի կոլեկտիվը 1980 թ. երկրորդ եռամսյակում շահել է Անդրերկաթուղու

Երևանի բաժանմունքի վարչության փոխանցիկ կարմիր դրոշը։

Հրազդանի երկաթուղայինները ձգտում են հնարավորության սահմաններում ավելի քիչ վագոններով առավել մեծ քանակությամբ ժողովրդատնտեսական բեռներ փոխադրել, առավել մեծացնել երկաթուղու թողունակությունը և փոխադրողականությունը, անհամեմատ կրճատել բեռնատար վագոնների շրջապտույտը։

10-րդ հնգամյակի տարիներին Հրազդանի երկաթուղային կայարանում բավականին գործ է կատարվել բեռնաբարձման և բեռնաթափման աշխատանքները կոմպլեքսային մեքենայացման ենթարկելու, ինչպես նաև ընթացիկ նորոգման մակարդակը բարձրացնելու, բեռնաշրջանառության առավել ամ ապահովելու ուղղությամբ։

Հրազդանի երկաթուղայինները ժամկետից շուտ կատարեցին 10-րդ հնգամյակի պլանները, ապահովեցին գնացքների երթևեկության անվտանգությունը, զգալիորեն բարձրացրին ուղևորների սպասարկման կուլտուրան։ Այդ հաջողություններում իրենց լուման ունեն և կոլեկտիվում առավել աչքի են ընկնում Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր, անվանի երկաթուղային Նիկոլայ Անիսիմովը, կայարանի հերթապահ, աշխատանքի վետերան Վալենտինա Դվոնեգլազովայան, գնացք կազմող Վարդգես Մարգարյանը, գնացքը կազմողի օգնական Վոլոդյա Խաչատրյանը, ադդանշանավոր Յուրիկ Զաքարյանը, բեռներ ընդունող հանձնող Իշխան Հովհաննիսյանը և Ասքանազ Զուրաբյանը։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀՐԱԶԴԱՆԻ ՍՈՎԽՈԶՆԵՐԻ ՎԵՐԵԼՔԸ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1945—1980)

Ետպատերազմյան տարիներին կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ գյուղատնտեսությունը մեր երկրում վերելք ապրեց։ Աճեց տեխնիկական բազան, ընդարձակվեցին ցանքատարածությունները, բարձրացավ բերքատվությունը, զարգացավ անասնապահությունը, ավելացավ ժողովրդական ոպտման ապրանքների արտադրությունը։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1958 թ. մարտի 31-ի որոշմամբ վերակառուցվեցին մեքենատրակտորային կայանները, և նրանց տեխնիկան վաճառվեց կոլտնտեսություններին։

Ելնելով կոլտնտեսությունների նյութական-տնտեսական բազայի ամրապնդման շահերից, ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թ. փետրվարյան պլենումը որոշում ընդունեց մեքենատրակտորային կայանները վերակառուցելու և մեքենաները կոլտնտեսություններին վաճառելու մասին։ Այդ իսկ պատճառով, քաղաքից գյուղ մեկնեցին բազմահազար տրակտորիստներ, մեխանիզատորներ, ինժեներատեխնիկական աշխատողներ իրենց հետ միաժամանակ գյուղ տանելով բանվոր դասակարգի աշխատանքային փառավոր ավանդույթները։

Ետպատերազմյան տարիներին բարձրացավ հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը, բարելավվեց այգեգործության վիճակը, որոշ վերելք ապրեց անասնապահությունը։

Մթերքների գնման գների բարձրացման և գնումների կայուն պլանների սահմանման վերաբերյալ կառավարության որոշմամբ բարձրացվեց գյուղատնտեսության բնագավառի աշխատողների նյութական շահագրգռվածությունը։ Ավելացվեցին կապիտալ ներդրումները գյուղատնտեսության բոլոր ճյուղերում՝ հատկապես կոմպլեքսային մեքենայացման նպատակով։

Դիտատեխնիկական հեղափոխության ներկա ժամանակաշրջանում էական տեղաշարժեր են կատարվում գյուղատնտեսության տեխնիկական զինվածությունը զարգացնելու, գյուղատնտեսությունը ինդուստրիալ հիմքերի վրա փոխադրելու ուղղությամբ, որոնք և նպաստում են աշխատանքի արտադրողականության, միաժամանակ գյուղատնտեսության կուլտուրաների բերքատվության բարձրացմանը։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումը և նրա վերելքը արմատապես փոխեցին Հայաստանի գյուղի դեմքը։ Արմատական տեղաշարժեր կատարվեցին գյուղական բնակչության սոցիալական կազմում։

ՍՄԿԿ 25-րդ համագումարը գյուղատնտեսության հետագա զարգացումը համարեց համապետական, համաժողովրդական խնդիր, որի կատարումով երկիրը պետք է ապահովվեր պարենամթերքի և գյուղատնտեսական հումքի առատությամբ։ Ուստի և գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ համագումարում մշակվեցին լայն միջոցառումներ։

Սովետական իշխանության տարիներին խոշոր գործ է կատարվել գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան ամրապնդելու և կատարելագործելու, գյուղում կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարություն ծավալելու, կոլտնտեսությունների ու սովխոզների տեխնիկական զինվածությունը բարձրացնելու ուղղությամբ։

Կարճ ժամանակամիջոցում գյուղատնտեսության մեջ տեղի ունեցավ տեխնիկական հեղաշրջում։ Այսպես, եթե 1928 թ. հանրապետության գյուղատնտեսությունն ունեցել է ընդամենը 166 տրակտոր և 27 կալսիչ մեքենա, իսկ կոմբայն

ու բեռնատար ավտոմեքենա չի եղել, ապա 1981 թ. սկզբի տվյալներով կոլտնտեսություններն ու սովխոզները ունեին արդեն ավելի քան 13 հազար տրակտոր, 15,8 հազար բեռնատար ավտոմեքենա, 2 հազար հացահատիկի և սիլոսի բերքահավաքի կոմբայն և մեծ քանակությամբ գյուղատնտեսական այլ մեքենաներ[1]։

Խոշոր աշխատանքներ են կատարված գյուղատնտեսության արտադրության աշխատատար պրոցեսների մեքենայացման ուղղությամբ։ Հողագործության մեջ վարը, ցանքը, բերքահավաքը, գյուղատնտեսական կուլտուրաների հիվանդությունների և վնասատուների դեմ քիմիական պայքարը ամենուրեք կատարվում են մեքենաների միջոցով։ Մոբիլիզացված ուժերով մեծ ծավալի աշխատանքներ են կատարվում, որպեսզի 11-րդ հնգամյակի վերջում ֆերմաներում կերերի բաշխման և համալիրի մեքենայացման մակարդակը հասցվի 50, կթինը՝ 70 տոկոսի, հիմնականում ավարտվեն ջրամատակարարման ու գոմաղբի հեռացման աշխատանքների մեքենայացման աշխատանքները։

Հանրապետությունում գործում են 59 ջրամբար և բազմաթիվ արտեզյան ջրհորներ, ջրհան կայաններ։ Այդ ամենի շնորհիվ նախասովետական շրջանի համեմատությամբ ոռոգվող հողերն ավելացել են 4,5 անգամ, կամ 60 հազարից հասել են 291 հազար հեկտարի, եթե բանջարանոցային կուլտուրաների ցանքատարածությունը 1932 թ. կազմում էր 2,2 հազար հեկտար, ապա 1980 թ. հասավ 19 հազար հեկտարի։ Ոռոգելի հողատարածությունների ընդարձակման շնորհիվ նոր թափով զարգացան խաղողագործությունն ու պտղաբուծությունը։

Անճանաչելիորեն փոխվել է հայկական գյուղը, նրա կուլտուրական տեսքը, տարեցտարի աճում է բնակելի գեղեցիկ շենքերի, դպրոցների, ակումբների, կուլտուրայի պալատների ու գրադարանների, խանութների և ճաշարանների, բու-

---

[1] «Սովետական Հայաստան», 1982, 6 հուլիսի։

Ժական հիմնարկների, մանկապարտեզների, կենցաղային սպասարկման ձեռնարկությունների ցանցը։

Նախապատերազմյան տարիներին երկրում առավել բարձրացավ ՄՏ կայանների դերը կոլտնտեսություններում աշխատող ձեռքի պակասի պատճառով։

1951 թ. անիվավոր տրակտորները ռացիոնալ օգտագործելու, բնավարձի պլանը գերակատարելու և կոլտնտեսությունների սպասարկման գործը առավել բարելավելու համար Հրազդանի ՄՏ կայանի կոլեկտիվը շահեց ՍՍՀՄ գյուղատնտեսության մինիստրության և ՀԱՄԿՄ-ի փոխանցիկ կարմիր դրոշն ու դրամական պարգևը։ Մրցության մեջ գտնվող Հրազդանի և Սևանի ՄՏ կայանների աշխատողները հանրագումարի բերեցին 1957 թ. տնտեսական տարվա արդյունքները։ Պարզվեց, որ Հրազդանի ՄՏ կայանի աշխատողները զգալի հաջողությունների են հասել ինչպես հացահատիկային կուլտուրաների, այնպես էլ անասնաբուծական մթերքների արտադրության ավելացման ուղղությամբ։ Դրա համար առաջնությունը շահեց Հրազդանի ՄՏ կայանի կոլեկտիվը[2]։

1958 թ. կուսակցական և պետական վերադաս մարմինների որոշմամբ երկրի մեքենատրակտորային կայանները վերակառուցվեցին նորոգման տեխնիկական կայանների, որոնք ներկայացնում էին միանգամայն նոր դեր։ Վերակառուցումից հետո տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների մեծ մասը կենտրոնացվեց կոլտնտեսությունում, ուր հիմնականում համախմբված էին մեխանիզատորներ, գյուղատնտեսներ և անասնաբույժներ։ Հրազդանի նորոգման տեխնիկական կայանը կատարում էր կոլտնտեսություններին, ինչպես նաև արհեստանոցներ չունեցող սովխոզներին և գյուղատնտեսական մյուս ձեռնարկություններին պատկանող տրակտորների, կոմբայնների, ավտոմեքենաների, գյուղատնտեսական այլ մեքենաների ու գործիքների նորոգումները։ Հրազդանի նորոգման տեխնիկական կայանը վարձակալության կարգով կոլտնտեսություններին ու սովխոզներին տրամադրում էր անհրաժեշտ մեքենաներ ու գործիքներ, ինչ-

2 «Լենինի դրոշով», 1958, 30 հունվարի։

պես նաև վաճառում էր պահեստամասեր, նավթամթերք, պարարտանյութ և այլ ապրանքներ։

1960 թ. կեսերից Հրազդանի նորոգման տեխնիկական կայանը վերափոխվեց և դարձավ գյուղատնտեսական մեքենաների վաճառքի գլխավոր վարչություն՝ «Հայգյուղտեխնիկայի միավորում» անվանումով։

«Հայգյուղտեխնիկայի» Հրազդանի միավորման կոլեկտիվը ապահովում էր կոլտնտեսությունների և սովխոզների տեխնիկայի վերստուգումը, ունեցած տեխնիկայի պահպանումն ու օգտագործումը, տեխնիկայի ու պահեստամասերի մատակարարումը։

«Հայգյուղտեխնիկայի» Հրազդանի միավորման կոլեկտիվի աշխատանքները դրամական արտահայտությամբ 1980 թ. 1970 թ. համեմատությամբ մի քանի անգամ աճել են։ 1980 թ. գարնանը, ինչպես խոտհնձի սիլոսացման, այնպես էլ բերքահավաքի շրջանում գյուղատնտեսական մեխանիզմներն ու սարքերն աշխատել են անխափան։ Դա արդյունք էր այն բանի, որ Հրազդանի միավորման կոլեկտիվը աշնանամեռային ժամանակաշրջանի համար նորոգման և մեքենաների պահպանման աշխատանքները լավ էր կազմակերպել։ Մեծ ուշադրություն էր դարձվել տեխնիկայի պահպանման, նորոգման և շահագործման ընթացքի վրա։

Հրազդանի միավորման բաժանմունքներում մեծ աշխատանք է տարվում անասնապահական ֆերմաների կոմպլեքսային մեքենայացման ուղղությամբ։ Շրջանի կոլտնտեսություններին ու սովխոզներին առաքվում է վառելանյութ, պարարտանյութ, պահեստամասեր և տարբեր տեսակի շինանյութեր։

Նորոգման արհեստանոցը մասնագիտացված է դիզելային շարժիչների վերանորոգման աշխատանքներում։ Հանրապետությունում դիզելային շարժիչների վերանորոգման աշխատանքները կատարվում են Հրազդանի նորոգման արհեստանոցում, այն միակն է հանրապետությունում։ «Հայգյուղտեխնիկայի» Հրազդանի բաժանմունքը շրջանի կոլտնտեսություններին ու սովխոզներին վաճառում է ավտոմեքենաներ,

տրակտորներ, կոմբայններ, շարքայաններ, կցասայլեր, գութաններ, գյուղատնտեսական նշանակություն ունեցող գործիքներ և սարքեր։

«Հայգյուղտեխնիկայի» Հրազդանի շրջանային միավորման կոլեկտիվը 1977 թ. հոբելյանական տարվա պլանները կատարելու համար շահեց ՀԿԿ Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԽ-ի և ՀԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ դրոշը։ Մի քանի տասնյակ տրակտորների, մի քանի հարյուր տրակտորի շարժիչների, ավտոմեքենաների և գյուղատնտեսական այլ մեքենաների վերանորոգումները բարձր որակով կատարեցին «Պատվո նշանի» շքանշանակիր Սեդրակ Սամվելյանը, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիրներ Ալեքսանդր Թավաքալյանը, Վասիլի Կարյագինը, որոնք իրավամբ համարվում են ձեռնարկության առաջավորներ։

Առաջավոր բանվորներ Ս. Սամսոնյանը, Վ. Շուբինը և ուրիշներ 1977 թ. պլանը կատարեցին ՍՍՀՄ սահմանադրության տարեդարձի օրը՝ հոկտեմբերի 7-ին։

Բրիգադավար Վասիլի Շուբինն արժանացավ Հայկական ՍՍՀ պետական մրցանակի դափնեկրի կոչման։ Միավորման վերանորոգման արհեստանոցի նորոգող վարպետներ Մանվել Նազարյանը, Թորոսի Ներսիսյանը, Հովհաննես Վարդանյանը, ինքնավարպետ Նվեր Նազարյանը, փորձարկող վարպետի օգնական Յուրիկ Մարգարյանը և ուրիշներ արժանացան խրախուսանքի։

Հրազդանի շրջանային արտադրական միավորման կոլեկտիվին 1978 թ. շնորհվեց կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի կոչում, միաժամանակ նրան հանձնվեց հանրապետական արտադրական միավորման փոխանցիկ կարմիր դրոշը։

Այս կոլեկտիվը փայլուն ցուցանիշներով ավարտեց 10-րդ հնգամյակի պլանը։ Եթե 1970 թ. արտադրության ծավալը եղել է 411,3 միլիոն ռուբլի, ապա այն 1980 թ. դարձել է 2313,0 միլիոն ռուբլի, այսինքն՝ մի տասնամյակում աճել է ավելի քան հինգ ու կես անգամ, իսկ ապրանքաշրջանառու-

թյան ծավալը եթե 1970 թ. եղել է 1194,6 միլիոն ռուբլի, ապա 1980 թ. հասել է 2860,5 միլիոն ռուբլու, այսինքն աճել է մոտ երկուս ու կես անգամ[3]։

Այս կոլեկտիվը աշխատանքային լավագույն ցուցանիշների համար բազմիցս արժանացել է միութենական, հանրապետական մրցանակների, դիպլոմների և դրամական պարգևների։ 10-րդ հնգամյակի տարիներին կոլեկտիվում բարձրացավ մեկ բանվորի միջին արտադրողականությունը, բարելավվեց արտադրության որակը։ Առաջին անգամ այս կոլեկտիվի արտադրանքը՝ տեխնիկայի լավ նորոգման համար արժանացավ «որակի ատեստատ» որակի դիպլոմի։

* * *

Պետական անասնաբուժական ծառայությունը Հրազդանում սկզբնավորվել է սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո։ Առաջին պետական անասնաբուժարանի կազմակերպիչներից մեկն է եղել Ն. Կ. Շչերբակովը։ Ժողովրդի մեջ մինչև օրս էլ երախտագիտությամբ է հիշվում Նիկոլայ Շչերբակովի բարի անունը։ Նա հաջողությամբ էր կազմակերպել 1926 թ. տարվա մեջ բռնկված ժանտախտ, ապա սիբիրախտ տարափոխիկ հիվանդության դեմ մղած պայքարը։

Հրազդանի անասնաբուժական կայանն ապահովված է տիպային շենքով, ժամանակակից բուժպրոֆիլակտիկային վերաբերող սարքավորումներով և տրանսպորտի միջոցներով։ Կայանի նպատակն է պայքարել կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ։ Այն իրականացվում է 3 անասնաբուժական տեղամասերի միջոցով, որոնք ևս ապահովված են տիպային շենքերով և ժամանակակից բուժսարքավորումներով։ Այս կոլեկտիվի վետերաններն են Անդրանիկ Օքուդյանը, Գարսևան Ղազարյանը, Սպարտակ Իսրայելյանը և ուրիշ-

---

3 Տվյալները վերցված են հանրապետական «Հայգյուղտեխնիկայի» պլանբաժնից։

ներ։ 1963 թ. Հրազդանում ստեղծվեց անասնաբուժական լաբորատորիա։ Անասնաբուժական սպասարկումը Հրազդանում այսօր իրականացվում է մեկ անասնաբուժական կայանի ութ տեղամասերի, 3 շուկաների, «Կաթի, մսի և սննդամթերքների վերահսկիչ կայանների» և մեկ անասնաբուժական լաբորատորիայի միջոցով, որոնք լրիվ կոմպլեկտավորված են արակյալ մասնագիտական անձնակազմով և հագեցված ժամանակակից սարքավորումներով։

* * *

Հրազդանի ժողովրդատնտեսական, հիմնականում գյուղատնտեսական նշանակության խոշորագույն կառույցներից է ջերմոցային տնտեսության կոմբինատը, որը կզբաղեցնի 30 հեկտար հողատարածություն 28,6 միլիոն նախահաշվային արժեքով։

Այդ կոմբինատի պատվիրատուն Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրությունն է։ Շինարարությունը իրականացնում են Հայգյուղշինմոնտաժտրեստի № 1 և 2 ջերմոցային վարչությունների կոլեկտիվները։

Ջերմոցային տնտեսության շինարարական աշխատանքներն սկսվել են 1979 թ.։

Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի շինվարչության ուժերով կառուցվել է ջերմոցային տնտեսության 13 կմ երկարությամբ ջրատարը։

Գյուղում հաղթանակած սոցիալիստական արտադրահարաբերությունները, հանրային արտադրության մեջ ինդուստրիալ եղանակների արմատավորումը փոխել են նաև հողի աշխատավորի ապրելակերպն ու հոգեբանությունը։ Նա այլևս գյուղացի չէ, բառի իսկական իմաստով։ Հիմա նա մեխանիզատոր է, ինժեներ ու մեխանիկ, հողագործ, գյուղատնտեսի մասնագիտությամբ ու փորձով։

Լենինյան կոոպերատիվ պլանի կենսագործումը, հանրային արտադրության աճը հիմնովին փոխել են գյուղի մարդկանց ապրելակերպը, կենցաղը։ Գյուղում վեր են խոյացել

երկհարկանի մենատներ, կուլտուրայի, կենցաղի, կրթական, առողջապահական օջախների բարձրահարկ շենքեր՝ կահավորված, ապրելու, աշխատելու, ստեղծագործելու մեր ժամանակին հատուկ կենսական ու հոգևոր կյանքի բոլոր պարագաներով[4]։

Հոլոր ինդուստրիայի զարգացման շնորհիվ Հրազդանում ծնունդ առավ արդյունաբերական բանվոր դասակարգը, այն վճռական ազդեցություն ունեցավ կյանքի բոլոր ոլորտների, հատկապես գյուղատնտեսության զարգացման վրա։ Խոսքը գյուղատնտեսության նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների շեֆության վերցնելու մասին է, որն այսօր նոր ձև ու բովանդակություն է ստացել Հրազդանում, դարձել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման հզոր միջոց։ Արդյունաբերության ձեռնարկությունները աջակցեցին կոլտնտեսություններին և սովխոզներին շեֆական օգնություն ցույց տալու գործը։ Իսկ այդ աշխատանքները ղեկավարելու համար Հրազդանում ստեղծվեց օպերատիվ շտաբ՝ ՀԿԿ շրջկոմի առաջին քարտուղարի ղեկավարությամբ։ Շտաբի խնդիրն էր՝ կոորդինացնել, ղեկավարել ձեռնարկություններում 10-րդ հնգամյակի առաջին տարիներից ծավալված շեֆական օգնությունը։

Հանրագումարի բերելով 5 տարվա շեֆական աշխատանքների արդյունքները կարելի է ասել, որ այն տվել է իր ակնառու արդյունքները։ Շեֆերը կամավոր կերպով, իրենց հնարավորության սահմաններում օժանդակել են տնտեսությունների էկոնոմիկայի զարգացման գործին։ Կառուցել են առասնապահական շենքեր, կերամշակման արտադրամասեր, խոհանոցներ, կաթնատներ, հանդստյան սենյակներ և այլն։ Իսկ սոլակցիները գործարանի օգնությամբ կառուցել են մեքենայացված գոմեր։

Շեֆ գործարաններն ու հիմնարկները ծանրակշիռ գործեր են կատարում նաև կերի արտադրության բնագավառում։ Նրանք սովխոզներին և կոլխոզներին տրամադրում են բեռ-

---

4 «Հայաստանի գյուղատնտեսություն», 1980, հունիս, № 6, էջ 9։

նատար ավտոմեքենաներ, գյուղատնտեսական մեքենաներ, սարքեր։ Կերի կուտակման աշխատանքներին տարեկան մասնակցում են ավելի քան հազար հնձվոր բանվորներ, ծառայողներ։

Անասնապահների աշխատանքի և հանգստի բավարար պայմաններ ստեղծելու նպատակով գյուղի և արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների համատեղ ջանքերով ֆերմաներում ստեղծվել են կենցաղային տներ։ Այսպես, Ջրառատի համալիրին կից գործում են բար-կաֆենատունը. Մարմարիկի միջտնտեսային ձեռնարկությունում՝ թեյատունը, Ֆանտանի կոլտնտեսությունում՝ պանրատունը, Քաղսիում՝ հացատունը, Արզականում՝ պտղատունը, Աֆարբեկյանում՝ կթվորի տունը, Բջնիում՝ սարվորի տունը։ Հանգստի և ժամանցի օջախները կահավորված են ճաշակով։ Հրազդանցիների փորձը հանրապետությունում և Անդրկովկասում գտնում է իր ընդօրինակողներին։

Բարձր գնահատելով այդ նախաձեռնությունը ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը նշել է. «Ամենայն խրախուսանքի է արժանի, որ կուսակցական և տնտեսական ղեկավարները պլանաչափ աշխատանք են կատարում տերիտորիայում գտնվող արդյունաբերական ձեռնարկությունների և կոլտնտեսությունների ու սովխոզների համագործակցված աշխատանքը, փոխօգնությունն ապահովելու ուղղությամբ»։

Հրազդանցիները օգտագործելով իպատովցիների աշխատանքային մեթոդը, իրենց նոր տարբերակը ստեղծեցին։

Հրազդանից ստացած տեխնիկան կցեցին Գյուլմատալեկոմի միավորման բրիգադներից մեկին, որը բաղկացած էր 15 մեխանիզատորներից և հատկապես կերի արտադրության մի քանի մեքենաներից ու մեխանիզմներից։ Առաջին տարին թեև արտադրությունն անսովոր էր, մեքենաները քիչ էին, այնուամենայնիվ բրիգադը կուտակեց 14 հազար տոննա խոտ և սիլոս[5]։ Հաջորդ տարում, երբ դղալիորեն մեծացան

5 «Հայաստանի գյուղատնտեսություն», 1980, հունիս, № 6, էջ 11։

տեխնիկական հզորությունն ու մեխանիզատորների թիվը, բրիգադը, որը ղեկավարում էր հմուտ մեխանիզատոր Քաջիկ Սայադյանը, կոմպլեքսային եղանակով պատրաստեց 22 հազար տոննա սիլոս ու սենաժ, հավաքեց հազար հեկտար հացահատիկի բերք, կատարեց 1500 հեկտար ցանք[6]։

Այսպես, եթե մեկ տոննա սենաժ պատրաստելու վրա տնտեսությունները ծախսում են 13 ռուբլի 50 կոպեկ, ապա բրիգադի պատրաստածի արժեքը կազմում է 5 ռուբլի 90 կոպեկ[7]։ Վերջապես Հրազդանցի խպատովցիների փորձի նշանակությունը կայանում է նրանում, որ գտել են գյուղատնտեսական արտադրությունը արդյունաբերական հիմունքներով վերակառուցելու մի շահավետ միջոց ևս։

* * *

Հրազդանի ինֆորմացիայի հաշվիչ կենտրոնը կազմակերպվել է 1970 թ. գարնանը։ Կայանի արտադրամասերը համալրված են ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հաշվողական տեխնիկայի սարքերով։

Կայանը Հայկական ՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչությանը և Հրազդանի կուսակցական և սովետական ղեկավար օրգաններին պարբերաբար ապահովում է ոչ միայն քաղաքի, այլև ողջ շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների սովխոզ-կոլխոզների և այլ կազմակերպությունների տեխնիկատնտեսական ցուցանիշների մասին ինֆորմացիայով։ Կայանը միաժամանակ մեքենայական մշակման է ենթարկում 32 կազմակերպությունների հաշվապահական հաշվառման աշխատանքները։

* * *

Հայրենական պատերազմից հետո, հատկապես 1945—1950 թթ. Հրազդանի կոլտնտեսությունում ավելացավ կթ-

---

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում, էջ 12։

նատու անասունների գլխաքանակը, կատարվեցին մի շարք կառուցումներ՝ տիպային անասնագոմեր, լաբորատորիաներ, բուժարան, լողարան, ակումբ, վարչական շենք, ֆերմաներում և գոմերում անցկացվեցին ջրատար խողովակներ և այլն։

1950—1960 թթ. կոլտնտեսությունը որոշակի վերելք ապրեց, ամրապնդեց մեքենայական բազան՝ տրակտորներ, կոմբայններ, ավտոմեքենաներ և գյուղատնտեսական այլ մեքենաներ։ Մեխանիզացիայի ենթարկվեցին ֆերմաների, շորանոցների աշխատանքները, էլեկտրաաղացը, սղոցարանը և արհեստանոցները։

Այս կոլտնտեսության կազմակերպիչներն ու ակտիվ աշխատողներն են եղել Արշալույս Ավետյանը, Լևոն Պետրոսյանը, Սենուշկա Խաչատրյանը, Երվանդ Դանիելյանը, Յուրիկ Թադևոսյանը, Միլիտոն Գալստյանը, Արմենակ Խաչատրյանը և շատ ուրիշներ։

* * *

1961 թ. կեսերին Հրազդանի կոլտնտեսության բազայի վրա կազմակերպվեց պետական տնտեսություն (սովխոզ)։ Այս տնտեսությանը միացավ Ախպարակի կոլեկտիվ տնտեսությունը, որով այն դարձավ շրջանի ամենամեծ տնտեսությունը։ Պետական տնտեսության հողային տարածությունը հասավ 4 հազար հեկտարի, որից 1800 հեկտարը վարելահող է, իսկ 1200 հեկտարը՝ արոտավայր։

Հրազդանի տնտեսությունը համարվում է անասնապահական և դաշտավարական։ Մշակում են ծխախոտ, ոլոռ, կարտոֆիլ, կաղամբ, ճակնդեղ և այլ կուլտուրաներ։ Տարեցտարի ավելանում է անասունների գլխաքանակը և բարձրանում մթերատվությունը։ 1950-ական թվականներից սկսվեց և այժմ էլ շարունակվում է կապիտալ շինարարությունը, հատկապես անասնապահական օբյեկտներում։ Կառուցվել են տիպային մեքենայացված գոմեր և բազմաթիվ այլ շինություններ։

Հրազդանի սովխոզը 1980 թ. ուներ 1506 հեկտար ցանքային տարածություն։ Տնտեսության 1980 թ. եկամուտները դրամական արտահայտությամբ կազմեցին 171 հազար ռուբլի։ Տնտեսությունն ունի իր նյութատեխնիկական բազան՝ տրակտորներ, կոմբայններ, շարքացաններ, ավտոմեքենաներ, կուլտիվատորներ և գյուղատնտեսական այլ գործիքներ։

* * *

Աթաբեկյանի կոլտնտեսությունը խոշոր վերելք ապրեց հատկապես նեպատերազմյան առաջին տարիներին։ 1948 թ. ցորենի բարձր բերք ստանալու համար Աթաբեկյանի կոլտնտեսության անդամներ, օղակավարներ Գառնիկ Առաքելյանը, Գերասիմ Սողոմոնյանը և օղակավարուհի Հ. Մկրտչյանը պարգևատրվեցին Լենինի շքանշանով, իսկ Հայրապետ Հարությունյանը, Վաղուշ Բունիաթյանը, Հարություն Վարդանյանը՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Նույն կոլտնտեսության անդամներից 9 հոգի պարգևատրվեցին «Աշխատանքային արիության համար», իսկ 8 հոգի՝ «Աշխատանքային գերազանցության համար» մեդալներով[8]։

1950 թ. աշնանը Աթաբեկյան և Մաքրավան գյուղերի կոլտնտեսությունները միավորվեցին և կազմեցին մի խոշոր-բացված կոլտնտեսություն։ Աշխատանքներն օրինակելի կազմակերպելու շնորհիվ միավորված կոլտնտեսությունն ստացավ բարձր բերք և շրջանում առաջինը դարձավ միլիոնատեր։ Նեպատերազմյան տարիներին հիմնովին փոխվեց գյուղի դեմքը։ Կոլտնտեսականները կառուցեցին նոր բնակարաններ։ Ջուրը հասավ գյուղ, կոլտնտեսականների այգիներն ու բանջարանոցները։ Գյուղում կառուցվեցին ակումբ, դպրոցական շենք, կուլտուր-լուսավորական հիմնարկներ։ Էլեկտրականությունը, գազը, ռադիոն, հեռուստատեսությունը մտան կոլտնտեսականների կենցաղը։

---

8 «Լենինի դրոշով», 1949, 1 մայիսի։

1961 թ. աշնանը նույն գյուղի կոլտնտեսության բաղայի վրա կազմակերպվեց Աթաբեկյանի սովխոզը։ Սովխոզն իր գոյության տարիներին աշխատել է շահութաբեր, գրագիտ չափով գերակատարել է գյուղատնտեսական մթերքների արտադրության և պետության վաճառքի հանձնման պլանը։ Դրա հետ միասին ապահովել է բոլոր տեսակի անասունների գրլխաքանակի ավելացման և մթերատվության բարձրացման առաջադրանքները։ Սովխոզը հիմնականում մշակում է հացահատիկ, ծխախոտ, ունի այգիներ։ Սովխոզը նման հաջողությունների է հասել աշխատանքի լավ կազմակերպման, վարձատրության եղանակների կատարելագործման շնորհիվ։ Տարիներ շարունակ սոցիալիստական մրցության մեջ են եղել Աթաբեկյանի և Ջրառատի սովխոզները։

1975 թ. սոցիալիստական մրցության արդյունքներն ամփոփելիս պարզվեց, որ աթաբեկյանցիները բանջարեղենի արտադրության պլանը կատարել են 124 տոկոսով, ծխախոտինը՝ 138, կաթինը՝ 106, մսինը՝ 130, իսկ բրդինը՝ 153 տոկոսով։ Ջրառատցիները հացահատիկի իրացման պլանը կատարել են 124 տոկոսով, ծխախոտինը՝ 127, կաթինը՝ 125, մսինը՝ 110, բրդինը՝ 103։ Մրցության արդյունքները ամփոփելիս նշվել է, որ երկու սովխոզների բանվորները (աթաբեկյանցիները և ջրառատցիները) հավասար ցուցանիշներ են ձեռք բերել և երկուսն էլ հաղթող են ճանաչվել սոցմրցությունում։

1980 թ. Աթաբեկյանի սովխոզն ուներ 1201 հեկտար ցանքատարածություն։

Աթաբեկյանցիները երկար տարիներ մրցում էին Կուբանի Ուստ-Լաբինսկի արտադրական վարչության «Լազոժնայա» սովխոզի բանվորների հետ[9]։ Մրցող կողմերի փոխայցելությունների ժամանակ կատարվում է առաջավոր փորձի փոխանակում, կազմակերպվում է փոխադարձ օգնություն։ Պատվիրակությունների փոխադարձ այցելությունները վերածվում են ռուս և հայ ժողովուրդների բարեկամության,

---

9 «Լենինյան դրոշով», 1963, 17 հուլիսի։

նրանց միջև եղած փոխադարձ կապերի ամրապնդման անմոռաց ցույցերի։

Աթարբեկյանի սովխոզն արժանացել է բազմաթիվ պարգևների։ Այսպես, սոցիալիստական մրցության շնորհիվ ձեռք բերված աշխատանքային հաջողությունների համար Աթարբեկյանի սովխոզը ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի առթիվ արժանացավ ՀԿԿ Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԽ-ի հոբելյանական պատվոգրին։

Սովխոզի կոլեկտիվը 1974 և 1975 թթ. հողագործական և անասնապահական մթերքների արտադրությունը և մթերումների ավելացման համար ծավալված գյուղատնտեսության աշխատողների համամիութենական սոցիալիստական մրցությունում հաղթող դուրս գալու համար արժանացավ ՀԿԿ Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԽ-ի և ՀԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ դրոշին, ստանալով դիպլոմ և դրամական պարգև[10]։

Հացահատիկի, բանջարեղենի և մյուս գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացմանը ցուցաբերած աշխատանքի համար սովխոզի բրիգադավար Արշավիր Սողոմոնյանը և վարորդ Արտաշ Գրիգորյանը պարգևատրվեցին Լենինի շքանշանով։

1975—1980 թթ. աթարբեկյանցիները ստացան հացահատիկի, բանջարեղենի բարձր բերք, գերակատարեցին մսի, կաթի, ձվի մթերումների պլանները և բազմիցս արժանացան խրախուսանքի։

Հրազդանում 1950-ական թվականներին խոշոր վերելք ապրեց Ջրառատի կաթնաանասնապահական սովխոզը։ Ջրառատի կաթնաանասնապահական սովխոզը 1963 թ. արդեն ուներ 6725 հեկտար հողատարածություն, որից 1575 հեկտարը վարելահող, 992 հեկտարը բնական արոտավայր, 345 հեկտարը խոտհարք[11]։

---

10 «Հրազդան», 1975, 1 մարտի։

11 «Լենինյան դրոշով», 1963, 17 սեպտեմբերի։

1970-ական թվականներին այս տնտեսությունն սկսեց ու ավարտեց անասնաբուծական համալիրի շինարարությունը։ Համալիրի կառույցը բաղկացած էր 4 խոշոր գոմերից, կաթի երկու բլոկներից, մատղաշի պահպանության 3 շենքերից, զոոսանիտարական մասնաշենքից և կաթնայատնից[12]։

1980 թ. Ջրառատի սովխոզն ուներ 1217 հեկտար ցանքատարածություն։ Տնտեսությունն ուներ 2099 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր 800 գլուխ։ Մեկ կովի կաթնատվությունը 1980 թ. հասավ 3800 կիլոգրամի։ Տնտեսությունն ուներ իր նյութատեխնիկական բազան՝ 25 տրակտոր, 2 կոմբայն, 40 ավտոմեքենա և այլ գյուղատնտեսական մեքենաներ և սարքեր։

Հրազդանում գյուղատնտեսության կարևոր խնդիրներից մեկը, որ հաջողությամբ է իրականացվում, դա անասնաբուծության փոխադրումն է արդյունաբերական հիմքի վրա։

Հանրապետության առաջին կաթնային համալիրը գործարկվել է Հրազդանի շրջանի Ջրառատ գյուղում։ Համալիրը գյուղատնտեսական արտադրական պրոցեսների կոմպլեքս մեքենայացման, գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների կիրառման ցայտուն օրինակ է։ 1978 թ. այստեղ ներդրվեց աշխատանքների կազմակերպման հոսքային-արտադրամասային սիստեմը, որի շնորհիվ զգալիորեն բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը և կաթի համախառն արտադրության ծավալը։

Եթե 1976 թ. Ջրառատի սովխոզում մեկ կովի միջին կաթնատվությունը կազմել էր 2200 կիլոգրամ, ապա հնգամյակի վերջում այն հասել է 3800 կիլոգրամի։

Հայաստանի Կոմկուսի կազմավորման 60-ամյակի նախօրյակին շահագործման հանձնվեց համալիրի երկրորդ հերթը 400 գլուխ կովի համար։ Դրանով համալիրի ընդհանուր հզորությունը հասցվեց 1200 գլխի[13]։

Ջրառատցիների օրինակով շրջանի բոլոր տնտեսություն-

---

12 «Հրազդան», 1973, 24 մայիսի։

13 Ա. Թումոյան, Հրազդանի շրջանը, Երևան, 1981, էջ 20—21։

ներում շարունակվում է տիպային տնասնագոմերի կառուցումը, որտեղ մեքենայացվում են աշխատատար բոլոր գործողությունները։

Ջրառատի համալիրը բարձր մեքենայացված ձեռնարկություն է իր բոլոր հարմարություններով։

1980 թ. առաջին կիսամյակում անասնապահական աշխատանքներն ավելի ամուր հիմքերի վրա դնելու համար ՀԿԿ Հրազդանի շրջկոմը և ժողովրդական դեպուտատների շրջանային սովետի գործկոմը փոխանցիկ կարմիր դրոշը շնորհեցին Ջրառատի սովխոզին։ Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կաթի արտադրությունն ավելացել էր 3382 լիտրով, մասնավորապես՝ 125 ցենտներով։ Մեկ կովի կաթնատվությունը բարձրացել էր 334 լիտրով[14]։ Համեմատաբար ավելացել էին պետությանը հանձնվող անասնապահական մթերքները, նվազագույնի էին հասցվել անկումներն ու հարկադիր մորթերը։

10-րդ հնգամյակում համաչափ ու արդյունավետ սկսեց գործել հանրապետությունում առաջին կաթնային համալիրը, որով շրջանում դրվեց անասնապահության մասնագիտացման ու համակենտրոնացման հիմքը։

10-րդ հնգամյակի առաջին իսկ տարում համալիրը հասավ գոհացուցիչ արդյունքների, նախատեսված 783-ի դիմաց արտադրվեց 1025 տոննա կաթ[15]։ Արմատապես փոխվեց աշխատանքի որակը, բարձրացավ արտադրողականությունը, իջավ արտադրանքի ինքնարժեքը։

Համալիրի գործունեության երրորդ տարում ներդրվեց հոսքագիծ օդակալին սիստեմը, բարձրացվեց կթվոր-օպերատորների նյութական շահագրգռվածությունը։ Անվանի կթվոր-օպերատորներ Ագնեսա Մարտիրոսյանը և Զոյա Ամիրշատյանը նվաճեցին հինգ հազարի բնագիծը։

Գյուղատնտեսական արտադրության մեջ ձեռք բերված հաջողությունները պայմանավորված են նաև նրանով, որ Հրազդանի կուսշրջկոմը մոբիլիզացնելով սկզբնական կու-

---

14 «Հրազդան», 1980, 26 հուլիսի։

15 «Սովետական Հայաստան», 1981, 26 սեպտեմբերի։

սակցական կազմակերպությունների ջանքերը, կարողացել է լուծել կոլտնտեսությունների և սովխոզների սոցիալ-տնտեսական գիտությունների նվաճումների և փորձի արմատավորման մի շարք կարևոր հարցեր։

1980 թ. խոտհնձի և բերքահավաքի ընթացքը ցույց տվեց, որ միջտնտեսային ձեռնարկությունն իրեն լիովին արդարացնում է։ Տեխնիկայի համակենտրոնացման շնորհիվ, ի տարբերություն նախորդ տարիների, հացահատիկային կուլտուրաների հնձից հետո անմիջապես կատարվեցին ծղոտի հավաքագրման, տեղափոխման, դաշտերի պարարտացման, վարի, ցանքի և մնացած բոլոր աշխատանքները։ Դրանից բացի, այդ փորձի կիրառմամբ 15—20 օրով կրճատվեցին կերերի պատրաստման, հացահատիկային կուլտուրաների բերքահավաքի, աշնանացանի և ցրտհարկերի կատարման ժամկետները։ Ապահովվեց կատարված աշխատանքների բարձր որակը, խնայվեցին մեծ քանակությամբ վառելանյութ և պահեստամասեր[16]։

Երկրի առաջավոր շրջանների, մասնավորապես, իպատովցիների օրինակով 1980 թ. գարնանը Հրազդանում կազմակերպվեց գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման միջտնտեսային ձեռնարկությունը, ուր կենտրոնացվեց 14 կոլտնտեսությունների ու սովխոզների տեխնիկան։ Կերի կուտակման գործը հանձնարարվեց գյուղտեխնիկայի շրջանային միավորման հմուտ մեխանիզատորներին։ Ստացվեց լավ արդյունք։ Եթե 1978 թ. շրջանը պատրաստել էր ընդամենը 7 հազար տոննա սիլոս ու սենաժ, ապա 1980 թ. այն հասավ 22 հազար տոննայի։ Կիսով չափ պակասեցին ծախսերը և տրվեց ժամանակի խնայողություն։

Չորս հարյուր տոննա տարողությամբ խրամատը նախկին 15—16 օրվա փոխարեն լցվեց երկու կամ երեք օրում։ 1981 թ. 3 բրիգադները պատրաստեցին 39 հազար տոննա սիլոս ու սենաժ։ Հնձեցին 700 հեկտար արտ, ցանեցին 80

16 Ս. Թումոյան, Հրազդանի շրջան, էջ 19—20։

հեկտար կարտոֆիլ, 1600 հեկտար հացահատիկ, պարարտացրին երկու հազար հեկտար տարածություն։

Հրազդանցիների նոր նախաձեռնությունը տարեկան տվեց 100—120 տոննա վառելանյութի, 5—6 հազար ռուբլու պահեստամասերի խնայողություն, անհամեմատ բարձրացավ մեխանիզատորների զբաղվածության աստիճանը, տրակտորների ու գյուղգործիքների ծանրաբեռնվածությունը, արտադրողականությունը։

Ելնելով դրական այս արդյունքներից, ամբողջ տեխնիկան դրվեց այդ նոր ձեռնարկության տրամադրության տակ և ընդարձակվեց այդ ծառայությունների ոլորտը։

* * *

ՍՄԿԿ 26-րդ համագումարը անասնապահությունը համարեց հարվածային ճակատ գյուղում։ Գյուղատնտեսության այդ կարևորագույն ճյուղի փոխադրումն ինդուստրիալ հիմքերի վրա, նրա հետագա ինտենսիվացման ապահովումը, մթերատվության ըստ ամենայնի բարձրացումը ակտուալ ու առաջնային հարց է, որը պայմանավորված է կերի կայուն բազայի ամրապնդումով։

Կերարտադրության և կերերի վերամշակման հարցերին էր նվիրված ՍՄԿԿ Կենտկոմի գյուղատնտեսական բաժնի նախաձեռնությամբ Անդրկովկասյան սեմինարը, որը տեղի ունեցավ 1981 թ. սեպտեմբերի 25-ին Հրազդանում։

Սեմինարին մասնակցում էին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմների և մինիստրների պատասխանատու աշխատողներ, կուսշրջկոմների առաջին քարտուղարներ, ժողովրդական դեպուտատների շրջսովետների գործկոմների նախագահներ, գյուղատնտեսության մինիստրությունների և գերատեսչությունների ղեկավարներ, գիտության գործիչներ, արտադրության մասնագետներ և առաջավորներ։

Սեմինարը ներածական խոսքով բացեց ՀԿԿ Կենտկոմի

առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը։ Նա վստահություն հայտնեց, որ փորձի փոխանակումը բեղմնավոր կերպով կանդրադառնա կերարտադրության և անասնապահության արդյունավետության բարձրացման վրա։

Սեմինարի անցկացման տեղի ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ հենց Հրազդանի շրջանում են կոմպլեքսայնորեն և արդյունավետ կերպով լուծվում կերարտադրության ու կերերի վերամշակման հարցերը գիտության և առաջավոր պրակտիկայի նվաճումների հիման վրա։ Շրջանի տնտեսությունները կերի պաշարների հմուտ և ռացիոնալ օգտագործման շնորհիվ կարողացել են վերջին 5 տարում մեկ կովի կաթնատվությունը բարձրացնել 660 կիլոգրամով, իսկ խոշոր եղջերավոր անասունների հանձնման միջին քաշը ավելացնել 66 կիլոգրամով և հասցնել 349 կիլոգրամի[17]։ Ընդ որում զգալիորեն նվազեցրել են գնովի կերերի բաժինը։

Հրազդանցիները զգալի աշխատանք են կատարել գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման, գիտության նվաճումների և առաջավոր փորձի ներդրման, ներքին ռեզերվների հայտնաբերման և նպատակասլաց օգտագործման ուղղությամբ։

Շեֆ ձեռնարկությունները սպահովում են կոլտնտեսությանը մեծ պահանջարկ ներկայացնող շինանյութերով, մեքենաներով, նախագծերով, պահեստամասերով, սարքավորումներով ու այլ նյութերով, իսկ բերքահավաքի ժամանակ նաև բանվորական ուժով։ Արդյունաբերական ձեռնարկությունները շեֆ տնտեսություններին օգնում են արտադրության նոր սարքերի իրացման ու շահագործման խիստ կարևորություն ներկայացնող հարցերում։

Այսօրվա Հրազդանի 3 սովխոզներն իրենցից ներկայացնում են ժամանակակից տեխնիկայով հագեցված մեծ էներգոկինված ությամբ նյութական ամուր բազա ունեցող տնտեսություններ, որոնք մսի, կաթի, բրդի, հայահատիկի, բան-

---

17 «Սովետական Հայաստան», 1981, 26 սեպտեմբերի։

ջարդների արտադրության ու վաճառքի գծով պլանները միշտ գերակատարել են, բարձրացրել են մեկ կոմի կաթնատվությունը։

Հանրապետությունում հրազգանցիները առաջինը անասնապահությունը դրեցին ինդուստրիալ ռելսերի վրա, և այդ փորձը մասսայականացրել են Անդրկովկասի անասնապահության բնագավառի աշխատողների մեջ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄԸ

Սովետական իշխանության հաստատումից հետո ժողովրդական տնտեսության, հատկապես, հասուն սոցիալիզմի շրջանում արդյունաբերության զարգացման շնորհիվ, հանրապետության նախկինում ոչ մեծ քաղաքները դարձան արդյունաբերական խոշոր կենտրոններ, իսկ գյուղական որոշ վայրեր ինդուստրացման քաղաքականության շնորհիվ վերածվեցին սոցիալիստական նոր քաղաքների կամ քաղաքատիպ ավանների։

«Ներկայումս հանրապետության միջին, փոքր քաղաքների և ավանների թողարկած արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը կազմում է ամբողջ արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալի մոտ 35 տոկոսը։ Այդ քաղաքներում ու ավաններում արդյունաբերական արտադրության ծավալների աճի տեմպերը 2,4 անգամ, իսկ արտադրական անձնակազմինը 2,2 անգամ ավելի բարձր են, քան Երևանում, Լենինականում, Կիրովականում»[1]։

Միջին և փոքր քաղաքներում արդյունաբերության զարգացումը սոցիալական հատուկ նշանակություն ունի, այն նվազեցնում է միգրացիան հանրապետության ներսում, փոխում է դրանց դեմքը, բնակչությանը մասնակից է դարձնում տեխնիկապես հագեցված, բարձր կազմակերպված ինդուստրիալ աշխատանքին։

«Հայաստանի այսօրվա ինդուստրիայի դեմքը բնորո-

---

1 Կ. Ս. Դեմիրճյան, *Սովետական Հայաստան*, Երևան, 1980, էջ 39—40։

շում են տեխնիկական բարձր զինվածությունը, արտադրության տեխնոլոգիայի կազմակերպման, կառավարման և կուլտուրայի արդիական մակարդակ ունեցող հարյուրավոր միավորումներն ու արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք ցողարկում են հազարավոր անուն բարդ ու բարձրորակ արտադրատեսակներ։ Դա բազմաճյուղ ինդուստրիա է, որի մեջ արագ տեմպերով է զարգանում մեքենաշինությունը, այդ թվում՝ էլեկտրատեխնիկական, ռադիոտեխնիկական, էլեկտրոնիկան, սարքաշինությունը, հաստոցաշինությունը և գիտատեխնիկական առաջադիմությունը որոշող ճյուղերի նոր ուղղությունները։ Դա մի ինդուստրիա է, որն ապահովում է ժողովրդական սպառման ապրանքների լայն տեսականուն արտադրությունը։ Դա երկրի միասնական ժողովրդատնտեսական կոմպլեքսի լայն կոոպերացված կապերի ինդուստրիա է»[2]։

Սովետական քաղաքաշինության զարգացման գլխավոր գործոնը դարձավ արդյունաբերությունը, որը և կազմում է քաղաքային բնակչության գլխավոր զբաղմունքը։

Հայաստանում ստեղծվեց ու լայն զարգացում ստացավ շինարարական ինդուստրիան, ձևավորվեցին ու աճեցին բանվորների և ինժեներատեխնիկական որակյալ աշխատողների հիանալի կադրեր։ Պայմաններ ու հնարավորություններ ստեղծվեցին այնպիսի խոշոր ու բարդ կառույցներ իրականացնելու համար, ինչպիսին են Արփա-Սևան ստորգետնյա ջրատարը, Երևանի, Կիրովականի, Հրազդանի ջերմաէլեկտրակենտրոնները, Հոկտեմբերյանի ատոմակայանը, Երևանի մետրոպոլիտենը և այլ բարդ կառույցներ։ Այժմ շինարարական հզոր ինդուստրիալ բազան հանրապետության տնտեսության հետագա զարգացման երաշխիքն է։

Արդյունաբերության զարգացման արագ տեմպերը պայմանավորված են ժողովրդական տնտեսության մեջ ներդրված գումարների վիթխարի մասշտաբներով։ Եթե հանրապետու-

---

2 Կ. Ս. Գևորգյան, Հոկտեմբերի լուսաշող հանդարտով, Երևան, 1981, էջ 27—28։

թյան ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումները 1921—1928 թթ. կազմել են 10 միլիոն ռուբլի, ապա 1980 թ. այն հասել է 1,081 միլիոն ռուբլու։ 1921—1981 թթ. այսինքն՝ սովետական իշխանության 60 տարիներին ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել է 17,280[3] միլիոն ռուբլի, որի ճնշող մասը հատկացվել է արդյունաբերությանը։ Դրա շնորհիվ քաղաքաշինական աշխատանքները լայն թափ են ստացել ամբողջ հանրապետությունում։ Մասսայական բնակարանային շինարարություն է կատարվում ոչ միայն խոշոր քաղաքներում՝ Երևանում, Լենինականում, Կիրովականում, այլև նոր շրջաններ են կառուցապատվում Հրազդանում, Աբովյանում, Չարենցավանում, Քաջարանում և ուրիշ արդյունաբերական կենտրոններում։ Զգալի աշխատանքներ են կատարվել Հայաստանի գյուղական վայրերի կառուցապատման գործում։ Գյուղերը կառուցապատված են երկհարկանի քարակերտ գեղեցիկ շենքերով՝ իրենց բանջարանոցներով և պտղատու այգիներով։

* * *

1920-ական թվականների կեսերին ճարտարապետության ակադեմիկոս Ալ. Թամանյանը նախագծել է Ախտա գյուղի հատակագծման առաջին սխեման, ներառնելով Հրազդան գետի վրա Ջրաղացներ կոչվող թաղամասը։

Հրազդան նոր քաղաքի առաջին հատակագիծը կազմվել է «Հայարդնախագիծ» հանրապետական ինստիտուտում, Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետ Մարկ Գրիգորյանի ղեկավարությամբ։ Հատակագիծը, որը կազմվել է 1962—1980 թթ., հաշվարկման ժամկետով, հաստատվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1963 թ. մարտի 9-ի որոշմամբ։

Հրազդանը հանդիսանում է բարձր լարման էլեկտրահաղորդման ցանցի կենտրոններից մեկը, որը միացված է Անդր-

---

3 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության համապատասխան բաժնից։

կովկասի միասնական էներգետիկ համակարգին, այնտեղով է անցնում Ղարադաղ-Աղստաֆա-Երևան գազամուղը և Երևան-Սևան երկաթուղին։ Հրազդանն աշխարհագրական դիրքով հանրապետության գեղատեսիլ վայրերից մեկն է։ Նրա ընդերքը հարուստ է տարբեր հանքային հումքի պաշարներով։

Հրազդանի գլխավոր հատակագիծը կազմել են ճարտարապետներ Մ. Գրիգորյանը, Է. Ալթունյանը և Ն. Շաքարյանը։ Նրանք հինելով բարդ տեղանքից ընտրել են հատակագծման ազատ համակարգ։ Այսինքն, ճարտարապետական կոմպլեքսի մեջ վերցրել են բլուրները, սարալանջերը, անտառային տարածությունները, Հրազդան գետը, արհեստական լիճը, հանգուցային ուղիները այն հաշվով, որ դրանք օրգանապես կապված լինեն քաղաքի ընդհանուր ճարտարապետական համալիրին։ Ըստ այդ հատակագծի, քաղաքն ունենալու է հիմնական շրջան՝ իր դպրոցական, նախադպրոցական, առևտրի, հասարակական սննդի և կենցաղային սպասարկման օբյեկտներով։ Հրազդանի կենտրոնը գտնվելու է երկաթուղային կայանի մոտ ընդգրկելով Մաքրավանի թաղամասը՝ շուրջ 100 հեկտար տարածությամբ։

20 և ավելի տարիներ Հրազդանում կառուցապատման աշխատանքներ կատարվել են և այժմ էլ շարունակում են կատարվել «Հայարդնախագիծ» ինստիտուտի մշակած առաջին հատակագծով։

Դեռևս 1959—60 թթ. Հրազդանում հիմնվեցին առաջին փայտե տնակները, ուր ժամանակավորապես տեղավորվեցին էլեկտրակառույցի շինարարները։ Կարճ ժամանակամիջոցում հայտնվեցին նաև քարե շենքերը։ Այդ շենքերի առաջին բնակիչները դարձան Դյումուշի, Արզնու, Աթաբեկյանի հիդրոէլեկտրակայանների կառուցողները, ինչպես նաև Մոսկվայից, Լենինգրադից, Ռոստովից, Բաքվից, Թբիլիսիից և այլ քաղաքներից եկած մասնագետները։

Դեռևս 1967 թ. սկսած Հրազդանում կառուցապատվում են նախկինում լեռնաքիմիական կոմբինատի Գ-2 (ճարտարապետ՝ Գ. Գրիգորյան) և Գ-1 ու Գ-2 (ճարտարապետ՝ Է. Ալթունյան) միկրոշրջանները։ Ջրառատ գյուղի հյուսիսային մասում, որը

մի ժամանակ քարքարոտ ու ամայի տարածություն էր, հիմնադրվեց Հրազդանի № 1 միկրոշրջանը։ Ջրառատից ասֆալտապատ փողոցը թեքվում է դեպի միկրոշրջան, ուր կառուցված են բազմաթիվ եռահարկ և քառահարկ բնակելի շենքեր։ Դրանց առաջին հարկերում տեղավորված են արդյունաբերական ու մթերային խանութները, գրախանութը, ճաշարանը, դեղատունը և բնակչության կենցաղսպասարկման օբյեկտները։ Գ-2 միկրոշրջանում բնակվում է 13 հազար մարդ՝ զբաղեցնելով 117 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։ Այդ միկրոշրջանում մեծ քանակությամբ բնակելի շենքեր շահագործման են հանձնված դեռ 1968—1970 թթ.։ Վերոհիշյալ միկրոշրջան-բանավաններն ունեն իրենց ջրատարը, կոյուղին, ջեռուցման սիստեմը, բնական գազը, էլեկտրացանցը, ինչպես նաև դպրոցները, մանկապարտեզները, կուլտուր-լուսավորական հիմնարկները, առևտրի, հասարակական սննդի և կենցաղ սպասարկման օբյեկտները։ Այդ միկրոշրջաններում բարեկարգման աշխատանքների հետ շարունակվում են նաև կառուցապատման աշխատանքները։ Հրազդանում միայն 9-րդ հընգամյակի տարիներին կառուցվել ու շահագործման է հանձնվել 120 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, բնակարաններ են ստացել 11 հազար հրազդանցիներ՝ բնակչության 30 տոկոսը։ Այսինքն՝ այդ 5 տարիներին այնքան պետական շենքեր են կառուցվել, որքան նախորդ բոլոր տարիներին՝ միասին վերցրած։

* * *

Հրազդանի նորակառույց հասարակական կենտրոնը Հրազդան գետի (լճից դեպի վեր) և Աթարբեկյան-Հրազդան մայրուղու աջ մասում է, որը զբաղեցնում է 62 հեկտար հարթ տարածություն։

Հրապարակի և այդ կանաչապատ մայրուղու շուրջը ձգված են խոշոր միկրոշրջանները, իսկ հրապարակի վրա կենտրոնացված են վարչական և հասարակական շենքերը։ Կենտրոնի կառուցապատման աշխատանքներն սկսվել են դեռևս 1965 թ.

ըստ «Հայլրդնախագիծ» ինստիտուտի կողմից կազմված գլխավոր հատակագծի։ Նորակառույց կենտրոնում կառուցված առաջին շենքերն են՝ 200 տեղանոց ուսանողական հանրակացարանը, այնուհետև ինդուստրիալ տեխնոլոգիական տեխնիկումի համալիրը և ապա պիոներների պալատը։

1968—69 թթ. նախագծվել և ապա 1974 թ. շահագործման է հանձնվել 7 հարկանի սպիտակ ֆիլղիտով երեսապատված վարչական շենքը, որի ծավալը կազմում էր 30 հազար քառակուսի մետր։ Վարչական շենքում տեղավորված են ՀԿԿ Հրազդանի շրջանային կոմիտեն, ժողովրդական դեպուտատների Հրազդանի շրջանային սովետի գործադիր կոմիտեն և բաղաքային սովետը։ Շենքն ունի 40 տեղանոց դահլիճ։ Այդ շենքը հատուկ տեղ է գրավում կենտրոնի կառուցապատման մեջ։ Առաջին հարկի ընդլայնական կամարներով երկարաձիգ սրահը հրապարակը միաձուլում է կառուցվածքի ներքին տարածության հետ։

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թ. հունվարի 20-ի որոշմամբ Հրազդանի նոր կենտրոնի կառուցապատման նախագիծը փոխվեց 9 և 14 հարկանի բնակելի տների կազմով և սկսվեց այդ նոր շենքերի շինարարությունը (ճարտարապետներ՝ Գ. Գրիգորյան և Մ. Միքայելյան)։

Նորակառույց կենտրոնի բնակելի ընդհանուր տարածությունը ըստ նախագծի կազմելու էր 315 հազար քառակուսի մետր։ Քաղաքի այդ հատվածում բնակչության ընդհանուր թիվը կազմելու էր 25 հազար մարդ[4]։ Գործելու են երկու միջնակարգ դպրոցներ (3136 տեղով) և 6 մանկապարտեզ (1720 տեղով)։

Բնակչության թվին համապատասխան նախատեսված է կառուցել բազմաթիվ կուլտուր-կենցաղային սպասարկման օբյեկտներ։ Հրազդանի նորակառույց հասարակական կենտրոնում կառուցվել է պիոներ-դպրոցականների պալատի շենքը (ճարտարապետ՝ Ստեփան Քյուրքչյան), որի գլխավոր ծավալի մեջ տեղադրված են 600 տեղանոց դահլիճը, լողավազանը,

---

[4] Տվյալները վերցված են «Հայպետնախագիծ» ինստիտուտի համապատասխան բաժիններից։

սպորտային հրապարակները և բազմաթիվ սենյակներ ինքնագործ խմբակների համար։ Շենքը շահագործման է հանձնվել 1979 թ.։ Այնտեղ կառուցվել է նաև սպորտդպրոցի շենքը։ Ավտոկայանի շենքը (ճարտարապետ՝ Հենրիկ Առաքելյան) իր բոլոր հարմարություններով շահագործման է հանձնվել 1981 թ.։ Կապի տիպային շենքը (ճարտարապետ՝ Ռաֆիկ Ասցատուրյան) շահագործման է հանձնվել 1982 թ.։ 1979 թ. շահագործման է հանձնվել էներգետիկների մշակույթի երկհարկանի պալատը, որն ունի 600 տեղանոց դահլիճ և բազմաթիվ սենյակներ ինքնագործ խմբակների և գրադարան-ընթերցարանի համար։ Շենքի ճակատին փորագրված է բանաստեղծ-դրամատուրգ Արտավազդ երկրորդ թագավորի դիմանկարը։ Շենքի նախագծի հեղինակն է ճարտարապետ Լևոն Հովհաննիսյանը։

Բացի վերոհիշյալ շենքերից քաղաքի կենտրոնում կառուցվել և շահագործման են հանձնվել շուրջ երկու տասնյակ 5 և 9 հարկանի բնակելի շենքեր։

Հանգամանորեն վերլուծելով իրական և բնակլիմայական պայմանները, հատակագծողները քաղաքը բաժանել են երեք հիմնական շրջանների՝ հյուսիսային, կենտրոնական և հարավային։

Հյուսիսային շրջանի նոր թաղամասում գտնվում է Հրազդանի արդյունաբերական հիմնական հանգույցը՝ պետական շրջանային էլեկտրակայանը, ջերմաէլեկտրակայանն ու մի շարք գործարաններ։ Այս թաղամասում ապրում է 15 հազար մարդ։ Այս թաղամասում են գտնվում էներգետիկների կուլտուրայի պալատը, միջնակարգ մասսայական դպրոցները, մի քանի մսուր-մանկապարտեզներ, ինչպես նաև բնակչությանը սպասարկող կոմունալ-կենցաղային օբյեկտներ։

Կենտրոնական շրջանի թաղամասում են գտնվում ՀԿԿ Հրազդանի շրջանային կոմիտեի և ժողովրդական դեպուտատների շրջանային և քաղաքային սովետների շենքը, տեխնոլոգիական տեխնիկումի ուսումնական և հանրակացարանային շենքերի համալիրը, պիոներների պալատը, սպորտ դպրոցը, մարզադաշտը, կապի շենքը։ Ավելի քան 10 տարի է, ինչ այս թաղամասում սկսված է բնակելի բազմաթիվ բարձրահարկ

շենքերի կառուցումը։ Այստեղ արդեն ստեղծվել են բնակելի մի քանի միկրոշրջաններ։

Հարավային շրջանի թաղամասը ընդգրկում է նախկին շրջկենտրոնը, նախկին Ախտա գյուղով։ Այս թաղամասում են գտնվում հացի, ոչ ալկոհոլային խմիչքների, կաթի գործարանները, կենցաղսպասարկման կոմբինատը, քիմիական մաքրման ֆաբրիկան, Հայգյուղտեխնիկայի Հրազդանի բաժանմունքը, գազի շահագործման և էլեկտրամոնտաժային վարչությունները, քաղաքային կուլտուրայի տունը, հանրախանութը, քաղաքային զբոսայգին, կինոթատրոնի շենքը և այլն։ Այս թաղամասում գործում են մի քանի միջնակարգ դպրոցներ, մսուր-մանկապարտեզներ տիպային շենքերով։ Թաղամասում են գտնվում պոլիկլինիկան, ծննդաբերական հիվանդանոցը, կապի բաժանմունքը, շուկան, հյուրանոցը, ինչպես նաև Հրազդանի սովխոզը։

Գեղատեսիլ լեռնային բնությունը, մաքուր օդը և հանքային ջրերը հռչակել են Հրազդանի փառքը, դարձրել այն համամիութենական նշանակություն ունեցող առողջարանային գոտի։ Տարիների ընթացքում Ծաղկաձորում, Հանքավանում, Հրազդանում կառուցվել են բազմաթիվ առողջարաններ, սանատորիաներ, պիոներական ճամբարներ, ուր ամեն տարի հանգստանում են տասնյակ հազարավոր մարդիկ։

Քաղաքի գեղեցկուհին, նրա զարդը լիճն է (108 հեկտար), որը գոյություն ունեցող բլրի պատճառով բաժանվել է երկու մասի։ Նոր հատակագծով նախատեսվում է լճափերի կանաչապատում և բարեկարգում, որն արդեն իրականացվում է։

Հրազդանի հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1967 թ. մարտի 24-ի հրամանագրով հանրապետական ենթակայության քաղաքների շարքը դասվելը։ Դրանով Հրազդանն ստացավ իրավական, տնտեսական զարգացման նոր հնարավորություններ, որոնք վճռական դեր խաղացին Հրազդանում քաղաքաշինության զարգացման, աշխատավորների նյութական ու կենցաղային պայմանների բա-

ելավման, կուլտուրական մակարդակի բարձրացման գործում։

Մինչև 1958—1960 թթ. Հրազդանի տնտեսության համար բնորոշ էր գյուղատնտեսական արտադրությունը, որի հետևանքով էլ բնակչության աճը տեղի էր ունեցել շատ դանդաղ։ 1831 թ. մինչև 1931 թ. Հրազդանի բնակչությունը 339 հոգուց հասել է մինչև 4067 հոգու։ 1939 թ. սկսած, հատկապես յոթնամյակի և նրան հաջորդած հնգամյակների տարիներին, Հրազդան քաղաքում ծանր արդյունաբերության զարգացման հետևանքով բնակչության թիվն աճել է առավել արագ տեմպերով։ 1950 թ. այն հասել է 7095 հոգու, 1955 թ. 9350-ի, 1960 թ.՝ 14900-ի, 1965 թ.՝ 18352-ի, 1970 թ.՝ 28256-ի, 1976 թ.՝ 35137-ի[5], 1980 թ.՝ 44,500-ի, իսկ 1982 թ. 48 հազարի[6]։ Հրազդանի բնակչությունը զգալիորեն ավելացել է նաև հայրենադարձության հաշվին։

Անցած 10 տարիներին (1964—1974 թթ.) Հրազդանում բնակություն են հաստատել շուրջ 700 հայրենադարձ ընտանիքներ, 3400 անդամներով։ Նրանք եկել են Իրանից, Սիրիայից, Եգիպտոսից, Լիբանանից, Կիպրոսից և այլ վայրերից։ Հրազդանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեն նրանց ապահովել է բնակարաններով և աշխատանքով։ Հայրենադարձները աշխատանք ստացան ըստ մասնագիտության, ընտանիքներ կազմեցին, ընտելացան նոր պայմաններին։ Երեխաները սովորում են դպրոցներում, պատանիներն ու երիտասարդները միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Հրազդանում մշտական բնակություն են հաստատել նաև Ադրբեջանի, Վրաստանի Հայաշատ վայրերից և Հանրապետության մի շարք բնակավայրերից։

Ինչպես նկատվում է Հրազդանում քաղաքային բնակչության թիվը մեծացել է բնական աճի, այլ քաղաքներից եկած-

---

5 Տվյալները վերցված են Հրազդանի շրջսովետի գործադիր կոմիտեի վիճակագրական վարչությունից։

6 Նույն տեղում։

ների և ներգաղթի միջոցով։ Բնակչության աճման կապակցությամբ բնականաբար կատարվում են բնակարանային շինարարության և քաղաքի բարեկարգման աշխատանքներ։ Հրազդանում որոշակի վերելք է ապրել նաև կոմունալ բնակարանային տնտեսությունը։ Այն իր մեջ ընդգրկում է բնակչության կենցաղային պայմանների բարելավման այնպիսի կարևոր բնագավառներ, ինչպիսիք են պետական և անհատական բնակարանային շինարարությունը, ջրամատակարարումը, կոյուղացումը, գազիֆիկացումը, էլեկտրալուսավորումը, կենցաղային սպասարկման օբյեկտների ընդարձակումը, կանաչապատումը, ճանապարհային տնտեսությունը, փողոցների բարեկարգումը և այլն։

Հրազդանի բնակելի ֆոնդի աճը (հազար քառակուսի մետրերով)

	1960 թ.	1965 թ.	1970 թ.	1975 թ.	1980 թ.
Ընդհանուր տարածությունը	76,1	225,9	306,1	381,6	665,5
Որից բնակելի տարածությունը	47,6	151,2	201,7	248,7	438,3
Պետական բնակ. ընդհ. տարածություն	19,7	98,1	177,2	249,2	389,0
Որից բնակելի տարածությունը	13,0	65,8	115,5	159,2	258,3
Մասնավոր բնակ. ընդհ. տարածություն	56,4	127,8	128,9	132,4	276,5
Որից բնակելի տարածությունը	34,6	85,4	86,2	88,9	180,1[7]

Այդ կապակցությամբ տարեցտարի աճում է աշխատավորների դեպուտատների Հրազդանի քաղաքային սովետի բյուջեն[8]։ Եթե 1965 թ. այն եղել է 3820 հազար ռուբլի, ապա

7 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության համապատասխան բաժնից։

8 Տվյալները վերցված են Հրազդանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի ֆինանսական բաժնից։

1970 թ. հասել է 5,850 հազարի, իսկ 1975 թ. 6,5 միլիոն ռուբլու։ Ընդհանուր բյուջեից կուլտուրական միջոցառումների համար հատկացվել է 2,5 միլիոն, իսկ կոմունալ բնակարանային շինարարության և քաղաքի բարեկարգման համար՝ 3,5 միլիոն ռուբլի։

1980 թ. քաղաքային սովետի բյուջեն հասավ 7,6 միլիոն ռուբլու։ Այդ գումարի ճնշող մեծամասնությունը ծախսվել է կոմունալ բնակարանային շինարարության և քաղաքի բարեկարգման վրա։

Եթե 1960 թ. մեկ բնակչին ընկնող բնակելի տարածությունը կազմել է 5,6 քառակուսի մետր, ապա 1980 թ. արդեն կազմել է 9,9 քառակուսի մետր[9]։

1980 թ. Հրազդանում շահագործման հանձնվեց 24 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։ Միայն 10-րդ հնգամյակի տարիներին շահագործման է հանձնվել 90 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։ Շուրջ 4 հազար ընտանիքներ, կամ 15 հազար մարդ[10] ապահովվել են բնակարաններով։

Հրազդանը յուրահատուկ քաղաք է։ Այն ի տարբերություն հանրապետության մյուս քաղաքների, հիմնվել է իրարից բավականին հեռավորության վրա գտնվող Ախտա (Հրազդան), Աթարբեկյան (Քարվանսարա), Ջրառատ (Ռնդամալ), Վերին աղբյուրակ, Ներքին աղբյուրակ (Ախպարա), Մաքրավան և Կաքավաձոր գյուղերի բաղայի վրա։ Քաղաքն ունի շուրջ 15 կմ երկարություն։ Կոմունալ և բնակարանային սպասարկման պայմանները այդ թաղամասերում գտնվում են տարբեր մակարդակի վրա։

Տարեցտարի ավելանում է քաղաքի զբաղեցրած հողային տարածությունը, եթե 1965 թ. քաղաքը զբաղեցրել էր 752 հեկտար տարածություն, որից 670 հեկտարը տրամադրվել էր

---

9 Նույն տեղում։

10 Ս. Ս. Թումոյան, Հրազդանի շրջանը, էջ 26։

շինարարության համար, ապա 1980 թ. 2943 հեկտարից 1125 հեկտարը տրամադրվել է շինարարության համար[11]։

Հանրագումարի բերելով հանրապետության քաղաքների միջև կազմակերպված սոցմրցության արդյունքները, 1975 թ. առաջին կիսամյակի արդյունքների համար Հրազդան քաղաքին շնորհվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԽ-ի քաղաքների բարեկարգման համար սահմանված մրցանակը և դրամական պարգևը։

9-րդ հնգամյակում քաղաքաշինության նպատակների համար քաղաքի բոլոր պատվիրատու կազմակերպությունների կողմից ներդրվել է 33 միլիոն ռուբլի։ Այդ գումարները ծախսվել են բնակարանային, կուլտուրակենցաղային, առևտրի, դպրոցական, մսուր-մանկապարտեզների կառուցման, քաղաքի բարեկարգման և կանաչապատման համար։ Հրազդանում քաղաքի սանիտարական մաքրման, ջրամատակարարման, կոյուղու, կանաչապատման ու ծառատնկման աշխատանքները ղեկավարում է քաղսովետի կոմունալ սպասարկման և բարեկարգման գրասենյակը, որի տարեկան բյուջեն տարեցտարի ավելանում է։ Եթե բարեկարգված փողոցների միագիծ երկարությունը 1960 թ. եղել է 50,7 կմ, իսկ լուսավորված փողոցների երկարությունը՝ 40 կմ, ապա տասնհինգ տարի հետո, այսինքն 1975 թ. բարեկարգված փողոցների միագիծ երկարությունը հասել է 137 կմ, լուսավորված փողոցների երկարությունը՝ 95 կմ, 1980 թ. բարեկարգված փողոցներինը՝ 210 կմ, իսկ լուսավորված փողոցների երկարությունը՝ 150,0 կմ[12]։

Երկար տարիներ Հրազդանն ուներ խմելու ջրի կարիք։ 1968 թ. շահագործման հանձնվեց նոր ջրմուղը։ Առաջիկա տարիներին կառուցվելու է Հրազդան քաղաքի նոր ջրհան կայանը՝ իր արտաքին քաղաքային ցանցով, ջրամբարներով։ Այդ կա-

---

11 Տվյալները վերցված են ՀՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության համապատասխան բաժնից։

12 Նույն տեղում։

ռուբլի վրա ծախսվելու է շուրջ քսան միլիոն ռուբլի։ Տարեցտարի ընդարձակվում է քաղաքի կոմունալ ցանցը։ Քաղաքային ջրատարի փողոցային ցանցի միագիծ երկարությունը եթե 1960 թ. 12,5 կմ էր, ապա 1975 թ. հասավ 67,3 կմ, իսկ 1980 թ.՝ 74,1 կմ և եթե ջրատարից ջրի մատակարարումը 24 ժամում 29,6 հազար խորանարդ մետր ջրի, իսկ 1980 թ. մոտ 35 հազար խորանարդ մետր[13] ջրի։ Քաղաքն ապահովված է ինչպես խմելու լավորակ տեղի աղբյուրների ջրով, նույնպես և գետերի ջրով։

Քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները, ինչպես նաև կոմունալ տնտեսությունն ապահովված են գոլորշիով, ջեռուցմամբ, տաք ջրամատակարարմամբ, էլեկտրամատակարարմամբ և գազով։ Ընդարձակվեց նաև քաղաքի կոյուղու ցանցը։ Կոյուղու փողոցային ցանցի միագիծ երկարությունը 1965 թ. 12,4 կմ էր, 1975 թ. 21,6, իսկ 1980 թ. 39 կմ[14]։

Հրազդանում կանաչապատ տարածությունը 1970 թ. եղել է 172,5 հեկտար, իսկ 1980 թ. այն հասել է 290 հեկտարի[15]։

Անցյալում Հրազդանի հյուրանոցը եղել է 40 տեղանոց, 250 քառակուսի մետր բնակելի մակերեսով, մի անհրապույր, հարմարություններից զուրկ շենքում։ 1969 թ. Շահումյան փողոցի վրա քաղաքի մուտքի մոտ շահագործման հանձնվեց հյուրանոցի 5 հարկանի նոր շենքը (ճարտարապետ՝ Հրանտ Աշյան) 132 տեղով, մոտ հազար քառակուսի մետր բնակելի տարածությամբ։

* * *

Հրազդանը ոչ միայն մեքենաշինարարների, էներգետիկների, այլև շինարարների քաղաք է։ Շինարարները իրենց կառուցած նորանոր շենքերով օրեցօր գեղեցկացնում են քաղաքը։

---

13 Նույն տեղում։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում։

Տարիներ առաջ Հրազդանը որպես գյուղատնտեսական շրջան չուներ որակյալ շինարարական կադրեր, փորձված բանվորներ, ինժեներատեխնիկական աշխատողներ, որոնք կարողանային գլխավորել շինարարական խոշոր կառույցների և քաղաքի կառուցապատման և բարեկարգման աշխատանքները։ Այն ժամանակ կառուցապատման աշխատանքներում ներգրավված էր աշխատուժի միայն 50—60 տոկոսը, իրացվում էր կապիտալ շինարարության համար հատկացված միջոցների հազիվ կեսը, շինարարական աշխատանքների որակը ցածր էր։ Տարիների ընթացքում այդ ուղղությամբ աշխատանքները կարգավորվեցին, աճեցին բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների նոր կադրեր, ստեղծվեց նյութատեխնիկական հարուստ բազա՝ հագեցված նորագույն սարքավորումներով։ Նյութատեխնիկական բազայի ստեղծման շնորհիվ ֆիզիկական աշխատանքի մեծ մասը մեքենայացման ենթարկվեց, ստեղծվեցին արդյունաբերական գոտիներ։ Հրազդանի շրջանում մինչև 1962 թ. միակ շինարարական կազմակերպությունը Գյումուշ գեսի շինգլխամասային հանգույցի շինարարական վարչությունն էր, որը Աթարբեկյանգեսի շինարարության կապակցությամբ հետագայում վերանվանվեց Աթարբեկյանգեսի շինվարչություն։

1962 թ. լեռնաքիմիական կոմբինատի և Հրազդանի ՋԷԿ-ի շինարարությունը սկսելու նպատակով ստեղծվեց Լեռնաքիմիական կոմբինատի և ՋԷԿ-ի շինվարչությունը։

1964 թ. հունվարի 1-ից կազմակերպվեց Հանրապետության արդյունաբերական շինարարության մինիստրության խոշորագույն տրեստներից մեկը՝ «Հրազդանշին» տրեստը։ Կազմավորման ժամանակ «Հրազդանշին» տրեստը միավորում էր 2 շինարարական վարչություններ, 1966 թ. շինվարչությունների թիվը ավելացավ։ Հետագայում շարք մտան արտադրական կոմբինատը, ավտոբազան, մեխանիկական պարկը, նյութատեխնիկական մատակարարման գրասենյակը։

«Հրազդանշին» տրեստի կոլեկտիվը աշխատանքային առաջին տարում բաղկացած էր 1300 մարդուց։ 1964 թ. շինարարական մոնտաժային աշխատանքների ծավալը կազմում

էր 7 միլիոն ռուբլի[16]։ Հիմնադրման օրից սկսած «Հրազդանշին» տրեստում են աշխատում Աշխատանքային կարմիր դրոշի և Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանակիր, վաստակավոր շինարար Բաբկեն Հայրապետյանը, Աշխատանքային կարմիր դրոշի և Փառքի 2-րդ և 3-րդ աստիճանի շքանշանակիր № 57 շինվարչության տնտեսաշվարկային բրիգադի բրիգադիր Մկրտիչ Հովհաննիսյանը, № 58 շինվարչության ոմմնադիր Աշխատանքի կարմիր դրոշի շքանշանակիր Գևորգ Ստեփանյանը, էլեկտրափականագործ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Պյոտր Խուդոլը, № 55 շինվարչության բանվոր, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Ջանիբեկ Զոհրաբյանը, Աշխատանքային կարմիր դրոշի և Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանակիր, բուլդոզերավար Երեմ Ասատրյանը, «Պատվո նշանի» շքանշանակիր Արտավազդ Միքայելյանը, «Պատվո նշանի» շքանշանակիր աշխղեկ Նորիկ Խաչատրյանը և շատ ուրիշներ։ 1964 թ. «Հրազդանշին» տրեստի առջև ծառացած էր լեռնաքիմիական կոմբինատի Հրազդան քաղաքի բնակելի, կուլտուր-կենցաղային և այլ օբյեկտների կառուցման աշխատանքները։

1964 թ. դեկտեմբերին, տրեստի ստեղծման առաջին տարեդարձին, շինարարները գնեցին 8848 քառ. մետր բնակելի տարածություն, Հրազդանի պոլիկլինիկայի, 640 տեղանոց դպրոցի, 280 տեղանոց մսուր-մանկապարտեզի[17] և այլ օբյեկտների շահագործման մասին։

«Հրազդանշին» տրեստը 15 տարիների ընթացքում կատարել է 212 միլիոն ռուբլու շինարարական մոնտաժային աշխատանքներ։ Շահագործման են հանձնվել Հրազդանի ցեմենտի արտադրության առաջին և երկրորդ տեխնոլոգիական գծերը, Հրազդանի ավտոձեռնարկության մասնաշենքը, ՀԿԿ Հրազդանի շրջկոմի, շրջսովետի և քաղաքային սովետի վարչական շենքը, 285 հազար քմ բնակելի տարածությամբ, 13 դպրոց 9744

---

16 Տվյալները վերցված են «Հրազդանշին» տրեստի համապատասխան բաժիններից։

17 Նույն տեղում։

տեղով, 11 մասը-մանկապարտեզ 2146 տեղով և շատ ու շատ ուրիշ օբյեկտներ[18]։

Սոցիալիստական մրցության մեջ հաղթող ճանաչվելու համար տրեստի կոլեկտիվը մի քանի անգամ արժանացել է խրախուսանքների՝ 1970 թ. Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ տրեստը պարգևատրվել է ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԽ-ի և Համ-ԼԿԵՄ Կենտկոմի հոբելյանական հուշանշանով։ 1970 թ. ի պատիվ Հայաստանում սովետական կարգերի հաստատման և կոմունիստական կուսակցության ստեղծման 50-ամյակի արժանացել է ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրին և ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԽ-ի և ՀԼԿԵՄ Կենտկոմի հոբելյանական հուշամեդալին։ Մի քանի անգամ մրցանակային տեղեր են շահել շինարարական վարչությունների կոլեկտիվները։

1970-ական թվականներին «Հրազդանշին» տրեստում աշխատողների թիվը կազմում էր շուրջ 1750 մարդ, շինմոնտաժային աշխատանքների պլանը գլխավոր կապալառուի գծով կազմեց 16,8 միլիոն ռուբլի։ Շահագործման հանձնվեց 22228 քառ. մետր բնակ. տարածություն՝ «Հրազդանմաշի» համար, 1176 տեղանոց մեկ դպրոց[19], Հրազդանի պիոներ պալատը, սառցակոմբինատը, էներգետիկների պալատը և այլ օբյեկտներ։

«Հրազդանշին» տրեստի կոլեկտիվը, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1966 թ. օգոստոսի 16-ի հրամանագրով Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեց, իսկ «Հրազդանշին» տրեստի բուլդոզերավար Երեմ Ասատրյանը, ներկարարների բրիգադավար Մկրտիչ Հովհաննիսյանը՝ «Պատվո նշան» շքանշանով։ Պարգևատրվեցին նաև ատաղձագործներ Ջորիկ Ջոհրաբյանը, Մնացական Մկրտչյանը, բանվոր Մերուժ Խումարյանը, բանվորուհիներ Օսան Միլիտոնյանը, Ջերավարդ Պետրոսյանը, Արևհատ

---

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում։

Սարգսյանը, մոնտաժողների բրիգադավար Լենդրոշ Սաղաթելյանը և ուրիշներ։

Շինարարության տարիներին աճեցին նաև լավագույն կադրեր։ Նրանցից 3-րդ շինվարչության կոմպլեքսային բրիգադի բրիգադավար, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Մկրտիչ Հովհաննիսյանը 1970 թ. պլանները գերակատարելու, տնտեսաշվարկային սիստեմով աշխատելու համար արժանացավ համամիութենական պարգևի։ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, հմուտ բետոնագործ Աղավնի Ներսիսյանն իր աշխատանքի համար պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Փորձված հմուտ շինարար Բաբկեն Հայրապետյանը, որը մասնակցել էր Սևան-Հրազդան կասկադի գրեթե բոլոր կայարանների կառուցման աշխատանքներին, իր բրիգադի հետ նշանակվելով ամենադժվարին և պատասխանատու տեղամասերում, պատվով կատարեց հանձնարարված առաջադրանքները։

Տրեստում աշխատանքների օպտիմալ կազմակերպումով ստեղծվեց շինարարական արտադրական ամուր բազա և բոլոր տեղամասերում աճեցին որակյալ կադրեր։ Տրեստի կարիքների համար կազմակերպվեցին արհեստանոցներ (մեխանիկական սղոցարան, փայտամշակման), կոմպլեքս և հատուկ գործարաններ (երկաթբետոնե կոնստրուկցիաների, ասֆալտաբետոնային)։

Մեքենայական պարկը համալրվեց բարդ ու հզոր մեքենաներով՝ բուլդոզերներից, էքսկավատորներից և երեք տոննանոց ինքնագնաց ամբարձիչներից մինչև 100 տոննանոց հսկա ամբարձիչները։

1966 թ. Հրազդանի երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարանը առանձնացել էր «Հրազդանշին» տրեստի արտադրական իրերի կոմբինատից։ Կոլեկտիվը համալրվեց նոր կադրերով։ Գործարանի կոլեկտիվը երկաթբետոնե կոնստրուկցիաներ է մատակարարում «Հրազդանշին», «Արովյանշին», «Սևանշին» տրեստներին։

1980 թ. «Հրազդանշին» տրեստի կազմի մեջ են մտնում № 55, 56, 57, 58 շինարարական վարչությունները, արտադ-

բական իրերի կոմբինատը, մեխանիզացիայի պարկը, ավտոտնտեսությունը և նյութատեխնիկական մատակարարման գրասենյակը։

Ձեռք բերած ցուցանիշների համար «Հրազդանշին» տրեստի յոթ աշխատողներ արժանացել են կառավարական բարձր պարգևների, իսկ Մկրտիչ Հովհաննիսյանը՝ ՀՍՍՀ պետական մրցանակի։ Տրեստի 171 աշխատողներ պարգևատրվել են 10-րդ հնգամյակի հարվածայինի կրծքանշանով և դրամական պարգևով։ Մկրտիչ Հովհաննիսյանի բրիգադը որպես լավագույնը պարգևատրվել է ՍՍՀՄ արդյունաբերական շինարարության մինիստրության դիպլոմով։ 1980 թ. № 56 շինվարչությունը պարգևատրվեց ՀՍՍՀ արդյունաբերական շինարարության մինիստրության փոխանցիկ դրոշով։

Հրազդանում գործել են երկու ճանապարհաշինարարական կազմակերպություն՝ ճանապարհների շահագործման և շինարարության գրասենյակը և ճանապարհաշինարարական վարչությունը։

Այս երկու կազմակերպություններն իրենց տրամադրության տակ ունեն նյութատեխնիկական լայն բազա՝ ասֆալտի պատրաստման երկու գործարան, քարշարդիչ երեք կայան, մեխանիկական արհեստանոցներ, ավտոմեքենաներ և ճանապարհաշինարարական բազմաթիվ սարքեր։

11-րդ հնգամյակի առաջին տարում Հրազդանում գործող ճանապարհաշինական այս կազմակերպությունները միացվեցին և դրանց բազայի վրա կազմակերպվեց ճանապարհների շինարարության և շահագործման վարչությունը։

* * *

Հրազդան քաղաքի նոր հատակագծի մշակումը ուներ իր դրդապատճառները։ Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի շինարարությունը դադարեցված էր։ Նրա փոխարեն ստեղծվելու էր խոշոր մեքենաշինական գործարան։ Անհրաժեշտ էր ցեմենտի գործարանը հանել քաղաքից։ Կառուցվում էր Հրազդան-Իջևան երկաթուղին, որով քաղաքը դառնալու էր

կարևոր երկաթուղային հանգույց։ Նախկին կավաշեն, գետնափոր տների փոխարեն գյուղերում կառուցվեցին 1—2 հարկանի լուսավոր, քարակերտ գեղեցիկ տներ իրենց կոմունալ հարմարություններով, տնամերձ հողամասերով և պտղատու այգիներով։ Ավելացավ մեկ շնչին ընկնող բնակելի մակերեսը, բնակելի շենքերի հարկայնությունը հասել էր 9-ի և ավելի։ Այս բոլորը ի նկատի ունենալով, հանրապետության կառավարությունը 1979 թ. հանձնարարեց «Հայարդնախագիծ» ինստիտուտին կազմելու Հրազդան քաղաքի նոր գլխավոր հատակագիծը մինչև 2000 թվականի հեռանկարով։

Քաղաքի նոր գլխավոր հատակագիծը կազմել է տարբեր մասնագիտությունների տեր մարդկանցից կազմված կոլեկտիվը։ Այդ կոլեկտիվի անդամներն են՝ Սոս Մանուկյանը (Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետ, նախագծի գլխավոր ճարտարապետ), Վիլեն Տոնիկյանը (Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետ, նախագծի գլխավոր ճարտարապետ), Թելուրա Բալայանը (գլխավոր ճարտարապետ), Էդուարդ Ալիխանյանը (գլխավոր ճարտարապետ), Էդուարդ Հարությունյանը (Հրազդան քաղաքի գլխավոր ճարտարապետ), Էլենա Հախվերդյանը (գլխավոր տնտեսագետ), Ժիրայր Խորեմյանը (տրանսպորտի գծով գլխավոր մասնագետ), Գուրգեն Պողոսյանը (գլխավոր մասնագետ), Իյա Ռուբցկան (ջերմամատակարարման գծով գլխավոր մասնագետ), Սեդա Սիրամարգյանը (կոյուղու և ջրամատակարարման գծով գլխավոր մասնագետ), Նինա Հունանյանը (էլեկտրամատակարարման խմբավար)[20]։

Այդ նոր հատակագծով արդյունաբերական օբյեկտների և բնակարանային շինարարությանը զուգընթաց մեծ թափ կտրվի նաև կենցաղային, առողջարանային, մարզական օբյեկտների շինարարությանը։ Այդ հատակագծով 2000 թ. Հրազդան քաղաքի բնակչությունը հասնելու է 135 հազարի,

---

[20] Տվյալները վերցված են «Հայարդնախագիծ» ինստիտուտի համապատասխան բաժնից։

իսկ բնակելի ֆոնդը մոտ 2,5 միլիոնի՝ մեկ շնչին 18 քառակուսի[21] մետր օգտակար բնակելի մակերեսով։

* * *

Սովետական կառավարությունը մեծ ուշադրություն է նվիրում առևտրի և հասարակական սննդի օբյեկտների ընդլայնմանը։ Պարբերաբար ավելանում է պետական և կոոպերատիվ առևտրի մանրածախ ապրանքների շրջանառությունը։ Տարեցտարի բարելավվում են հրազդանցիների կուլտուր-կենցաղային և նյութական պայմանները։ Վերջին տարիներին աշխատանքներ են կատարվել առևտրի և հասարակական սննդի ընդլայնման ուղղությամբ։

1980 թ. ապրանքաշրջանառության պլանը կատարվել է շուրջ 20 միլիոն ռուբլու, որից քաղաքի դծով 13 միլիոն ռուբլի։

Հրազդանում քաղաքի դծով 1980 թ. գործել են 42 խանութ՝ 24 պարենային, 16 արդյունաբերական և 2 հանրախանութ։ 1980 թ. գործել են 45 սննդի օբյեկտներ, որոնցից՝ մեկ ռեստորան, 24 ճաշարան, 4 սրճարան, 9 բուֆետ և այլն։

* * *

Հրազդանում մինչև 1963 թ. կեսերը գործել է շրջանային կապի գրասենյակը, իսկ 1963 թ. աշնանից այն դարձել է Հրազդանի շրջանային կապի հանգույց, որն սպասարկում է քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններին, շրջանի գյուղերին, քաղաքներին ու սովետական տնտեսություններին։

Մինչև 1950 թ. Հրազդանում գործել է 120 համարանոց հեռախոսային մի կոմուտատոր։ 1958 թ. կառուցվել է 600 համարանոց ավտոմատ հեռախոսակայանը, որ 1970 թ. դարձավ 1500 համարանոց։ Հրազդան քաղաքն ուներ 1500 համարի կարողությամբ ավտոմատ հեռախոսակայան, որից

---

21 Նույն տեղում։

1350-ը տեղադրված են բնակարաններում։ Բացի այդ 1000 համարի կարողությամբ ավտոմատ հեռախոսակայան ունի միկրոշրջանը։ Հրազդանի կապի հանգույցը անմիջական հեռագրական կապ ունի ինչպես Երևանի, այնպես էլ Մոսկվայի, Լենինգրադի, Բաքվի, Թբիլիսիի, Կիևի, Ռոստովի և այլ քաղաքների հետ։ Իսկ ուղղակի միացման սիստեմով Հրազդանը կապ ունի մեր հանրապետության բոլոր քաղաքների ու շրջկենտրոնների հետ։

1982 թ. շահագործման հանձնվեց Հրազդանի կապի հանգույցի տիպային շենքը, որը հագեցված է փոստ-հեռագրական արդիական միջոցներով։ Քառահարկ շենքում տեղադրված են փոստային տարբեր ծառայությունները և 9 հազար համարով ավտոմատ հեռախոսակայանը։

Հրազդանի կապի հանգույցի աշխատողների կոլեկտիվը կատարելով և գերակատարելով 10-րդ հնգամյակի պլանները, 1982 թ. արտադրանքի ծավալը հասցրին 660 հազար ռուբլու, իսկ տարիֆային եկամուտները 1, 125 հազար ռուբլու[22]։

* * *

Բնակչության կենցաղային սպասարկումը մինչև 1937 թ. կատարել է շրջանային տեղարդկոմբինատը, որն իր կազմում ունեցել է կարի, կոշիկի մի քանի արհեստանոցներ։ 1958 թ. կենցաղսպասարկման ցանցը միացավ կոմունալ սպասարկման գրասենյակին և կոչվեց տեղական տնտեսության գրասենյակ։ 1960 թ. ապրիլից գործում է Հրազդանի կենցաղսպասարկման կոմբինատը, որը հետագայում կոչվեց բնակչության կենցաղսպասարկման Հրազդանի շրջանային արտադրական վարչություն։ Այն իր կազմում 1980 թ. ուներ կարի անհատական պատվերների 6, կոշիկի անհատական պատվերների 2 և կահույքի անհատական պատվերների մեկ արհեստանոցներ, 5 ֆոտոտաղավար, 9 վարսավիրանոց, կոշի-

---

22 Տվյալները վերցված են Հայկական ՍՍՀ կապի մինիստրության պլանֆինբաժնից։

կի, ժամացույցի, սառնարանների վերանորոգման և այլ արհեստանոցներ։ Վերջին տարիներին Հրազդանում շահագործման է հանձնվել երկու կենցաղի տուն։ Հրազդան քաղաքում 1980 թ. կատարվել է 923 հազար ռուբլու կենցաղային սպասարկման ծառայության աշխատանք։ Հրազդանցիներն այժմ լայն հնարավորություններ ունեն օգտվելու հագուստների քիմիական մաքրման, սպիտակեղենի լվացման և սպասարկման մյուս ծառայություններից։

* * *

1965 թ. հունվարին Հրազդանն իբրև հանրապետական ենթակայության քաղաք, ընտրեց ժողովրդական դեպուտատների քաղաքային սովետի գործադիր կոմիտե։ Հրազդանի քաղաքային սովետի գործկոմը զգալի հաջողության է հասել քաղաքի կառուցապատման, քաղաքային տնտեսության զարգացման, աշխատավորների բարեկեցության բարելավման, կուլտուր-կենցաղային սպասարկման մակարդակի բարձրացման գործում։

Քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահության նիստերում պարբերաբար քննության են առնում բնակարանային շինարարության, քաղաքի բարեկարգման, կանաչապատման, կոմունալ տնտեսության, բնակչության կենցաղային սպասարկման, առողջապահական, կոմունալ, կուլտուր-կենցաղային սպասարկման և այլ հարցեր։

Քաղաքի ինդուստրացման, քաղաքաշինության, բնակչության բարեկեցության հարցերը միշտ եղել են ժողովրդական դեպուտատների Հրազդանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի ուշադրության կենտրոնում։ Բնակավայրերի բարեկարգման համար հանրապետության քաղաքների ու շրջանների միջև ծավալված սոցիալիստական մրցության արդյունքներով, Հրազդան քաղաքը մի քանի անգամ շահել է ՀԿԿ Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԽ-ի և ՀԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշը։

ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը Հրազդանում ունեցած իր ելույթներից մեկում հարց բարձ-

բացրեց Հրազդանը դեղեցիկ, օրինակելի կենցաղի ու կուլտուրայի քաղաք դարձնելու մասին։ Այդ ցուցումը իրականացնելու նպատակով Հրազդանի շրջանային կուսակցական կազմակերպության ղեկավարությամբ ծավալվել է սոցիալիստական մրցություն, որը ոչ միայն խթանում է Հրազդանը օրինակելի կենցաղի ու կուլտուրայի քաղաք դարձնելու ուղղությամբ տարվող աշխատանքները, այլև միաժամանակ նպաստում է աշխատավորությանը կոլեկտիվիզմի, ժողովուրդների լենինյան բարեկամության, ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու գործին։

ԳԼՈՒԽ ՉՈՐՍԵՐՈՐԴ

ՀՐԱԶԴԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹՆ ՈՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1945—1980)

Լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ պատմական կարճ ժամանակամիջոցում Սովետական Հայաստանը խոշոր թռիչք կատարեց ժողովրդական տնտեսության և մշակույթի զարգացման բնագավառներում, դարձավ զարգացած արդյունաբերության, գյուղատնտեսության, բարձր մշակույթի և առաջավոր գիտության հանրապետություն։

Սովետական իշխանության տարիներին երկրում վերացվեց անգրագիտությունը, իրականացվեց պարտադիր յոթնամյա, իսկ ապա՝ հանրակրթական միջնակարգ կրթությունը։ Անցումը ընդհանուր պարտադիր միջնակարգ կրթության սովետական ժողովրդի, սոցիալիստական հասարակարգի ակնառու նվաճումն է։

Ժողովրդական կրթության, մշակույթի և առողջապահության բնագավառներում մեծ նվաճումներ ձեռք բերեց նաև Հրազդան քաղաքը։ Այստեղ բացվեցին մասսայական և մասնագիտական դպրոցներ, տեխնիկումներ, կինոթատրոններ, մշակույթի տներ, պալատներ, ստեղծվեց առողջապահական հիմնարկների լայն ցանց։ Հրազդանում աշխատող ուսուցիչները, բժիշկները, գյուղատնտեսները, տարբեր մասնագիտության տեր ինժեներատեխնիկական աշխատողներն իրենց աշխատանքային և հասարակական գործունեությամբ ակտիվ մասնակցություն են բերում քաղաքի արդյունաբերության

զարգացման, քաղաքի կառուցապատման և կուլտուրական շինարարության գործին։

Ժողովրդական կրթության գործը Հրազդանում խոշոր վերելք ապրեց հատկապես նախապատերազմյան տարիներին։

Դպրոցական ցանցը Հրազդանում և նրանցում աշխատողների քանակը

	1960—1961	1970—1971	1975—1976	1981—1982
1	2	3	4	5
1 Դպրոցների քանակը	8	11	12	12
յոթնամյա, ութնամյա, միջնակարգ	4/4	5/6	2/10	11/1
2 Սովորողների քանակը	2714	6915	7967	8307
3 Ուսուցիչների քանակը	144	357	507	555
4 Մանկապարտեզների և մրցարանների քանակը	2	6	12	13
ա) երեխաների քանակը	70	670	2500	3136
բ) մանկավարժական անձնակազմը	4	30	112	171
5 Երեկոյան դպրոցների քանակը	1	3	3	3
ա) Սովորողների քանակը	94	385	550	372
6 Արտադրական հիմնարկները	1	3	3	3
ա) Ընդգրկված երեխաների քանակը	60	220	600	1769[1]

Հրազդանի ուսուցչական կոլեկտիվներում իրենց բարեխիղճ ու բեղմնավոր աշխատանքով աչքի են ընկնում № 1 դպրոցից Ա. Բարայանը, Ռ. Առաքելյանը, № 3 դպրոցից՝ Ռ. Միրզոյանը, № 4 դպրոցից՝ Ս. Բաղդասարյանը, № 6 դպրոցից՝ Վ. Նիկոյանը, Հ. Հարությունյանը, № 11 դպրոցից՝ Օ. Խաչատրյանը, № 12 դպրոցից՝ Ս. Մարտիրոսյանը, Հ. Ալեքսանյանը, Զ. Հարոյանը և շատ ուրիշներ։

Վերջին տարիներին հսկայական աշխատանք է կատարվել դպրոցների և նախադպրոցական հիմնարկների ուսումնանյութական բազան հարստացնելու ուղղությամբ։ Եթե 1960—1961

[1] Տվյալները վերցված են Հրազդանի քաղսովետի ժողկրթբաժնից։

ուսումնական տարում քաղաքի 8 դպրոցներից չորսն ունեին տիպային շենքեր 1470 աշակերտական տեղերով, ապա 1981—1982 ուսումնական տարում քաղաքի բոլոր դպրոցներն ապահովված են տիպային շենքերով (7000 աշակերտական տեղով)։

Նախադպրոցական հիմնարկները ևս ապահովված են տիպային շենքերով (3230 տեղով), ունեն բոլոր հարմարությունները։

Եռապատերազմյան տարիներին հանրապետության մի շարք քաղաքներում կազմակերպվեցին երաժշտական դպրոցներ։ Հրազդանի քաղաքային սովետի կուլտուրայի բաժնի ենթակայության մանկական երաժշտական դպրոցը կազմակերպվել է 1957—1958 ուսումնական տարում, դաշնամուրային, լարային և ակորդեոնի բաժիններով։ 1974—1975 ուսումնական տարում դպրոցի 3 բաժիններում և միկրոշրջանի երկու դասարաններում սովորում էին շուրջ 300 երեխաներ։ Միկրոշրջանի դպրոցը 1975—1976 ուսումնական տարվանից դարձավ ինքնուրույն երաժշտական № 2 դպրոց՝ 150 աշակերտով։

1975 թ. Հրազդանում բացվեց գեղարվեստի մանկական դպրոցը։ Դպրոցի 5 խմբերում ընդունվեցին նկարչական ընդունակություններ ունեցող 55 երեխաներ։ Դպրոցն ունի քանդակագործության և հաստոցային գունանկարչության բաժիններ, իսկ նոր շենքը շահագործման հանձնվելուց հետո դպրոցում բացվել է նաև կիրառական արվեստի բաժին։ Հրազդանի գեղարվեստի դպրոցը ապագայում կդառնա արվեստի կարևոր օջախ՝ քաղաքի մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության համար։

* * *

Հանրապետության և Հրազդանի արդյունաբերական օբյեկտներում աշխատելու համար միջին որակի մասնագետներ պատրաստելու նպատակով, 1966—1967 ուսումնական տարում Հրազդանում բացվեց բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության ենթակայության ինդուստրիալ տեխնոլոգիական տեխնիկումը ցերեկային և երեկոյան բաժիններով։ Այն պատրաստում է արդյունաբերական և քա-

դաքային շինարարության, արդյունաբերական ձեռնարկությունների ջերմատեխնիկական սարքավորումների, կապակցող նյութերի տեխնոլոգիայի, կաթսաների տեղակայման, հաշվապահական, ռադիոսարքավորման միջին որակի մասնագետներ։

1963 թ. Հրազդանի շինտրեստի և լեռնաքիմիական կոմբինատի բազայի վրա կազմակերպվեց Հրազդանի № 29 պրոֆտեխնիկական ուսումնարանը, 1964—1968 թթ. կառուցվեց պրոֆտեխնիկական ուսումնարանի նոր տիպային համալիրը 400 սովորողի համար։ Եթե 1963 թ. և հետագա 5 տարիներին ամեն տարի ուսումնարան են ընդունվել և ավարտվել 150—170 հոգի, ապա 1974—1975 ուսումնական տարում ընդունվել և ավարտել են 270, իսկ 1977—1978 ուսումնական տարում՝ 330 հոգի[2]։

Բացի դրանից, ուսումնարանը վերջին 4—5 տարիներին պատրաստել է տարեկան 60—70 ավտովարորդներ։ Մի խոսքով, ուսումնարանն իր գոյության տարիներին պատրաստել է 9 մասնագիտությամբ 26 հազար որակյալ բանվորական կադրեր, որոնց մի մասը աշխատում են Հրազդանի արդյունաբերական ձեռնարկություններում և գյուղատնտեսության մեջ։ 1971—1972 ուսումնական տարվանից ուսումնարանում գործում են նաև միջնակարգ կրթությամբ խմբեր։

Այն ունի 11 արհեստանոց, 19 կաբինետ-լաբորատորիաներ, որոնցից 6-ը էկրանացված են։ Ուսումնարանն ապահովված է բարձրագույն կրթություն ունեցող ուսուցչական կադրերով, միջնակարգ մասնագիտական ու բարձրագույն կրթություն ունեցող վարպետներով և ապահովված է 3 հարկանի ուսումնական մասնաշենքով։

* * *

Սովետական իշխանության տարիներին խոշոր հաջողություններ են հասել Հրազդանի առողջապահության բնագավառի աշխատողները։ Նախասովետական տարիներին Հրազդա-

---

[2] Տվյալները վերցված են Հրազդանի պրոֆտեխնիկական ուսումնարանի ընթացիկ արխիվից։

նում 10 մահճակալանոց հիվանդանոցում աշխատում էր մեկ բժիշկ։ Գյուղացիների մեծ մասը դիմում էր հեքիմների, գյուղում տարածված էին տարափոխիկ հիվանդությունները՝ խոլերան, ժանտախտը, ծաղիկը, տիֆը, տրախոման, որոնք մեծ թվով զոհեր էին բերում բնակչությանը։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, Հրազդանում մեծ ուշադրություն դարձվեց բնակչության բուժսպասարկման գործի կազմակերպման վրա։ 1930-ական թթ. Հրազդանում բացվեցին մի շարք բժշկական հիմնարկներ։ 1938 թ. բացվեց հիվանդանոցը, որը 1959 թ. ընդարձակվեց, դարձավ 100 մահճակալանոց[3]։ Հրազդանի բուժմիավորման կոլեկտիվի աշխատանքների շնորհիվ շրջանում վերացան մի շարք վարակիչ հիվանդություններ, իսկ մի շարք հիվանդություններ հասան մինիմումի։

Հրազդանում 1978 թ. գործում էին մեկ հիվանդանոց և երեք պոլիկլինիկա, ծննդատուն, արյան փոխներարկման և շտապ օգնության կայան, մանկական կոնսուլտացիա, կաթնախոհանոց, սանէպիդկայան։ Բոլոր գյուղերում կազմակերպված էին բուժ-մանկաբարձական կետեր, առողջապահական կայաններ։

1980 թ. վերոհիշյալ առողջապահական օբյեկտներում աշխատել են 108 բժիշկներ, 300 միջին որակի բուժաշխատողներ[4]։ Այդ տարիներին ոչ միայն աճել են բնակչության բուժսպասարկման համար հատկացվող դումարները, որոնք 1980 թ. հասել էին 1,5 միլիոն ռուբլու[5], այլև բարձրացել է բուժսպասարկման կուլտուրան։

9-րդ հնգամյակի տարիներին Հրազդանում կառուցվել ու շահագործման են հանձնվել 230 մահճակալանոց հիվանդանոցի նոր շենք և 500 հաճախում ունեցող պոլիկլինիկա, վերակառուցվել է հին հիվանդանոցը, ստեղծվել է 100 մահճակա-

---

3 Տե՛ս Հրազդանի բուժմիավորման ընթացիկ արխիվը։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում։

լանոց ծննդատուն[6], կազմակերպվել է ատամնաբուժական պոլիկլինիկա։ Միկրոշրջանի Ջրառատ, Աթաբեկյան և Կաբալաձոր թաղամասերի բնակչության սպասարկումը բարելավելու համար քաղաքի հյուսիսային թաղամասում նույնպես կառուցվեց պոլիկլինիկա։

Տարեցտարի փոխվում է Հրազդանի բուժհիմնարկների դեմքը։ Ներկայումս բնակչության բուժսպասարկումը իրականացվում է նորագույն բուժտեխնիկայով հագեցված հիվանդանոցի (250 մահճակալանոց), ծննդատան (100 մահճակալանոց), երկու պոլիկլինիկաների (500 և 300 հոգու հաճախման համար), ատամնաբուժական պոլիկլինիկայի և օնկոլոգիական դիսպանսերի 35 մահճակալով, արյան փոխներարկման և սանէպիդկայանի միջոցով։ Հրազդանի պոլիկլինիկան ապահովված է գրեթե բոլոր նեղ մասնագիտական բուժական կաբինետներով և համապատասխան սարքավորումներով, որոնք այսօր անհրաժեշտ են բնակչությանը լիարժեք բուժօգնություն ցույց տալու համար։

Հրազդանի բուժցանցում նվիրված աշխատանք են կատարում թերապևտ բժշկուհիներ Մանիկ Բեղլարյանը, Աթալա Բաղդասարյանը, բժիշկ Գրիշա Նազարեթյանը, Կարմեն Շահազիզյանը և ուրիշներ։ Հրազդանում են իրենց մկրտությունն ստացել այնպիսի մասնագետներ, որոնք հետագա տարիներին առողջապահության բնագավառում բեղմնավոր աշխատանք են կատարել։ Առողջապահության բնագավառի վաստակաշատ աշխատողներ են՝ Հայկական ՍՍՀ առողջապահության մինիստրության գլխավոր մասնագետ, ուռուցքաբան, դոկտոր-պրոֆեսոր Կարապետ Բաղիկյանը (նա միաժամանակ հանրապետական ուռուցքաբանական դիսպանսերի գլխավոր բժիշկն է), Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական աշխատող, դոկտոր պրոֆեսոր Նիկոլայ Ջավադյանը, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, առողջապահության հատուկ պոլիկլինիկայի բժիշկ Շավարշ Ավագյանը, ինչպես նաև բժիշկներ Մուշեղ-Մելիք Քարամյանը, Ամալյա Գալստյանը և ուրիշներ։

---

6 Նույն տեղում։

1959—1970 թթ. Հրազդանում էր գործում աշխատանքի հիգիենայի և պրոֆեսիոնալ հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտը։ Ինստիտուտի խնդիրն է լուծել բժշկական բնագավառում կարևոր նշանակություն ունեցող տեսական հարցեր, միաժամանակ նպաստել քիմիական և լեռնահանքային արդյունաբերության բանվորների աշխատանքային պայմանների բարելավմանը, կազմակերպել նրանց մոտ պրոֆեսիոնալ հիվանդությունների վաղաժամ հայտնաբերման, կանխման և բուժման գործը։ Առաջին տարիներին ինստիտուտի կոլեկտիվը բաղկացած էր 35—40 հոգուց, որից միայն 6-ը ունեին գիտական կոչում։ Անցան տարիներ, ինստիտուտը կազմակերպչորեն ամրացավ, կադրերն աճեցին, ձեռք բերվեց տեխնիկական հարուստ բազա։

Ինստիտուտի գիտական կոլեկտիվը ուսումնասիրություններ է կատարում մարդու օրգանիզմի վրա ունեցած աշխատանքի վնասակարությունը բացահայտելու և չեզոքացնելու ուղղությամբ։ Ինստիտուտն ունի պրոֆեսիոնալ հիվանդությունների և աշխատանքի հիգիենայի սեկտոր, իսկ վերջինս՝ արդյունաբերության մեջ հիգիենիկ հետազոտությունների, աշխատանքի ֆիզիոլոգիայի, աշխատանքային սանիտարական, քիմիայի, ռադիացիոն հիվանդությունների և այլ բաժիններ։

Այս ինստիտուտը 1970 թ. վերակառուցվեց ընդհանուր հիգիենայի և պրոֆեսիոնալ հիվանդությունների ինստիտուտի և Հրազդանից տեղափոխվեց Երևան։

* * *

Վերջին տասնամյակում Հրազդան քաղաքում լուրջ աշխատանքներ են տարվում ֆիզկուլտուրան և սպորտը մասսայականացնելու ուղղությամբ։ Ներկայումս քաղաքի սպորտային տարբեր կոլեկտիվներում ընդգրկված են ավելի քան 5000 մարդ, որոնցից 3000-ը «ՊԱՊ»-ի կրծքանշանակիրներ են։ 1974—1977 թթ. ընթացքում քաղաքում պատրաստվել են 5 սպորտի վարպետ, 8 վարպետության թեկնածուներ և 31

առաջին կարգային մարզիկներ։ Սկսած 1971 թ. Հրազդան քաղաքի լեռնադահուկորդների թիմը անընդմեջ նվաճում է հանրապետության չեմպիոնի կոչումը։

* * *

Հրազդան քաղաքում գործում են բազմաթիվ կուլտուր-լուսավորական հիմնարկներ, այդ թվում 2 կուլտուրայի տուն, 6 ակումբ[7], 2 երաժշտական և մեկ կերպարվեստի դպրոցներ։ 1980 թ. գործող տասից ավելի գրադարաններ կենտրոնացվել են մեկ համակարգում և ենթարկվում են շրջսովետի կուլտուրայի բաժնին։

Միկրոշրջանում 1975 թ. բացվեցին երաժշտական և կերպարվեստի նոր դպրոցներ, որոնք կահավորվել են համապատասխան սարքավորումներով և գույքով։ Վերոհիշյալ օբյեկտներում կազմակերպվել են դրույցներ, զեկուցումներ տարբեր թեմաների շուրջ, գրքերի քննարկումներ, թեմատիկ ցուցահանդեսներ, հանդիպումներ աշխատանքի վետերանների և Հայրենական պատերազմի մասնակիցների հետ։ Կուլտուրայի տներին կից կազմակերպված են իրավաբանական, ժողովուրդների բարեկամության և արվեստի համալսարաններ՝ 700 ունկնդիրներով։

Երևանյան փողոցի վրա բարձրացող նորակառույց շենքի առաջին հարկում բացվել է Հայաստանի պետական պատկերասրահի մասնաճյուղը՝ Հրազդանի պետական պատկերասրահը։ Բացմանը ցուցադրված էին հայ կերպարվեստի ավագ, միջին և կրտսեր սերնդի ներկայացուցիչների ամենատարբեր գործերից շուրջ 150 նմուշ։ Հետագայում բացվել են սիյուռքահայ նկարիչ Հ. Ալհազյանի անհատական ցուցահանդեսը, Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 30-ամյակին նվիրված, Միքելանջելոյի աշխատանքների յուսանկարների, Հրազդանի ինքնուս նկարիչների ցուցահանդեսները։ Պատկերասրահը զգալի դեր է կատարում Հրազդանցի-

---

7 Տե՛ս Հրազդանի շրջսովետի կուլտուրայի բաժնի ընթացիկ արխիվը։

ների, հատկապես երիտասարդության գեղագիտական ճաշակի ձևավորման ու հարստացման գործում։

Հրազդանի աշխատավորության համար ելույթներ են ունեցել մեր և եղբայրական հանրապետությունների ստեղծագործական խմբերը։ Դրանց թվում Երևանի Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, Կ. Ստանիսլավսկու անվան թատրոնները, Հայկական ժողովրդական երգի-պարի խումբը, Հայկական ՍՍՀ ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի Արամ Մերանդուլյանի անվան ժողգործիքների անսամբլը և բազմաթիվ այլ խմբեր։

Հրազդանցիների առաջ ելույթներով հաճախակի հանդես է գալիս շրջանային կուլտուրայի տան թատերախումբը։ Հրազդանի կուլտուրայի տանը կից ինքնագործ թատերախումբը 1958 թ. սկսած բազմաթիվ ներկայացումներ է տվել ինչպես Հրազդանի, այնպես էլ հարևան շրջանների աշխատավորության համար։ 1962 թ. Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրությունը Հրազդանի շրջանային կուլտուրայի տան ինքնագործ խմբի բազայի վրա ստեղծեց ժողովրդական թատրոն։

1965 թ. սեպտեմբերին կոմերիտմիության անվան զբոսայգում կազմակերպվեց համաքաղաքային երգի տոն։ Այդ օրվանից երգի տոնը դարձավ լավ ավանդույթ Հրազդանցիների համար։ 1972 թ. հոկտեմբերի 8-ին կատարվեց Հրազդանի վերակառուցված կոմերիտմիության անվան զբոսայգու հանդիսավոր բացումը։ Զբոսայգու կենտրոնում Վ. Ի. Լենինի վեհաշուք արձանն է։ Զբոսայգում գործում են շախմատի տունը, կանաչ թատրոնը, սպորտ հրապարակները, ընթերցասրահը, գեղարվեստական ինքնագործ խմբերը և այլն։ Զբոսայգում անցկացվում են համաժողովրդական տոներ, կազմակերպվում են համերգներ, դասախոսություններ, գեղարվեստական խմբերի ելույթներ և այլն։

Հրազդանի և ապա շրջանի աշխատավորության շրջանում գեղարվեստական ինքնագործունեության և գեղագիտական դաստիարակության գործում լավ ավանդույթներ ունի Հրազդանի քաղաքային մշակույթի տունը, որը համարվում է շրջանի ակումբային հիմնարկների մեթոդական կենտ-

ռոնը։ Այստեղ ամեն տարի կազմակերպվում են բազմաթիվ ագիտբրիգադներ, որոնք ամռան ամիսներին մեկնում են կոլտնտեսային դաշտերը, ֆերմաները, յայլաղները հանրօգուտ աշխատանքով զբաղված աշխատավորության հանգիստը կազմակերպելու համար։ Մշակույթի տան աշխատողների ջանքերով մանկական գեղարվեստական խմբեր են ստեղծվել ինչպես քաղաքի, այնպես էլ շրջանի դպրոցներում, որոնք դարնանային արձակուրդներին մասնակցում են դպրոցական ավանդական փառատոներին։

Ձեռնարկություններում և դպրոցներում գործում են տիկնիկային թատրոնը, մանկական պարային, էստրադային, վոկալ անսամբլները և այլ խմբեր, որոնց աշխատանքներին տոն ու ուղղություն է տալիս քաղաքային սովետի կուլտուրայի բաժինը։

Քաղաքի և շրջանի աշխատավորության առաջ հաճախ են ելույթներ ունենում ինքնագործ տարբեր խմբեր։ Բջնիում՝ ժողգործիքների անսամբլը, Լենանիստում՝ փողային նվագախումբը, քաղաքի պիոներների պալատում՝ մանկական երգչախումբը, քաղաքային մշակույթի տանը՝ ժողգործիքների և էստրադային անսամբլները, տիկնիկային թատրոնը և այլն։

1932 թ. փետրվարի 13-ից սկսեց լույս տեսնել ՀԿԿ Հրազդանի շրջկոմի և Աշխատավորների դեպուտատների Հրազդանի շրջսովետի օրգան «Լենինյան դրոշով» հնգօրյա թերթը։ Թերթի առաջին համարում տպագրված է Համկ(բ)Կ Կենտկոմի «Կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամրացման հերթական խնդիրների մասին» որոշումը։ Տպագրված են նյութեր նվիրված գարնանացանի նախապատրաստմանը, գյուղգործիքների վերանորոգման վերաբերյալ Ն. Ախտայի կուսշրջկոմի ակտիվի բանաձևը, միջազգային լուրեր և այլն։

1965 թ. մայիսի 5-ից լույս տեսավ ՀԿԿ Հրազդանի շրջանային կոմիտեի և աշխատավորների դեպուտատների շրջանային ու քաղաքային սովետների օրգան «Հրազդան» թեր-

թը։ Այդ նոր կարևոր իրադարձություն էր Հրազդանի շրջանի և Հրազդան քաղաքի աշխատավորության համար։

Շրջանային թերթը համոզիչ ցույց է տալիս սովետական իշխանության տարիներին գյուղում տեղի ունեցած սոցիալական ու կուլտուրական հսկայական վերափոխումները, կոնկրետ լուսաբանում է տնտեսության հողագործության կուլտուրայի և անասնապահության մթերատվության բարձրացման ուղղությամբ տարվող մեծ աշխատանքը։ Թերթում պարբերաբար լուսաբանվում են հատկապես վերջին տարիներին Հրազդանի արդյունաբերական նորակառույցների շինարարական աշխատանքները, գործարանների պլանների կատարման ընթացքը։ «Հրազդան» թերթն իր էջերում լայնորեն պրոպագանդում է առաջավոր փորձը, քաջալերում հայրենասիրական նախաձեռնությունները, ոգևորում շրջանի աշխատավորությանը ժողովրդական տնտեսության զարգացման հընգամյակների պլանները ժամկետից շուտ կատարելու գործում։ «Հրազդան» թերթն իր էջերում լուսաբանում է նաև քաղաքում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքը։ Քաղաքի կառուցապատման հարցերին են նվիրված պարբերաբար տպագրվող «Դեղեցիկ ու բարեկարգ դարձնենք մեր Հրազդանը» խորագրով հոդվածները։

* * *

Հրազդանի կուսակցական կազմակերպությունները որոշակի աշխատանք կատարեցին կուսակցության շարքերի աճի ու ամրապնդման նպատակով։ Կուսակցական սկզբնական կազմակերպությունները աշխատավորության հետ կուսակցության կապի գլխավոր օղակներն են։ Այդ օղակները գործելով աշխատավորների շրջանում հանդես են գալիս իբրև կազմակերպիչներ, ապահովում են հնգամյակներում առաջադրված խնդիրների կատարումը։ Հրազդանի կուսակցական կազմակերպությունները զբաղվում են կադրերի ընտրության, տեղաբաշխման, նրանց դաստիարակության հարցերով։

Հրազդանում տարեցտարի աճում են կուսակցական կազմակերպություններն ու նրանց անդամները։ 1921 թ. սեպ-

տեմբերին կայացած շրջանի կուսակցական կազմակերպության սեղրանիկ համագումարում 60 կոմունիստներ էին, երիտասարդական միության համագումարում՝ 120 կոմերիտականներ։ Հրազդանի արդյունաբերական ձեռնարկություններում, տրանսպորտում, կապի ցանցում և սովխոզներում 1980 թ. գոյություն ուներ 65 կուսակցական կազմակերպություն 2594 կուսակցության անդամներով։

Շրջանային կուսակցական կոմիտեի պլենումներում, մասնավորապես, նրա բյուրոներում և ակտիվի նիստերում քննարկվել են արդյունաբերական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, սովխոզների, հիմնարկ-ձեռնարկությունների պլանների կատարման և զարգացման ու քաղաքաշինության հարցերը։

Հրազդանի կուսակցական կազմակերպությունները կուսակցական շրջանային կոմիտեի օգնությամբ ու ղեկավարությամբ մոբիլիզացնում են քաղաքի աշխատավորներին, կազմակերպում և գլխավորում են սոցիալիստական մրցությունը, ապահովում են կոմունիստների ավանգարդային դերը, իրագործում են ադմինիստրացիայի նկատմամբ վերահսկողության և ահաղանգման իրենց ֆունկցիան։ Բոլոր միջոցներով պայքարում են կուսակցական և պետական վերադաս օրգանների որոշումները իրագործելու համար։

Կոմունիստական շինարարության գործի հաջողությունը մեծապես կախված է կուսակցական կազմակերպությունների մարտունակությունից, նրանց կազմակերպչական ու քաղաքական աշխատանքի մակարդակից, յուրաքանչյուր կոմունիստի ստեղծագործական նախաձեռնությունից և ակտիվությունից։

Սկզբնական կուսակցական կազմակերպությունները, գործելով աշխատավորական կոլեկտիվներում, վճռական դեր են խաղում հանրային արտադրության բոլոր տեղամասերում, կուսակցության և կառավարության կողմից դրված խնդիրների իրականացման համար։ Հրազդան քաղաքի կուսակցական կազմակերպությունները ավելի խորությամբ են զբաղվում ձեռնարկությունների տնտեսական գործունեությամբ,

առավել բարձրացրել են կազմակերպական մասսայական աշխատանքի մակարդակը, ավելի գործիմաց կերպով են իրականացնում արտադրության կուսակցական ղեկավարումը։

Վերջին տարիներին կուսշրջկոմի աշխատանքի պրակտիկայում կիրառվում է Լենինգրադի, Վիլնյուսի, Մինսկի, Ռիգայի, Չելյաբինսկի և Գոմելի մարզերի կուսակցական կազմակերպությունների առաջավոր փորձը։

ՀԿԿ Հրազդանի շրջանային կոմիտեն առավել պահանջկոտություն է հանդես բերել սկզբնական կուսակցական կազմակերպությունների, սովխոզական մարմինների և տնտեսությունների ղեկավարների գործունեության նկատմամբ, օգնել է բարձրացնելու նրանց մարտունակությունը, հարստացնելու նրանց քաղաքական աշխատանքի բովանդակությունը, կատարելագործելու կուսակցական աշխատանքի ձևերն ու մեթոդները։

Շրջանում աշխատավորությանը հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակության ուղղությամբ որոշակի աշխատանքներ են տարվում։

Հրազդանում ապրում են երեք տասնյակից ավելի ազգերի և ազգությունների ներկայացուցիչներ։ Բարեկամության և եղբայրության տոնահանդեսների վերածվեցին Մոլդավիայի, Ուկրաինայի և Ռուսաստանի ֆեդերացիայի արվեստի ու գրականության տասնօրյակի մասնակիցների այցելությունները։ Հրազդանի գրեթե բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները, սովխոզները համալրվել են որակյալ, գործիմաց, կազմակերպական ընդունակություններով օժտված կադրերով։ Ընտրված կուսկազմակերպության քարտուղարները հիմնականում հանդիսանում են արտադրության առաջավորներ, կուսակցական աշխատանքի փորձ ունեցողներ։ Նրանց որակավորման համար ՀԿԿ Հրազդանի շրջկոմին կից ստեղծված են կուսակցական, տնտեսական, ինչպես նաև գյուղատնտեսական ակտիվի դպրոցներ, որտեղ ընդգրկված են տնտեսության ղեկավարներն ու գլխավոր մասնագետները։

Հրազդանի կուսշրջկոմում լայն կիրառում են գտել սկզբունական կուսակցական կազմակերպությունների քարտուղարների, կուսխմբերի կազմակերպիչների, արտադրության հրամանատարների հաշվետվությունների քննարկումները։ Դա մեծապես օգնում է շրջկոմին՝ համակողմանիորեն վերլուծելու կենդանի պրակտիկան, տեսնելու արտադրության նեղ տեղերը, ամրապնդելու կարգապահությունը, բարձրացնելու մարդկանց պատասխանատվությունը, կատարելագործելու կազմակերպչական աշխատանքի, տնտեսության կուսակցական և արտադրության կառավարման ձևերն ու մեթոդները։ Որքան ավելի լավ է կազմակերպվում ընդունված որոշումների կատարումը, այնքան ավելի արագ կերպով են վերացվում թերությունները, այնքան ավելի է բարձրանում տվյալ կուսակցական կազմակերպության մարտունակությունը։

Կուսակցական կազմակերպությունները անմիջական օգնություն են ցույց տալիս կոմերիտական կազմակերպություններին։ Հետևելով կուսակցական կազմակերպությունների տարիների ընթացքում ստեղծած ավանդույթներին Հրազդանի կոմերիտական կազմակերպությունը աշխատանքային հերոսական գործեր է կատարել։ Կոմերիտականները ուր էլ որ աշխատելիս լինեն, կոլտնտեսային թե սովխոզային դաշտերում, արդյունաբերական ձեռնարկություններում թե հիմնարկներում, շինարարության մեջ թե տրանսպորտում, ամենուրեք ցուցաբերել են աշխատանքային մեծ խանդավառություն, խիզախումների հրաշալի օրինակներ։

Հրազդանի կոմերիտական կազմակերպությունը կուսակցական շրջանային կոմիտեի օգնությամբ ու ղեկավարությամբ ակտիվ մասնակցություն է ունենում արդյունաբերական ձեռնարկությունների, սովխոզային դաշտերի արտադրական պլանների կատարման ուղղությամբ տարվող աշխատանքներին, միաժամանակ և քաղաքաշինությանը։ Կոմերիտական կազմակերպությունները երիտասարդության հետ միասին ակտիվ մասնակցում են քաղաքի ծառատնկման, փողոցների բարեկարգման, կանաչապատման, կոմունալ ցանցի ընդարձակման համար կազմակերպված շաբաթօրյակներին։

1980 թ. Հրազդանում կար 73 սկզբնական կոմերիտական կազմակերպություն 9500 կոմերիտականներով: Տարեցտարի աճում է Հրազդանի կոմերիտական կազմակերպությունների թիվը:

Ղեկավարվելով ՍՄԿԿ XXVII և ՀամԼԿԵՄ XIX համագումարների որոշումներով, կոմերիտմիության Հրազդանի շրջանային կոմիտեն իր առջև նպատակ է դրել շրջանի երիտասարդությանը դաստիարակել կուսակցության ու ժողովրդի հեղափոխական, մարտական և աշխատանքային ավանդույթներով, կոմունիստական ոգով, ընդ որում հաշվի առնելով երիտասարդության պահանջմունքները, նրա կրթության և մասնագիտական պատրաստության աճող մակարդակը: ՀԼԿԵՄ Հրազդանի շրջկոմը հետևողական աշխատանք է ծավալում երիտասարդության մեջ աշխատանքի և հանրային սեփականության նկատմամբ կոմունիստական վերաբերմունք մշակելու ուղղությամբ, միաժամանակ ապահովելով երիտասարդության քաղաքական, աշխատանքային և բարոյական դաստիարակության սերտ միասնությունը:

1979—1980 թթ. ուսումնական տարում գործել են կոմերիտական քաղաքական ուսուցման 16 քաղդպրոցներ, միջին օղակի 108 խմբեր և 20 տեսական սեմինարներ: Կոմերիտական ուսուցման ցանցում ընդգրկված են եղել ավելի քան 4 հազար կոմերիտականներ և երիտասարդներ, որոնցից 1600-ը կոմունիստական աշխատանքի հարվածայիններ էին:

Ժողովրդական դեպուտատների Հրազդանի շրջանային և քաղաքային սովետները որոշակի աշխատանք են տարել իրենց տերիտորիաներում քաղաքի կառուցապատման աշխատանքները պլանավորելու ուղղությամբ: Սովետներն իրենց բաժինների հետ մշակել են ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի զարգացման պլանները, մասնակցել են միավորումների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների զարգացման պլանների մշակմանը: Արտադրության զարգացման ու ինտենսիվացման պլանները մշակելիս առկա ռեզերվների բացահայտման և օգտագործման հարցերը լուծվում են աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգ-

տարածման, սպասարկումների որորսի զարգացման, բնակչության կենսապայմանների ու կենցաղի բարելավման հարցերի հետ սերտորեն շաղկապված։ «10-րդ հնգամյակի խնդիրների լուծման գիտական մոտեցման օրինակ է ծառայում կուսակցական կազմակերպությունների աշխատանքը տնտեսական ու սոցիալական զարգացման կոմպլեքսային պլաններ կազմելու ուղղությամբ։ Այդպիսի պլանների մշակման և գործնական իրականացման դրական փորձ ունեն Երևանի, Լենինականի, Կիրովականի, Հրազդանի շատ շրջանների և աշխատավորական կոլեկտիվների կուսակցական կազմակերպությունները»[8]։

Հրազդանում մեծ գործ է արվում արտադրական ցուցանիշների բարձրացման, աշխատանքի արդյունավետ կազմակերպման, երիտասարդությանը բանվոր դասակարգի լավագույն ավանդույթների ոգով դաստիարակելու, աշխատավորության սոցիալ-կուլտուրական պահանջմունքները բավարարելու ուղղությամբ։ Քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում սեփական տնտեսության գործերին ու հոգսերին և ամբողջ շրջանի տնտեսությանը ծանոթացնելու նպատակով շրջկոմի շենքում ձևավորվեց առանձին ցուցասրահ։ Այդ ցուցասրահում յուրաքանչյուր արտադրական միավորում, գործարան ունի իր ցուցափեղկը բազմատեսակ ցուցանիշներով, թողարկվող արտադրանքի նմուշներով։

Գյուղատնտեսական էկոնոմիկան ներկայացված է առանձին ճյուղերով, առանձին ցուցափեղկերում։

* * *

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության որոշումներով նախատեսված է ժողովրդական տնտեսության կառավարման մեթոդների կատարելագործման ասպարեզում հաշվիչ տեխնիկայի ու ինֆորմացիայի մշակ-

---

8 Կ. Ս. Դեմիրճյան, *Սովետական Հայաստան*, Երևան, 1980, էջ 112։

ման մաթեմատիկական մեթոդների կիրառման լայն ծրագիր։ Ըստ այդ ծրագրի մեր երկրում իրականացվում է կառավարման ավտոմատացված համակարգերի (ԿԱՀ) մշակման ու ներդրման վիթխարի մի պրոցես։ Անընդհատ աճող ինֆորմացիայի ծավալը, ձեռնարկությունների ու հիմնարկությունների կոլեկտիվների ղեկավարման հետ կապված կուսակցական կազմակերպությունների վճռած խնդիրների մասշտաբի ու բարդության միացումը ստիպողական պահանջ առաջացրեց էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ կիրառել նաև կուսակցական շրջանային կոմիտեների աշխատանքում։

1979 թ. Հրազդանի կուսշրջկոմին կից ստեղծվեց ինֆորմացիոն հաշվիչ կենտրոն, որի նպատակն էր էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգնությամբ ներդնել ժողովրդական տնտեսության կառավարման, ընդունվող որոշումների վերահսկման ու վերլուծման ավելի կատարելագործված մեթոդներ։

ԷՀՄ-ի հետ միացված է էկրանային սարք, որը հնարավորություն է ստեղծում կարճ ժամանակամիջոցում էկրանի վրա պատկերել շրջանի տնտեսությանը վերաբերող անհրաժեշտ ինֆորմացիան։

Մշակվում է շրջանի տնտեսություններից ինֆորմացիայի ավտոմատ հավաքման, մշակման ու հաղորդման համակարգը։ Այդ համակարգը հնարավորություն ունի համադրելու տնտեսությունների ու ամբողջ շրջանի գործունեության փաստացի ցուցանիշները ոչ միայն պլանային ու սպասվող ցուցանիշների, այլև անցյալում եղած նույնանման ցուցանիշների հետ։

Հետագայում նախատեսվում է մշակել կոմպլեքս ավտոմատացված համակարգ ողջ շրջանի կառավարման համար։ Այդ կոմպլեքս համակարգը հնարավորություն կտա մեկ ընդհանուր համակարգի մեջ համախմբել շրջանի գործունեության բոլոր ասպարեզներն ու կենտրոնացված եղանակով դրանք կառավարել։

«Հայտրդնախագիծ» ինստիտուտի տնտեսագիտական սեկտորը մշակել է Երևան-Սևան արդյունաբերական հանգույցի նախագիծը։ Այս հանգույցը ստեղծվել է Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարային 20-ամյա ծրագրի համաձայն, որը հիմնովին կերպարանափոխելու է նրանում ընդգրկված շրջանների տնտեսական կյանքը։ Այն դառնալու է Հանրապետության ինդուստրիալ գլխավոր կենտրոններից մեկը։

Երևան-Սևան արդյունաբերական հանգույցի մեջ են մտնում Աբովյանի, Հրազդանի, Սևանի շրջանները և Նաիրիի շրջանի մի մասը։ Վերջին հնգամյակներին Հանրապետությունում ծնունդ է առել և արագ կերպով զարգանում է ռադիոէլեկտրոնային գերճշգրիտ հաստոցաշինությունը, սարքաշինությունը, միկրոկենսաբանական արդյունաբերությունը։

Սևանի գոտու փոքր ու միջին քաղաքների զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ նոր երկաթուղային գծի (Երևան-Սևան), ավտոմոբիլային խճուղիների, հիդրոէլեկտրակայանների և ջերմաէլեկտրակայանների շինարարությունը և Հանրապետության գազիֆիկացումը։ Հրազդան քաղաքում կառուցվել է Անդրկովկասյան հսկան՝ ջերմաէլեկտրակենտրոնը, կառուցվում է նաև մեքենաշինական արտադրական միավորման խոշորագույն գործարանը։ Հրազդանը դառնալու է Հանրապետության գլխավոր արդյունաբերության կենտրոններից մեկը։

11-րդ հնգամյակի տարիներին Հրազդանում զգալի աշխատանքներ են տարվել և 12-րդ հնգամյակում կշարունակվեն տարվել արդյունաբերության մի շարք ձեռնարկությունների վերակառուցման և տեխնիկական վերազինման, դրանք ժամանակակից արտադրողական սարքերով հագեցնելու գործում, հատկապես աշխատատար պրոցեսների և ձեռքի ծանր աշխատանքի մեքենայացման և ավտոմատացման ուղղությամբ, որպեսզի բարձրանա աշխատանքի արտադրողականությունն ու արտադրանքի որակը։

Հրազդանն իր հատակագծային առանձնահատկություններով առանձնանում է մի շարք նոր կառուցվող քաղաքներից

նրանով, որ այն ընդարձակվում է Հրազդան գետի աջ և ձախ ափերին գտնվող Աղբյուրակ, Աթարբեկյան, Զրառատ և Կաքավաձոր գյուղերի տարածքի հաշվին։ Քաղաքի կենտրոնի կառուցապատումը հիմնականում սկսվել է 10-րդ հնգամյակում։

11-րդ հնգամյակի տարիներին շահագործման հանձնվեցին վարչական շենքն իր հրապարակով, սպորտդպրոցի և պիոներ-դպրոցականների պալատի շենքերը, իրենց ծածկած լողավազաններով և 520 տեղանոց դահլիճով։ Երկու բնակելի թաղամասեր արդեն կառուցապատվել են, որտեղ վեր են խոյացել 9 և 14 հարկանի բնակելի շենքեր։ Առաջիկա տարիներին Հրազդանում կառուցվելու են դպրոցական, առողջապահական, մշակութային և կենցաղսպասարկման, ինչպես նաև բնակելի շենքեր։

Բնակելի տարածությունը 12-րդ հնգամյակում կհասնի 2,5 միլիոն[9] քառակուսի մետրի։ Կընդարձակվի ջրի և կոյուղու փողոցային ցանցի երկարությունը և կանաչապատ տարածությունը։ Կանցնեն տարիներ, Հրազդանը կդառնա կոմունիստական բարեկարգ քաղաք և զգալի ներդրում կունենա Հանրապետության տնտեսության և սոցիալական կյանքի զարգացման մեջ։

---

9 Տե՛ս «Հայարդնախագիծ» ինստիտուտում Հրազդան քաղաքի հատակագիծը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտի կողմից 5
Նեռածություն 7
Գլուխ առաջին
Պայքար սովետական իշխանության հաղթանակի համար . 10
Գլուխ երկրորդ
Հրազդանը սոցիալիստական շինարարության տարիներին (1920—1940 թթ.) 23
Գլուխ երրորդ
Հրազդանցիները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941—1945 թթ.) 35
Գլուխ չորրորդ
Արդյունաբերական Հրազդանը 49
Գլուխ հինգերորդ
Հրազդանի սովխոզների վերելքը հետպատերազմյան տարիներին . 77
Գլուխ վեցերորդ
Հրազդան քաղաքի կառուցապատումը 98
Գլուխ յոթերորդ
Հրազդանի մշակույթը և առողջապահությունը հետպատերազմյան տարիներին (1945—1980 թթ.) 121

ԿՈՉՄՈ ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ԿՈՉՄՈՅԱՆ

ՀՐԱՉԴԱՆ

Հրատ. խմբագիր Է. Ս. Ավետյան
Նկարիչ Օ. Ս. Ասատրյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարությունյան
Սրբագրիչ Գ. Ս. Ստեփանյան

ԼԻԵ № 913

Հանձնված է շարվածքի 27. 03. 1986 թ.։ Ստորագրված է տպագրության 24. 10. 1986 թ.։ ՎՖ 06937։ Չափը 84×108 1/32։ Թուղթ № 2։ Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 7,45 մամ., տպագր. 8,63 + 3 ներդիր մամուլ։ Ներկ. մամուլ 7,45 Հրատ.-հաշվարկ. 5,75 մամուլ։ Տպաքանակ 1000։ Հրատ. № 6769։ Պատվեր № 337։ Գինը 75 կ.։
ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24 դ.։
ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 375019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24։

75 4.

4 U U 4 8 5

A II / 74517